ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյան

«Առևտրային հաշվեկշռի կարգավորման հիմնահարցերը (Հայաստանի Հանրապետության օրինակով)»

Ատենախոսություն

Ը.00.06 «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ

տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԹՈՐՈՍ ՇԱՀԵՆԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-2004

Բովանդակություն

Առաջաբան……...3

Գլուխ 1. Առևտրային հաշվեկշռի կարգավորման տեսական և մեթոդական հիմքերը

1.1 Միջազգային առևտրի վերաբերյալ տեսությունների համեմատական վերլուծությունը ……8

1.2 Արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունն առևտրային հաշվեկշռի վրա……..27

Գլուխ 2.ՀՀ առևտրային հաշվեկշիռը և դրա զարգացման դինամիկան 1993-2003թթ.

2.1 Արտաքին առևտրային քաղաքականության և առևտրային հաշվեկշռի փոխկապակցվածությունը……..39

2.2 Առևտրային հաշվեկշռի ապրանքային կառուցվածքը և դրա բարելավման հնարավորությունները……45

2.3 Առևտրային հաշվեկշռի տարածքային տեղաբաշխման կառուցվածքը և դրա ընդլայնման հնարավորությունները……..57

Գլուխ 3. ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման ուղիները և հեռանկարները

3.1 Արտաքին առևտրի զարգացման հիմնական ուղիները և առևտրային հաշվեկշռի կարգավորման հեռանկարները……..74

3.2 Օտարերկրյա ուղղակի ներդրումների դերն առևտրային հաշվեկշռի կարգավորման գործընթացում……...…104

Եզրակացություններ և առաջարկություններ……...113

Հավելված……120

Գրականության ցանկ……127

Առաջաբան

Ատենախոսության թեմայի արդիականությունը: ՀՀ բնութագրվելով որպես փոքր երկիր և ունենալով արտադրական արդյունքների սպառման համար ոչ բավարար տարողունակ ազգային շուկա, տնտեսական դինամիկ աճ ապահովելու նպատակով պետք է ուղիներ փնտրի դուրս գալու միջազգային շուկա՝ զարգացնելով իր արտաքին առևտուրը: Սակայն, դեռևս ՀՀ միջազգային առևտրի զարգացմանը զգալի խոչընդոտում է երկրի շրջափակված լինելը՝ արդյունքում բարձրանում են ապրանքների տրանսպորտային ծախսերն, որն էլ բացասաբար է անդրադառնում արտաքին առևտրի իրականացման և զարգացման գործընթացի վրա:

Ներկայիս պայմաններում նախ անհրաժեշտ է բացահայտել ՀՀ արտաքին առևտրի զարգացման ուղիները: Արտաքին առևտրի զարգացումը չպետք է դիտարկել որպես անկախ և ինքնաբերաբար ի հայտ եկող երևույթ, այլ այն պետք է կոորդինացվի և ուղղորդվի այնպես , որպեսզի խթանվի ՀՀ տնտեսական զարգացման ամբողջ գործընթացը:

Անկախացումից հետո Հայաստանը կորցրեց գրեթե իր բոլոր տնտեսական կապերը նախկին Խորհրդային Միության հանրապետությունների հետ: Այդ պատճառով ՀՀ տնտեսական համակարգը՝ հատկապես արդյունաբերության ոլորտը, գրեթե ամբողջովին քայքայվեց: Անհրաժեշտ էր ձևավորել առևտրատնտեսական նոր կապեր տարբեր երկրների հետ և իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ: Առևտրատնտեսական կապերը զարգացնելու նպատակով Հայաստանն ընտրեց ազատ առևտրային քաղաքականության ուղին: Սակայն, արդյունքում ներկայումս գրանցվել է առևտրային հաշվեկշռի բավական մեծ պակասուրդ: Անկախացումից հետո մինչև օրս ՀՀ ներմուծման ծավալը մի քանի անգամ գերազանցել է արտահանման ծավալին, ընդ որում, ի տարբերություն այլ երկրների, ՀՀ-ում առկա է համեմատական առումով արտահանման բավական փոքր և ներմուծման բավական մեծ ծավալներ: Ավելին, 1993-2000թթ. ներմուծման ծավալի աճի տեմպերը գերազանցել են արտահանման ծավալի աճի տեմպերին, որից հետո՝ 2000-2003թթ., արտահանման ծավալի աճի տեմպերը գերազանցել են ներմուծման ծավալի աճի տեմպերին, սակայն դա վերջնական արդյունքում բերել է առևտրային հաշվեկշռի պակասուրդի մեծացմանը: Դա հիմնականում պայմանավորվել է այն փաստով, որ 2002թ. ներմուծումը մոտ երկու անգամ գերազանցել է արտահանմանը:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է արդի դարաշրջանում՝ ՀՀ-ում առևտրի ազատականացման պայմաններում, ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման անհրաժեշտությամբ: Հայտնի է, որ առևտրային հաշվեկշռի կարգավորման դեպքում անհրաժեշտ է կրճատել ներմուծումը և խթանել արտահանումը: Հայաստանի դեպքում, ներմուծման ծավալի շարունակական ավելացումը նշանակում է տեղական պահանջարկի մեծացում, հետևաբար ներմուծման կրճատումը նպատակահարմար չէ, քանի որ դա կվնասի տեղական սպառողներին, իսկ արտահանումը խթանելու համար պահանջվում է զարգացած արդյունաբերական բազա: ՀՀ առևտրային հաշվեկշռի նման ոչ բարենպաստ վիճակը պայմանավորված է նաև տեղական արդյունաբերական բազայի թույլ զարգացվածությամբ: ՀՀ տնտեսության մեջ դեռևս առկա են այնպիսի հիմնախնդիրներ ինչպիսիք են՝ արտահանման ուղղվածություն ունեցող նոր ձեռնարկությունների ձևավորումը, ձեռնարկություններում «սովորելու» գործընթացի ապահովումը և ՕՈՒՆ-ի նպատակային ներգրավումն, որոնց լուծման համար պետությունը պետք է անմիջական մասնակցություն ունենա:

Ատենախոսության առջև դրված առանձին հիմնախնդիրների լուծմանն են անդրադարձել մի շարք հայ տնտեսագետներ՝ Մ. Քոթանյանը, Վ. Խոջաբեկյանը, Գ. Կիրակոսյանը, Թ. Թորոսյանը, Ա. Դարբինյանը, Ա. Մարկոսյանը, Հ. Սարգսյանը Ս. Դավոյանը, Յ. Սուվարյանը, Հ. Մանասյանը և այլն: Սակայն, ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման որոշ հիմնախնդիրներ պահանջում են իրենց հետագա լուծումները: Մասնավորապես, արտաքին առևտրային քաղաքականության ընտրությունը, տնտեսական գործունեության առանցքային ոլորտների բացահայտումը, տեղական արտադրության զարգացումը և այլն: Դրանց ուսումնասիրության ու լուծման ուղիների բացահայտմանն էլ նվիրված է տվյալ ատենախոսությունը:

Ատենախոսության առարկան և օբյեկտը: Ատենախոսության օբյեկտը ՀՀ առևտրային հաշվեկշիռն է՝ իր զարգացման առանձնահատկություններով, օրինաչափություններով և առկա չլուծված խնդիրներով:

Ատենախոսության ուսումնասիրության առարկան ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման ուղիների ընտրությունն է :

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է, ՀՀ առևտրային հաշվեկշռի ուսումնասիրման և վերլուծության հիման վրա, բացահայտել

առևտրային հաշվեկշռի պակասուրդի հիմնական պատճառները և առաջարկել արտաքին առևտրային այնպիսի համակարգ, որն առավելագույնս նպաստի ՀՀ առևտրային հաշվեկշռի բարելավման գործընթացին՝ ստեղծելով և զարգացնելով ներմուծումը փոխարինող տեղական զարգացած արդյունաբերական բազա և հիմք հանդիսանալով արտահանման հետագա ընդլայնման համար :

Նշված նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել և լուծվել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ՀՀ արտաքին առևտրային քաղաքականությունը և բացահայտել դրա ազդեցությունն առևտրային հաշվեկշռի դինամիկայի վրա,
- վերլուծել ՀՀ առևտրային հաշվեկշռի կառուցվածքն ըստ ապրանքային խմբերի և երկրների կտրվածքի՝ բացահայտելով դրանցում առկա թերություններն ու օրինաչափությունները,
- հիմնավորել տնտեսական գործունեության այն հիմնական ոլորտներն, որոնց զարգացումն էական դեր կարող է ունենալ ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման գործընթացում,
- ուսումնասիրել ՀՀ արտաքին առևտուրը հարևան և ԱՊՀ հիմնական գործընկեր երկրների հետ և բացահայտել այդ առևտրի զարգացման հետագա ազդեցությունն առևտրային հաշվեկշռի վրա,
- ցույց տալ ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման հիմնական ուղիները և ձևերը,
- մշակել արտաքին առևտրային այնպիսի տնտեսական համակարգ, որը կապահովի ՀՀ առևտրային հաշվեկշռի բարելավում՝ կենտրոնանալով ներմուծումը փոխարինող արտադրությունների զարգացման և արտահանման ծավալների ավելացման վրա:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության համար տեսական և մեթոդական հիմք են միջազգային տնտեսագիտության մեջ առևտրային հաշվեկշռի կարգավորման բնագավառում կատարված գիտական աշխատանքները և վերլուծություններն, ինչպես նաև այլ երկրների փորձի ուսումնասիրության շուրջ կատարված գիտական հիմնավորումները:

Ատենախոսությունում տեղեկատվական հիմք են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հրատարակումները, մաքսային մարմինների տվյալները, միջազգային

կազմակերպությունների վերլուծությունները և հայրենական ու արտասահմանյան գիտական աշխատանքները:

Ատենախոսության առջև դրված խնդիրների լուծման համար կիրառվել են պատմական, գիտական աբստրահման, համեմատական վերլուծությունների, ինդուկցիայի, դեդուկցիայի և մաթեմատիկական մոդելավորման մեթոդներ:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է ՀՀ առևտրային հաշվեկշռի հիմնական թերությունների և օրինաչափությունների բացահայտմամբ և դրա կարգավորման հիմնական ուղիների առաջարկմամբ: Ատենախոսությունում առաջ քաշված խնդիրների լուծման ընթացքում ստացվել են հետևյալ արդյունքերը.

- հիմնավորվել է, որ ՀՀ առևտրային հաշվեկշռի ոչ բարենպաստ վիճակը պայմանավորված է իրականացվող ՀՀ արտաքին առևտրային ոչ կատարյալ քաղաքականությամբ,
- բացահայտվել է, որ ՀՀ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը՝ հատկապես արտահանման կտրվածքով, խիստ սահմանափակ է, իսկ ըստ երկրների՝ անընդմեջ ենթարկվել է զգալի տատանումների ու փոփոխությունների, և առաջարկվել են դրանք կատարելագործելու ուղիները,
- առաջարկվել է ակտիվորեն զարգացնել ՀՀ արտաքին առևտուրը հարևան և ԱՊՀ երկրների հետ, քանի որ այդ երկրների շուկաներն ավելի հասանելի են, հետևաբար արտահանման ծավալների մեծացման հնարավորություններն ավելի մեծ են,
- մշակվել և առաջարկվել է ՀՀ-ում կիրառել ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականություն, որը կենտրոնանալով սննդի և թեթև արդյունաբերության, գյուղատնտեսական վերամշակող արտադրության, ինչպես նաև հանքահումքային և քիմիական արդյունաբերության տնտեսական գործունեության ոլորտների զարգացման վրա, կապահովի առևտրային հաշվեկշռի բարելավում,
- ապացուցվել է, որ ՀՀ առևտրային հաշվեկշռի բարելավման և տնտեսական զարգացման գործընթացում մեծ դեր են խաղում արտահանման ուղղվածություն ունեցող նոր ձևավորվող ձեռնարկություններն, ուստի օտարերկրյա ուղղակի ներդրումները պետք է

նպատակաուղղված վերաբաշխվեն դեպի արտահանման ներուժ ունեցող տնտեսական գործունեության ոլորտներ:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ատենախոսության գործնական նշանակությունը պայմանավորված է միջազգային առևտրի զարգացման ներկայիս փուլում ՀՀ առևտրային հաշվեկշռի կառուցվածքի բարելավմամբ, որը կապահովի ՀՀ տնտեսության վերակառուցում, տնտեսական աճ և միջազգային շուկայում երկրի մրցունակության բարձրացում:

Ատենախոսությունում կատարված վերլուծության հիման վրա ստացված արդյունքերն, եզրակացություններն ու առաջարկություններն արժանացել են հավանության ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից:

Ատենախոսությունն օգտակար կլինի տնտեսագետներին, որոնք զբաղվում են արտաքին առևտրի հիմնախնդիրներով, տնտեսագիտական բուհերում և ֆակուլտետներում ուսանողների, ինչպես նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են ԵՊՀ-ի տնտեսագիտական ֆակուլտետի Միջազգային տնտեսական հարաբերություններ ամբիոնի նիստում, ինչպես նաև Դնեպրոպետրովսկի պետական համալսարանի Տնտեսագիտական ֆակուլտետի Միջազգային տնտեսագիտություն ամբիոնի կողմից կազմակերպած գիտաժողովներում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են 4 գիտական աշխատություններում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը ներառում է առաջաբան, երեք գլուխ, եզրակացություններ և առաջարկություններ, հավելված ու գրականության ցանկ: Ատենախոսությանը հարստացնում է 9 գրաֆիկ, 2 աղյուսակ, 8 գծապատկեր և 5 սխեմա, իսկ հավելվածում ներկայացված է 16 աղյուսակ: Ատենախոսության ծավալը կազմում է 131 էջ՝ ներառյալ հավելվածը և գրականության ցանկը:

Գլուխ 1. Առևտրային հաշվեկշռի կարգավորման տեսական և մեթոդական հիմքերը

1.1 Միջազգային առևտրի վերաբերյալ տեսությունների համեմատական վերլուծությունը

Ատենախոսությունում վերլուծվում են միջազգային առևտրային տեսություններն, որոնք հիմնականում ձևավորվել են Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում: Քանի որ հենց հետպատերազմյան շրջանում մեծացավ զարգացող երկրների դերը համաշխարհային տնտեսության մեջ և դրանով պայմանավորված միջազգային առևտրային տեսությունները զգալի փոփոխություններ կրեցին: Ընդ որում, քանի որ ատենախոսության նպատակն է պարզաբանել և լուծել ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման հիմնախնդիրներն, ապա նախ անհրաժեշտ է մանրամասը դիտարկել և վերլուծել միջազգային առևտրային տեսությունները: Ավելին, լինելով փոքր երկիր, Հայաստանի տնտեսական զարգացման վրա մեծ դեր կարող է խաղալ միջազգային առևտուրը: Այդ պատճառով, մեր հետազոտության հիմնական նպատակն առևտրային հաշվեկշռի ինքնանպատակ կարգավորումը չէ, այլ դրանով պայմանավորված տնտեսական զարգացում ապահովելն է:

Մինչ միջազգային առևտրի դասական տեսության ձևավորումը միջազգային առևտուրը կրել է հովանավորչական բնույթ: 16-18-րդ դարի երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում միջազգային առևտրի ոլորտում գերակայում էր մերկանտիլիստների առևտրատնտեսական հայացքներն, որոնց համաձայն երկիրը պետք է խթաներ արտահանումը և զսպեր ներմուծումը: Արդյունքում՝ ապահովելով դրական առևտրային հաշվեկշիռ, երկրի ներսում կկուտակվի ոսկի: Հարկ է նշել, որ համաձայն մերկանտիլիստների առևտրատնտեսական հայացքների, երկրի հարստության հիմքում ընկած էր ոսկին, իսկ երկրների միջև իրականացվող առևտուրը համարվում էր զրո գումարով խաղ:

Հետագայում Ադամ Սմիթը հիմնովին հերքեց մերկանտիլիստների հովանավորչական աշխարհայացքը: Սմիթն առաջ քաշեց բացարձակ առավելության սկզբունքը՝ դրանով իսկ կարևորելով ազատ առևտուրն իբրև երկրի հարստության ստեղծման և կուտակման նախադրյալ: Սմիթը բացարձակ առավելությունների տեսությամբ ընդգծեց, որ ազատ առևտուրը փոխշահավետ է առևտրի մեջ ներգրավված բոլոր կողմերի համար, քանի որ այն ընդլայնում է

համաշխարհային արտադրությունը և սպառումը: Հետևաբար, արտաքին առևտուրը դրական է և ոչ թե զրո գումարով խաղ: Այսպիսով, կարելի է փաստել, որ սկզբնական շրջանում միջազգային առևտուրը կրել է հովանավորչական բնույթ՝ ձգտելով միշտ ապահովել դրական առևտրային հաշվեկշիռ: Հետագայում, Սմիթի կողմից տեսականորեն հիմնավորվեց ազատ առևտրի գաղափարը և դրա արդյունավետությունը: Սակայն այդ տեսության ի հայտ գալուց մինչ օրս ոչ մի երկիր չի առաջնորդվել կատարյալ ազատ առևտրի քաղաքականությամբ:

Սմիթի տեսությունը զարգացրեց Դավիդ Ռիկարդոն՝ առաջ քաշելով միջազգային առևտրի հարաբերական առավելությունների տեսությունն, որը շատ ավելի մոտ էր իրական կյանքին: Երկրները՝ մասնագիտանալով այն ապրանքների արտադրության մեջ, որտեղ ունեն բացարձակ, կամ հարաբերական առավելություն և հետագայում դրանք արտահանելով, ներմուծում են այնպիսի ապրանքներ, որտեղ չունեն բացարձակ, կամ հարաբերական առավելություն: Սմիթի և Ռիկարդոյի մոդելներում դիտարկվում էր միայն մեկ ռեսուրս՝ աշխատուժ, իսկ հարաբերական առավելությունը մեկնաբանվում էր երկու երկրներում աշխատուժ ռեսուրսի արտադրողականության տարբերությամբ: Ելնելով Սմիթի և Ռիկարդոյի տեսություններից՝ կարելի է ընդգծել, որ երկրի առևտրային հաշվեկշիռը միշտ պետք է լինի հաշվեկշռված: Տեսականորեն երկրի արտահանման ծավալը՝ արժեքային առումով, պետք է հավասարվի ներմուծման ծավալին, սակայն իրականում դա այդպես չէ, և ոչ մի երկրի առևտրային հաշվեկշիռ հաշվեկշռված չէ: Այսպիսով, Սմիթի և Ռիկարդոյի միջազգային առևտրի տեսությունները հիմք հանդիսացան դասական միջազգային առևտրի տեսության առաջացման համար:

Հետագայում միջազգային առևտրի տեսությունը զարգացրեցին Հեկշեր – Օհլինը, համաձայն որի երկիրը հարաբերական առավելություն ունի այն ապրանքի արտադրությունում, որում ավելի ինտենսիվ է օգտագործվում այն ռեսուրսն, որը հարաբերականորեն առավել առատ է տվյալ երկրում: Այսպիսով, Հեկշեր-Օհլինի առևտրի տեսությունը հիմք հանդիսացավ նեոդասական միջազգային առևտրի տեսության առաջացման համար: Նեոդասականների մոտ արդեն դիտարկվում էր երկու ռեսուրս՝ աշխատուժ և կապիտալ, իսկ հարաբերական առավելությունը մեկնաբանվում էր երկրներում հարաբերական գների տարբերությամբ:

Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո՝ 1950-ական թթ., հաճախ տնտեսագետները նշում էին, որ նեոդասական միջազգային առևտրի տեսությունը չի գործում զարգացող երկրներում[1]: Նեոդասականները հիմնականում քննադատվում էին երկու հիմնական պատճառով.

- որ նեոդասական միջազգային առևտրի տեսությունը դա ստատիկ մոդել է և միայն վերաբերվում է տրված ռեսուրսների արդյունավետ բաշխմանը, մինչդեռ տնտեսական աճ ապահովելը դա դինամիկ մոդել է և կապված է ռեսուրսների առաջարկի մեծացման հետ,
- որ զարգացող երկրները մեծապես տուժում են տնտեսության կառուցվածքային անկայունություններից և դրա հետևանքով նեոդասականների կատարյալ ճկուն տնտեսության մոդելն այստեղ չի գործում[2]:

Զարգացման տնտեսագիտության ներկայացուցիչները գտնում էին, որ ի տարբերություն 19-րդ դարի, հետպատերազմյան շրջանում միջազգային առևտուրն այլևս զարգացող երկրների տնտեսական աճ ապահովող «շարժիչ» չէ: Այսինքն, երկու տարբեր հասկացություններ՝ *«առևտրի պայմանների վատթարացման»* և *«արտահանման պեսիմիստական մոտեցման»,* մարտահրավեր նետեցին նեոդասական միջազգային տնտեսագետներին: Զարգացման տնտեսագիտությունն ուսումնասիրում, վերլուծում և բացատրում էր, թե ինչու որոշ երկրներ շատ ավելի աղքատ են, քան մյուսները և առաջարկում էր փնտրել այդ իրավիճակից դուրս գալու ուղիներ՝ ուսումնասիրության և վերլուծության հիմքում ընդունելով միջազգային առևտրի՝ հետևաբար նաև առևտրային հաշվեկշռի, կարգավորումը: Զարգացման տնտեսագիտության վերաբերյալ Կրյուգմանը նշել է. «Ժամանակին տնտեսագիտության մեջ գոյություն ուներ մի ճյուղ, որը կոչվում էր «Զարգացման Տնտեսագիտություն», սակայն այդ ճյուղը հիմա արդեն գոյություն չունի[3]»: Այսպիսով, ի հակադրություն դասական միջազգային առևտրի տեսաբանների պնդման, որ միջազգային առևտուրն ապահովում է տնտեսական զարգացում, կասկածի տակ է դրվում զարգացման տնտեսագիտության ներկայացուցիչների կողմից, որոնց շարքում «կախվածության դպրոցն» էական դեր էր խաղում: Համաձայն կախվածության դպրոցի, զարգացող երկրները չափազանց կախված են համաշխարհային շուկայից և հետևաբար նրանք շահագործվում են

[1]Gunnar Myrdal "Economic Theory and Underdeveloped Regions", Duckworth, London 1957
[2]Myint H. "The Classical Theory of International Trade and Underdeveloped Countries", Economic Journal, N 68, 1958
[3]Krugman P.R. "Does the New Trade Theory Require a Trade Policy?", World Economy, N15 (4), pp. 423-441, 1992

«կենտրոնի» կողմից: Այս դպրոցի ներկայացուցիչները փորձեցին ազգային տեսանկյունից ուսումնասիրել առևտրի՝ հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների արտահանման և տնտեսական զարգացման միջև գոյություն ունեցող կապը: Արգենտինացի Ռաուլ Պրեբիշի կարծիքով, զարգացող երկրներում գոյություն ունի առևտրի պայմանների վատթարացման միտում[1]: Այստեղ հարկ է նշել, որ առևտրի պայմանները ներկայացվում է արտահանման և ներմուծման գների հարաբերակցությամբ: Միջազգային առևտրի միջոցով այն արտացոլում է երկրների միջև եկամտի բաշխման արդյունքը: Պրեբիշը՝ լինելով Լատինական Ամերիկայի Տնտեսական Հանձնաժողով (ECLA-Economic Commission for Latin America) կազմակերպության առաջին տնօրենն, այդ երկրներում ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության զարգացման հեղինակներից մեկն էր: Այսօր այդ կազմակերպությունը վերափոխվել և վերանվանվել է Լատինական Ամերիկայի և Կարիբիայի Տնտեսական Հանձնաձողով (ECLAC-Economic Commission for Latin America and Caribbean): Պրեբիշը պնդում էր, որ բարձր արտադրողականությունը հանգեցնում է արտահանվող ապրանքների գների նվազման, մինչդեռ մոնոպոլ ուժերի ազդեցությամբ, աշխատուժի և ապրանքների շուկայում շարունակում են գործել բարձր աշխատավարձեր և գներ: Ուստի, այստեղից հետևում է, որ մրցակցային կառուցվածքի տարբերության շնորհիվ, առաջին անհրաժեշտության ապրանքների արտահանման գները հարաբերականորեն ավելի ցածր են, քան ներմուծվող արդյունաբերական ապրանքներինը:

Առևտրի պեսիմիստական մոտեցումն առաջ եկավ հիմնվելով այն տեսակետի վրա, որ զարգացող երկրներում վատթարանում էր առաջին անհրաժեշտության ապրանքների առևտրի պայմանները: Զարգացող երկրներում զարգանում էր հիմնականում առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրությունը: Այդ ժամանակաշրջանում միջազգային շուկայում գոյություն ուներ պահանջարկի ցածր գնային առաձգականություն առաջին անհրաժեշտության ապրանքների նկատմամբ և պահանջարկի ցածր եկամտային առաձգականություն զարգացող երկրների առաջին անհրաժեշտության ապրանքների արտահանման նկատմամբ: Դա էր պատճառն, որ Նարկսն առաջ քաշեց իր «հավասարակշռված աճ» տեսությունն, որը տնտեսական զարգացման ներքին կողմնորոշմամբ ռազմավարություն էր[2]:

[1]Prebisch Raul “The Economic Development of Latin America and Its Principal Problems”, New York 1950
[2]Nurkse Ragnar ”Problems of Capital Formation in Underdeveloped Countries and Patterns of Trade and Development”, Oxford Press, New York 1952

Այսպիսով, զարգացման տնտեսագիտության մեջ մեծ դեր խաղաց կախվածության դպրոցն, որը մեծ նշանակություն էր տալիս ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությանը: Ընդգծենք, որ վերջինիս հիմնադիրը Ռաուլ Պրեբիշն է: Այդ առևտրային քաղաքականության էությունն այն է, որ դրա կիրառման շնորհիվ նախկինում ներմուծվող ապրանքները՝ հիմնականում արդյունաբերական, համալրվում կամ փոխարինվում էին տեղական արտադրության ապրանքներով: Այստեղ հարկ է նշել, որ այդ ժամանակաշրջանում ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության կիրառումը զուգորդվել է բարձր հովանավորչական քաղաքականությամբ:

Ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունն առաջին անգամ կիրառվել է Լատինական Ամերիկայի երկրներում, և դա I և II Համաշխարհային պատերազմների առաջացրած շեղումների ու 1930-ականների մեծ տնտեսական ճգնաժամի արդյունք էր: Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո, երբ սկսվեց քաղաքական և տնտեսական անկախության գործընթացը, ծագեց նաև այն գաղափարն, որ զարգացող երկրների տնտեսական աճը և զարգացումն առնչվում է ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության կիրառման հետ: Այդ ժամանակաշրջանում մի շարք զարգացող երկրների ինդուստրացումը կատարվում էր տեղական պահանջարկ ունեցող արդյունաբերական ապրանքների ներմուծման կրճատմամբ, որպեսզի այն բավարարվեր տեղական արտադրողների կողմից: Հնարավորություն էր տրվում արտահանումից ստացվող ֆինանսական միջոցներով ներմուծել կապիտալ ապրանքներ, որոնք անհրաժեշտ էին ինդուստրացմանը: Դա ավելի շուտ բնական գործընթաց էր, ոչ այնքան հիմնված առկա լավ սահմանված տնտեսագիտական տեսությունների վրա, որքան ներմուծման բացակայության, կամ ոչ բավարար արտարժույթի վրա, որոնք Առաջին Համաշխարհային պատերազմի, 1930-ական թվականների մեծ տնտեսական ճգնաժամի և Երկրորդ Համաշխարհային պատերազմի հետևանքների արդյունք էին: Հենց այդ ժամանակաշրջանում առաջ եկավ զարգացման տնտեսագիտությունն որպես տնտեսագիտության մի նոր ճյուղ, որը զբաղվում էր զարգացող երկրների զարգացման խնդիրներով:

Ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունն ավելի հանրահայտ դարձավ հետպատերազմյան շրջանում, երբ 1950-60-ական թթ. գաղութատիրական համակարգը

սկսվեց փլուզվել: Սակայն, մի շարք նոր, անկախ զարգացող երկրներ գտնվում էին տնտեսական վերահսկողության տակ, քանի որ հաճախ քաղաքական անկախացումն ինքնաբերաբար չի կարող հանգեցնել տնտեսական անկախացման: Գաղութատիրական ժամանակաշրջանից ժառանգած արտադրության և առևտրի կառուցվածքն առաջացրեց մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրներ, որոնցից հատկանշական էր եկամուտների անհավասար բաշխումը և ի տարբերություն զարգացած երկրների, զարգացող երկրների արտահանման կառուցվածքում մեծ էր արդյունաբերական հումքի և սննդամթերքի տեսակարար կշիռը:

Այստեղից կարելի է նկատել շատ հետաքրքիր մի երևույթ, որը կարելի է նմանեցնել վերը նշվածին: Այսպես, նախկին Խորհրդային Միության հանրապետությունները ձեռք բերելով քաղաքական անկախություն դեռևս տնտեսապես կախյալ մնացին, քանի որ Խորհրդային Միության տնտեսական համակարգը փոխկապակցված էր: Քաղաքական անկախացում ձեռք բերելուց հետո էլ դրանք կանգնեցին տնտեսական խորը ճգնաժամի առաջ: Կոնկրետ Հայաստանի դեպքում, ինչպես փաստում է Հավելված, Աղյուսակ 2.2-2-ը, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր ապրանքախումբն արտահանման կառուցվածքում գրավում է ամենամեծ տեսակարար կշիռը՝ 2003թ. 51.1%: Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր ապրանքախումբն արտահանման կառուցվածքում գրավում է երկրորդ տեղը՝ 2003թ. 13.3%: Երրորդ և չորրորդ տեղերում են պատրաստի սննդամթերքի և հանքահումքային ապրանքախմբերի արտահանման ծավալները՝ 2003թ. համապատասխանաբար 10.6% և 7.3%:

Մինչ ՀՀ անկախացումը և շուկայական տնտեսությանն անցումը տնտեսության մեջ եկամուտները բաշխված էին բավական հավասարաչափ՝ Ձինի գործակիցը կազմում էր ընդամենը 0.25%: Անցումային ժամանակահատվածում եկամուտների բաշխվածության անհավասարությունը զգալի աճեց՝ 1998թ. կազմելով 0.57%: Սա բավական բարձր ցուցանիշ է, համեմատության համար կարող ենք դիտարկել Աղյուսակ 1.1-1-ն, որտեղ բերված են մի շարք անցումային երկրներ և որոնցում մեկ շնչին ընկնող ՀԱԱ գրեթե նույնն է:

Աղյուսակ 1.1-1

	Ջինի գործակից	Մեկ շնչին ընկնող ՀԱԱ (հազ. ԱՄՆ դոլար)
Հայաստան	0.57	2,074
Ադրբեջան	-	2,168
Վրաստան	0.41	3,429
Ղրղստան	0.44	2,247
Մոլդովա	0.41	1,995
Տաջիկստան	0.47	1,041

Եկամտի բաշխվածության աստիճանը որոշ անցումային երկրներում 1998թ. (Աղբյուր՝ World Bank, Armenia Poverty Update, 2002)

Ինչպես փաստում են Աղյուսակ 1.1-1-ի տվյալները, նշված երկրների շարքում Հայաստանն եկամուտների անհավասար բաշխման աստիճանով գրավում է առաջին տեղը:

Թե ինչպես է առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրության ավելացումը և հետևաբար արտահանման մեծացումը հանգեցնում առևտրի պայմանների վատթարացման, կարելի է ներկայացնել Գրաֆիկ 1.1-1-ի միջոցով: Ենթադրենք երկրի արտադրական հնարավորությունների կորը AB-ն է, X-ն առաջին անհրաժեշտության ապրանքներն են, իսկ Y-ն արդյունաբերական: Ենթադրենք երկրի X և Y ապրանքների արտադրության կոմբինացիան $P_0(X_2,Y_1)$ կետն է, իսկ սպառումը՝ $E_0(X_1,Y_4)$, այսինքն՝ երկիրն արտահանում է X ապրանքը և ներմուծում Y-ն, իսկ առևտրի պայմաններն որոշվում է P_0E_0 ուղղի անկյունային գործակցով:

Գրաֆիկ 1.1-1



Առևտրի պայմանների վատթարացման ազդեցությունն երկրի վրա

Հետագայում առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրության գործոնների մեծացման և մասնագիտացման հաշվին, երկրի արտադրական հնարավորությունների կորը տեղաշարժվում է դեպի աջ՝ CD: Այս դեպքում ապրանքների արտադրությունն ավելանում է՝ $P_1(X_3,Y_2)$, հետևաբար մեծանում է և X ապրանքի արտադրության արտահանման ծավալները, սակայն վատթարանում է առևտրի պայմաններն, ուստի P_1E_1 ուղղի անկյունային գործակիցը փոքրանում է: Վերջինիս հետևանքով նվազում է սպառումը՝ $E_1(X_1,Y_3)$ և հետևաբար նաև՝ ընդհանուր բարեկեցությունը, քանի որ I_1 անտարբերության կորը գտնվում է I_0 անտարբերության կորից ներքև: Հարկ է նշել, որ երկիրն արդեն ավելի շատ X ապրանքի արտահանման դիմաց ներմուծում է ավելի քիչ Y, քան նախկինում:

Այսպիսով, եթե երկիրը ներգրավված է արտաքին առևտրի մեջ, ապա հնարավոր է, որ ավելանան արտադրական հնարավորությունները, սակայն տնտեսական աճը կնվազեցնի երկրի ներսում իրական եկամուտները: Գրաֆիկ 1.1-1-ից հետևում է, որ տնտեսական աճից հետո իրական եկամուտներն, որն արտահայտվում է I_1 անտարբերության կորի միջոցով, ավելի ցածր է, քան նախկինում էր՝ I_0: Այսինքն, ստացվեց այնպես, որ տնտեսական աճը վնաս պատճառեց երկրին և ստացված արդյունքը բացատրվում է հետևյալ երկու գործոնով.

1. տնտեսական աճ, որը պայմանավորված է երկրի արտադրական հնարավորությունների և արտադրության ծավալների մեծացմամբ,
2. արտահանվող ապրանքների պահանջարկի ցածր առաձգականությամբ:

Համաձայն առաջին գործոնի, տնտեսական աճը մեծացնում է երկրի արտահանման առաջարկն, իսկ համաձայն երկրորդ գործոնի, երկրի առևտրի պայմանները պետք է վատթարանան, որպեսզի աճի համաշխարհային պահանջարկն՝ ապրանքների շուկայում հավասարակշռությունը պահպանելու համար:

Այժմ, ավելի տեսանելի դարձնելու համար փորձենք այն մեկնաբանել առաջարկի և պահանջարկի կորերի միջոցով: Ենթադրենք, երկրում տեղի ունի տնտեսական աճ և այն պայմանավորված է X ապրանքի արտադրության ծավալների մեծացմամբ, որը Գրաֆիկ 1.1-2-ում ներկայացված է որպես համաշխարհային առաջարկի կորի՝ S_d+S^*, դեպի աջ՝ S'_d+S^*, տեղափոխությամբ, որտեղ S_d-ն X ապրանքի տեղական առաջարկն է, իսկ S^*-ն՝ օտարերկրյա:

Գրաֆիկ 1.1-2



Առևտրի պայմանների վատթարացման մեկնաբանումն առաջարկի և պահանջարկի կորերով

Քանի որ երկրի ներսում X ապրանքի արտադրությունից ստացվող լրացուցիչ եկամուտները կհանգեցնեն երկրի ներսում լրացուցիչ X ապրանքի սպառման, ապա համաշխարհային պահանջարկի կորը՝ Dd+D*, նույնպես տեղաշարժվում է դեպի աջ՝ D′d+D*: Արդյունքում X ապրանքի հարաբերական գինը OA-ից նվազում է OB և այդ չափը կախված է առաջարկի և պահանջարկի առաձգականությունից, այսինքն՝ որքան քիչ առաձգական են առաջարկը և պահանջարկն, այնքան մեծ է այդ նվազման չափը:

Այսպիսով, 1950-70-ական թթ. ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունը լայնորեն կիրառվում էր գրեթե բոլոր զարգացող երկրներում, որի խելամիտ կիրառման հետևանքով մի շարք զարգացող երկրներ այդ ժամանակաշրջանում ունեցան բարձր տնտեսական աճի տեմպեր՝ տարեկան մինչև 8%[1]: Սակայն, 1980-ական թթ. այդ քաղաքականությունը կրեց մեծ անհաջողություններ, հատկապես՝ Լատինական Ամերիկայի երկրներում, որտեղ, ինչպես արդեն նշվեց, առաջին անգամ կիրառվել էր այդ քաղաքականությունը:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ մի շարք նեոդասականներ կատարեցին էմպիրիկ հետազոտություններ, որպեսզի բացահայտեն զարգացող երկրներում իրականացվող

[1]Kruger A.O. “Foreign Trade Regimes and Economic Development : Liberalization Attempts and Consequences”, pp.115-116, Cambridge 1978

ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության ազդեցությունը տնտեսական զարգացման վրա: Հատկապես աչքի է ընկնում Լիթլ, Սքիտովսկի և Սկոտի համատեղ աշխատությունը[1]: Բոլոր էմպիրիկ աշխատությունների հիմնական միտքն այն է, որ հովանավորչական քաղաքականությունն ավելորդ է և այն ոչ արդյունավետ է բաշխում ռեսուրսներն արտադրության գործոնների և ապրանքների շուկաների միջև: Լիթլը, Սքիտովսկին և Սքոտը, հետագայում նաև Բալասան առաջ քաշեցին հովանավորչության արդյունավետ դրույք հասկացությունն, որպեսզի համեմատեն ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության ազդեցությունը երկրների և արդյունաբերական ոլորտների միջև: Այստեղ հովանավորչության չափման հիմքում ընկած է ավելացված արժեքի գաղափարն, այլ ոչ թե վերջնական ապրանքի գինը: Այդ պատճառով հաշվի է առնվում ինչպես միջանկյալ ապրանքների ներմուծման հովանավորչության մակարդակն, այնպես էլ վերջնական ապրանքինը[2]: Վերը նշված հեղինակները փաստեցին, որ մի շարք զարգացող երկրներում ավելացված արժեքի հովանավորչության միջին դրույքն արդյունաբերական ոլորտում բավական բարձր է:

Նեոդասականների մոտ ապրանքները միանման են և գոյություն չունի ոչ մի առանձնահատկություն, որը ժամանակի ընթացքում առաջացնի տարբեր տնտեսական աճ, այսինքն՝ տարբերություն չկա, թե երկիրը արտադրում է առաջին անհրաժեշտության ապրանքներ, թե արդյունաբերական ապրանքներ, քանի որ ռեսուրսներն օպտիմալ ձևով բաշխվում են կատարյալ մրցակցային շուկաներում: Հակառակ դրան, համաձայն կախվածության դպրոցի՝ դասական զարգացման տնտեսագետների կարծիքով, երկրում արտադրվող ապրանքատեսակներն, որոշակի ժամանակաշրջանում ազդում են տնտեսական աճի վրա: Սակայն, այստեղ հարկ է նշել, որ արտահանման պեսիմիստական մոտեցումը դա ամբողջական մշակված տեսություն չէ, այլ ավելի շուտ այն համոզմունք է, որը հիմնված է անցյալի դիտարկումների վրա:

Նեոդասական միջազգային տնտեսագետների մի շարք աշխատություններում քննադատվում էր ներմուծումը փախարինող առևտրային քաղաքականությունը՝

[1]Little I., Scitovsky T. and Scott M. ” Industry and Trade in Some Developing Countries”, Oxford University Press, Oxford 1970
[2]Balassa B. “The Structure of Protection in Developing Countries”, Johns Hopkins Press, Baltimore 1971

ներկայացնելով դրա միայն բացասական կողմերը: Այստեղ հարկ է նշել, որ բոլոր հետազոտությունների հիմքում տեղ է գտել տնտեսական աճը և տնտեսական զարգացման արտաքին կողմնորոշումը: Ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունը համեմատվում էր արտահանումը խրախուսող առևտրային քաղաքականության հետ, որը հաջող կիրառվել է Հարավային Կորեայում, Հոնկ-Կոնգում, Սինգապուրում և Թայվանում: Մի շարք հետազոտություններում վեր են հանվել այդ քաղաքականությունների երկուստեք դրական և բացասական կողմերն, արդյունավետության տարբերությունները: Դրանցում աչքի ընկան Կրյուգերի և Բագվատիի, Միքաելի աշխատություններն, որտեղ հետազոտվեցին ոչ միայն տնտեսության վրա զարգացման ներքին և արտաքին կողմնորոշմամբ քաղաքականությունների ազդեցությունն, այլ նաև մի շարք մակրոտնտեսական քաղաքականությունների, օրինակ՝ դրամավարկային, ֆիսկալ և փոխանակային կուրսի ազդեցությունը ներմուծումը փոխարինող և արտահանումը խրախուսող առևտրային քաղաքականությունների՝ հետևաբար և ամբողջ տնտեսության վրա[1]: Ուսումնասիրություններից կարելի է եզրահանգել, որ ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունն երկարաժամկետ հատվածում չի ապահովել համապատասխան տնտեսական աճ, իսկ դրան հակառակ, արտաքին կողմնորոշմամբ զարգացումը շատ ավելի նպատակահարմար է հասնելու այդ նպատակին: Բագվատիի կարծիքով, արտահանումը խրախուսող առևտրային քաղաքականությունը դա արտահանման բնագավառում արգելքների բացակայությունն է, իսկ Կրյուգերն արտահանումը խրախուսող առևտրային քաղաքականությունը դիտարկում էր որպես պետության վարած ռազմավարական քաղաքականություն, որը պարբերաբար խրախուսում է արտահանումը:

Այս առումով, 1983թ. Համաշխարհային բանկն իրականացրեց հետազոտություն, որտեղ ուսումնասիրվել է 1970-ական թթ. 31 երկրների արտաքին առևտրային քաղաքականությունների ազդեցությունը դրանց տնտեսությունների վրա: Համաձայն այդ հետազոտության, բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճն ավելի փոքր էր այն երկրներում, որտեղ կառավարության վարած արտաքին առևտրային քաղաքականությունը տնտեսության մեջ առաջացրել էր ավելի մեծ գնային շեղումներ:

[1]Bhagwati J.N. and Krueger A. O. “Exchange Control, Liberal-ization, and Economic Development”, A.E.R., N 85, 1973
Michaely M. "The Timing and Sequencing of a Trade Liberalisation policy", in Armeane M. Choksi and Demetris Papageorgiou (eds), “Economic Liberalisation in Developing Countries”, Basil Blackwell, pp.42-59, Oxford 1986

Այսպիսով, ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունը լայնորեն քննադատվել է և մինչև այսօր էլ այն չի դադարել: Հիմնական քննադատական մոտեցումները հետևյալն են.

- միջանկյալ և կապիտալ ապրանքների ներմուծման նպատակով տեղական և արտասահմանյան ձեռնարկություններին կառավարության կողմից տրվող սուբսիդիաները: Քննադատները պնդում են, որ դրա հետևանքով ստեղծվում է կապիտալատար արտադրություն՝ ապահովելով ոչ անհրաժեշտ զբաղվածության մակարդակ: Ընդ որում, դա բացասաբար է անդրադառնում առևտրային հաշվեկշռի վրա՝ մեծացնելով ներմուծվող միջանկյալ և կապիտալ ապրանքների ծավալը: Այստեղ հարկ է նշել, որ Հայաստանի դեպքում այս քննադատական մոտեցումն այնքան էլ տեղին չէ: Անկախացումից հետո, մեր երկրի առևտրային հաշվեկշիռը միշտ եղել է բացասական: Այսպիսի պայմաններում ավելի շատ նպատակահարմար է որոշ ժամանակահատված կախվածություն ունենալ միջանկյալ և կապիտալ ապրանքների ներմուծումից, քան պատրաստի ապրանքների ներմուծումից,
- փոխարժեքը պահպանվում է բարձր, որպեսզի արտադրողները կարողանան ներմուծել էժան միջանկյալ և կապիտալ ապրանքներ, որը նույնպես խթանում է կապիտալատար արտադրության զարգացմանը: Սակայն, այստեղ քննադատությունը ճիշտ կլիներ, եթե այն վերաբերվեր ոչ թե կապիտալատար արտադրության առաջացմանն, այլ հենց փոխարժեքի բարձր լինելուն, քանի որ բարձր փոխարժեքի դեպքում արտասահմանյան ապրանքները համեմատաբար ավելի էժան են, որն էլ նպաստում է ներմուծման մեծացմանն, իսկ վերջինս հակառակ է քաղաքականության նպատակին,
- քաղաքականության կիրառումից հիմնական օգուտներ ստացողներն արտասահմանյան ձեռնարկություններն են, որոնք կարող են իրենց արտադրությունը կազմակերպել տվյալ երկրում՝ հաղթահարելով տարիֆային և ոչ տարիֆային սահմանափակումները: Դրանք՝ երկրում հարկային և ներդրումային համապատասխան բարենպաստ պայմաններից ելնելով, մեծ առավելությունների կհասնեն, քան տեղական ձեռնարկությունները: Այստեղ ևս հարկ է նշել, որ քննադատությունը ճիշտ կլիներ այն երկրների համար, որոնք քիչ թե շատ ունեն զարգացած տեղական արտադրություն, իսկ Հայաստանի և դրա նման երկրների դեպքում այս երևույթի ի հայտ գալը նույնիսկ անչափ շահավետ է,

- առաջանում է արագ ուրբանացում և բնակչության կենտրոնացում: Այստեղ ևս Հայաստանի դեպքում չենք ունենա այս խնդիրը, քանի որ Հայաստանի գրեթե բոլոր վարչական տարածքներում գործում են արդյունաբերական ձեռնարկություններ:

Իսկ Բրուտոնի կարծիքով, ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության հիմնական թերությունն այն է, որ դա ստեղծում է աղավաղված միջավայր և խոչընդոտում է «սովորելու» գործընթացին և դրա զարգացմանը: Նոր ձևավորվող ձեռնարկություններն այդպես էլ մնում են նոր ձևավորվողի կարգավիճակում, որի արդյունքում չի ապահովվում սպասվող զարգացումը և տնտեսական աճը[1]: Այս քննադատական մոտեցումը, հատկապես՝ ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունը խոչընդոտում է «սովորելու» գործընթացին, ունի երկակի բնույթ: Համաձայն Բրուտոնի, ազատ առևտուրը խթանում է ձեռնարկություններում սովորելու գործընթացի զարգացմանը, սակայն, ինչպես մենք կհամոզվենք հետագայում, ձեռնարկություններին հնարավոր է ժամանակավորապես անհրաժեշտ լինի հովանավորչական քաղաքականություն, որպեսզի ձեռնարկություններում զարգանա «սովորելու» գործընթացը:

Այնուամենայնիվ, կախվածության դպրոցը բավական շատ հետազոտություններ է կատարել առևտրի և տնտեսության զարգացման մեջ փոխկապակցվածությունը ընդգծելու համար.

- ի տարբերություն արդյունաբերական ապրանքների, առաջին անհրաժեշտության ապրանքերի պահանջարկի նվազման միտումն, որի պատճառը ցածր եկամտի առաձգականությունն է: Նրանց կողմից ցույց տրվեց, որ առաջին անհրաժեշտության ապրանքների եկամտի առաձգականությունը շատ ցածր է: Այդ պատճառով, նման ապրանքների պահանջարկն աճում է շատ ավելի դանդաղ, քան արդյունաբերական ապրանքներինը: Այստեղից հետևում է, որ զարգացող երկրներում առաջին անհրաժեշտության ապրանքների գինը կնվազի, եթե արտադրողականությունն աճում է շատ ավելի արագ, քան պահանջարկը,
- առաջին անհրաժեշտության ապրանքների առաջարկի աճի միտումն, որի պատճառն այդ տնտեսական գործունեության ոլորտներում առկա ցածրորակ ավելցուկային աշխատուժի

[1]Bruton H. “A Reconsideration of Import Substitution”, Journal of Economic Literature, N 36, pp. 903-936, 1998

առկայությունն է: Այստեղից հետևում է, որ արտադրության ընդլայնումը կհանգեցնի այդ ապրանքների գների նվազման՝ հաշվի առնելով շուկայի մրցակցային բնույթը,

- դեռևս 1950-ական թթ. սկսած առաջին անհրաժեշտության ապրանքների առևտրի պայմանների վատթարացման միտումը: 1958թ. Բագվատին առաջ քաշեց «անկման աճ» գաղափարը, համաձայն որի, երկրի արտահանման մեծացումը կարող է փոքրացնել իրական եկամուտն: Այսինքն, առևտրի պայմանների վատթարացումը կարող է լինել ավելի մեծ, քան արտադրական հնարավորությունների ընդլայնումը[1]:

Դիտարկումները ցույց են տալիս, որ Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո տնտեսագիտության մեջ ոչ մի ոլորտ այնքան չի փոփոխվել, որքան տնտեսական զարգացման ոլորտն, որում ինչպես նշվեց մեծ դեր և կարևորություն ուներ միջազգային առևտուրը: Հետպատերազմյան շրջանին բնորոշ էր միջազգային առևտրի բավական բարձր տեմպերով զարգացումը: Այդ պատճառով երկրների համար՝ հատկապես զարգացող, միջազգային առևտուրը դիտարկվում էր որպես տնտեսական զարգացում ապահովող կարևոր գործոններից մեկը: Քանի որ տնտեսական զարգացումը դա քաղաքականության գիտություն է, ապա զարգացման տնտեսագիտությունը մեծ ազդեցություն է ունեցել զարգացման քաղաքականության վրա: Զարգացման մոդելներում կարևորություն է տրվում որոշել.

- կառավարության դերը տնտեսության մեջ
- կառավարության միջամտության աստիճանը
- կառավարության միջամտության ձևը
- կառավարություն-շուկա փոխազդեցության էությունը

Ելնելով կատարված վերլուծությունից՝ հետպատերազմյան ժամանակաշրջանում երկրների տնտեսական զարգացման գործընթացում կարելի է առանձնացնել կառավարության օպտիմալ դերի երեք փուլ.

- առաջին փուլում կառավարությունը դիտարկվում է որպես հիմնական շարժիչ ուժ, որը տևել է 1940-1979թթ.: Այս մոտեցման գաղափարական արմատները կարելի է գտնել մինչ մարշալյան դասական տնտեսագետների և հետպատերազմյան շրջանում Հանս Սինգերի,

[1]Bhagwati J.N. "The theory of immiserizing growth; further applications", in M. Connolly and A. Swoboda (eds.) "International Trade and Money", University of Toronto Press, pp. 45-54 , Toronto 1973

Ալբերտ Հիրշմանի, Արթուր Լեվիսի, Ռոզենստեն Ռոդանի, Նարկսե Ռագնարի, Ռաուլ Պրեբիշի մոտ: Նրանք տնտեսական զարգացումը դիտում էին որպես աճի գործընթաց[1], որը պահանջում էր արտադրության գործոնների պարբերաբար վերաբաշխում ցածր արտադրողականություն ունեցող, ավանդական տեխնոլոգիաներ կիրառող, նվազող հատույց ունեցող՝ հիմնականում առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրության, ոլորտներից դեպի բարձր արտադրողականություն ունեցող, ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառող, աճող հատույց ունեցող՝ հիմնականում արդյունաբերական ապրանքների արտադրության, ոլորտներ: Ի տարբերություն զարգացման ուշ նեոդասական տնտեսագետների, որոնց կարծիքով տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ խոչընդոտներն այնքան էլ էական չեն ռեսուրսների վերաբաշխման մեջ, զարգացման դասական տնտեսագետների կարծիքով ռեսուրսների վերաբաշխման վրա էական ազդեցություն են ունենում տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ գործոնները: Ներդրումային դժվարություններն, ենթակառուցվածքի ոչ ադեկվատությունն, ոչ կատարյալ ինֆորմացիան և շուկայի բացակայությունը դժվարեցնում է ռեսուրսների փոխանցումը տնտեսական գործունեության ոլորտների միջև: Դա էլ հիմք է հանդիսացել տնտեսական զարգացման դասական՝ կառուցվածքային, տնտեսագիտության առաջացման համար:

Այսպիսով, տնտեսական զարգացման դասական տեսաբանների կարծիքով երկարաժամկետ տնտեսական աճն ոչ գծային գործընթաց է և այն բնութագրվում է բազմակի կայուն հավասարակշիռ վիճակներով, որոնցից մեկն եկամտի ցածր մակարդակն է: Նրանց կարծիքով, զարգացող երկրները դատապարտված են եկամտի ցածր մակարդակով, որն առաջանում է արտադրական և ենթակառուցվածքային կապիտալի ցածր մակարդակի առկայությունից և որն ուղեկցվում է կապիտալի կուտակման ցածր մակարդակով և մալթուսյան բնակչության աճով: Եկամտի ցածր մակարդակը սահմանափակում է խնայողության մակարդակը և ամբողջական պահանջարկը: Առաջ է գալիս կառավարության միջամտության գաղափարն, որը պետք է տնտեսությանը դուրս բերի ոչ կոորդինացված, եկամտի ցածր մակարդակ ունեցող երկարաժամկետ ստատիկ հավասարակշռությունից և

[1]Hirschman A. O. "The Political Economy of Import Substituting Industrialization in Latin America", Quarterly Journal of Economics, N 82(1), pp. 1–32, 1967
Lewis W. Arthur "The Theory of Economic Growth", George Allen and Unwin Press, London 1955

ուղղորդի դեպի կոորդինացված, եկամտի բարձր մակարդակ ունեցող դինամիկ հավասարակշռության:

Այս առումով, 1943 թ. Ռոզենստեն Ռոդանն իր «Արևելյան և Հարավ-Արեվելյան Եվրոպայի Ինդուստրացման Խնդիրները» աշխատությունում նշել է, որ կառավարությունը տնտեսության մեջ պետք է իրականացնի այնպիսի փոխկապակցված ներդրումներ, որոնք կապահովեն արտադրության մասշտաբի արդյունք՝ բնութագրելով դա որպես ինքնաապահովող աճ[1]: Ըստ նրա, զարգացումը չի կարող առաջնորդվել միայն շուկայական ուժերով: Կառուցվածքային և համակարգային շեղումները վերացնելու համար կառավարությունը պետք է տնտեսության մեջ ակտիվ դեր կատարի, օրինակ՝ սուբսիդավորի և կոորդինացնի ներդրումները, կատարի ուղղակի ներդրումներ:

Իսկ 1970-ական թթ. ԱՄԿ (Աշխատուժի Միջազգային Կազմակերպություն) սկսեց կատարել մի շարք հետազոտություններ, որոնց նպատակը զարգացող երկրների զբաղվածության մակարդակի վիճակի պարզումն էր: Համաձայն ստացված արդյունքների, չնայած զարգացող երկրներում տնտեսական աճի և ինդուստրացման բարձր տեմպերի, գործազրկության մակարդակը բավական բարձր էր՝ միջին հաշվով մոտ 17%: Ընդ որում, գործազրկության մակարդակը ոչ միայն բարձր էր, այլ այն բարձրացել և շարունակում էր բարձրանալ ինդուստրացման գործընթացում:

- Երկրորդ փուլում հովանավորչական քաղաքականությունը դիտարկվում է որպես խոչընդոտող ուժ, որը տևեց 1979-1996թթ.: Նեոդասական առևտրի տեսաբաններ Կրյուգերը և Բագվատին, որոնք գերիշխող դեր սկսեցին խաղալ զարգացման տնտեսագիտությունում, ցույց տվեցին, որ միջազգային առևտուրը կարող է փոխարինել տեղական փոքր ամբողջական պահանջարկին: Հարկ է նշել, որ այստեղ մենք կողմնակից ենք նեոդասական միջազգային առևտրի տեսաբանների այս մոտեցմանը: Սակայն, եթե դիտարկենք Հայաստանի տնտեսությունն, ապա սկզբնական շրջանում պետք է զարգանա տեղական արտադրությունը և ստեղծվի բոլոր անհրաժեշտ պայմաններն, որպեսզի տեղական ձեռնարկատերերն ի վիճակի լինեն մրցակցել օտարերկրյա ձեռնարկատերերի հետ: Դրանից

[1]Rosenstein Rodan "Problems of Industrialization of Eastern and South Eastern Europe", Economic Journal, N 53, pp. 202-211, 1943

հետո, երբ արդեն տեղական ազգային շուկան կդառնա ոչ բավարար, այդ դեպքում արդեն միջազգային շուկան կփոխարինի տեղական ոչ տարողունակ շուկային:

Ըստ նեոդասականների, տնտեսության մեջ կառավարության միջամտության նպատակը պետք է լինի՝ վերացնելով առևտրային սահմանափակումները, տնտեսությանն անկախ, ինքնաապահովող տնտեսական աճի ուղու վրա դնելը: Այդ դեպքում, համաձայն «առևտուրը բավարար է» (“trade is enough”) դպրոցի ներկայացուցիչների, արտաքին կողմնորոշմամբ պայմանավորված տնտեսական աճը կլինի անխուսափելի: Այնուհետև, հարաբերական առավելությունների տեսությունը Հեկշեր-Օհլինի տեսության հետ մեկտեղ կիրականացնեն մնացածը: Կառավարությունը պետք է վերացնի նաև արտադրության գործոնների և ապրանքների շուկաներում գնային շեղումներն (“get prices right”), որպեսզի տնտեսական գործունեության ոլորտների միջև տեղի ունենա արտադրության գործոնների արդյունավետ շարժ, խթանվի համապատասխան տեխնոլոգիաների կիրառումը և ավելանա կապիտալի կուտակումը: Այսպիսով, համաձայն նեոդասականների, առևտրի ազատականացումը կբերի «երկարատև տնտեսական աճի» (sustained economic growth) և կառուցվածքային փոփոխությունների: Ավելին, նրանց կարծիքով, կառավարության միջամտությունը հանգեցնում է մասնավոր ձեռնարկատերի կողմից ռենտայի փնտրմանը, իսկ կառավարության դերի կրճատումն՝ արագ և արդյունավետ զարգացման: Այստեղ մենք մասնակիորեն համաձայն ենք նեոդասականների հետ և չենք ժխտում, որ հովանավորչական քաղաքականությունը հանգեցնում է ռենտայի փնտրմանը, սակայն նրանց մոտեցումներն էլ ավելի են ուժեղանում, եթե մենք դիտարկում ենք զարգացած երկրների տնտեսությունները: Ինչպես հետագայում բացահայտվում է աշխատանքում, զարգացող կամ անցումային շրջանում գտնվող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, կառավարության միջամտությունը կարող է հանգեցնել արագ և արդյունավետ զարգացման:

- Վերջապես երրորդ փուլում վերականգնվում է հովանավորչական քաղաքականության դերը: Դա տեղի ունեցավ, քանի որ տնտեսագետների կատարած հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ ի տարբերություն Արևելյան և Հարավային Ասիայի երկրների, որտեղ դեռևս կառավարության դերը շարունակում էր մնալ մեծ, 1980-ական թթ. այլ զարգացող երկրների տնտեսական աճը շատ ցածր էր: Չնայած 1980-ական թթ. միջազգային

միջավայրի ոչ բարենպաստ պայմանների, Արևելյան և Հարավային Ասիայի երկրները կարողացան պահպանել և որոշ դեպքերում նույնիսկ բարելավել իրենց տնտեսական զարգացումը: Այդ երկրների կառավարությունները ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունից անցում կատարեցին արտահանումը խրախուսող առևտրային քաղաքականության: Առաջ եկավ պետություն-շուկա դինամիկ փոխազդեցությունն, որտեղ կառավարությունը մեծ դեր է խաղում ներդրումների իրականացման, մարդկային կապիտալի, ինստիտուտների ձևավորման, տնտեսական քաղաքականության և ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացում:

Այսպիսով, ամփոփելով կարելի է եզրահանգել, որ հովանավորչական քաղաքականությունը գործել է մեկ ամբողջական պտույտ: Սկզբնական շրջանում, երբ զարգացող երկրների տնտեսությունները գտնվել են վատթար վիճակում, տնտեսագետների մեծ մասը տեղ են տվել հովանավորչական քաղաքականության դերի անհրաժեշտությանը: Այնուհետև, տնտեսության վիճակը բարելավվելով, առաջ է եկել կառավարության դերի նվազեցման խնդիրը, քանի որ տնտեսագետները հանգել են այն տեսակետին, որ առևտրի միջոցով շուկան ինքնաբերաբար կկարգավորվի: Եվ վերջապես՝ հասկանալով շուկայի բացասական կողմերը և գնահատելով 1980-ական թթ. արդյունքները, տնտեսագետները նորից զարգացման գործընթացում կարևորություն տվեցին հովանավորչական քաղաքականությանը:

Փոփոխություններն, որոնք տեղի են ունեցել տեսության և քաղաքականության մեջ առաջացել են տարբեր պատճառներով: Առաջինը դա իմացությունն է, քանի որ էմպիրիկ և տեսական իմացության մակարդակը մեծանում է ժամանակի ընթացքում, ապա տեսական նոր պնդումներ և նոր փաստեր են ի հայտ գալիս՝ բացատրելու իրական աշխարհի հաջողությունները և անհաջողությունները:

Երկրորդ պատճառը դա գաղափարախոսության փոփոխությունն է, քանի որ տարբեր ուժային էլիտաներ են ասպարեզ գալիս և հեռանում, հետևաբար գաղափարախոսությունը նույնպես գալիս և հեռանում է դրանց հետ: Նոր գաղափարախոսություններն առաջացնում են նոր պրիզմաներ, որոնց միջոցով դիտարկվում են հին տեսությունները և հին քաղաքականությունները: Եվ, երբ դրանք անհամատեղելի են ստեղծված նոր արժեքների հետ,

ապա տեսությունները և քաղաքականությունը վերաձևավորվում են, որպեսզի համապատասխանեն նոր պահանջներին:

Երրորդ պատճառը դա միջազգային միջավայրի փոփոխությունն է: Արդյունաբերության, կամ հաղորդակցության ոլորտներում իրականացվում են տեխնոլոգիական նորարարություններ, կատարվում են գլոբալ ինստիտուցիոնալ ձևափոխություններ, այնպիսին ինչպիսին հետ Բրետոն-Վուդսյան ֆինանսական համակարգի ժամանակաշրջանն էր: Առաջացող փոփոխություններն ազդում են թե՛ տեսությունների ձևավորման, թե՛ քաղաքականության վրա: Այդ փոփոխությունները կարող են առաջացնել նոր հետևանքներ, բացել նոր հնարավորություններ կամ փակել հները:

Չորրորդ պատճառը դա տեղական ինստիտուտների, ցանկությունների և ճնշումների փոփոխությունն է: Զարգացման դինամիկան ինքնին ենթադրում է ինստիտուտների վերակառուցում, որոշ ճնշումների մեղմացում, կամ դրանց ուժեղացում և նոր ցանկությունների առաջ բերում:

Վերջապես հինգերորդ պատճառը դա գիտության «մշակույթն» է, որն օգնում է համակարգել քննարկումները և փաստարկումները գիտության մեջ: Սա որոշում է, թե ինչպես, նախորդ փոփոխությունների չորս պատճառները միավորելով, կարելի է կազմել տեսություն և մոդել:

1.2 Արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունն առևտրային հաշվեկշռի վրա

Աշխատանքում հակիրճ ներկայացվեց միջազգային առևտրային տեսությունները՝ հիմնականում շեշտը դնելով Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանի վրա: Հիմնվելով այդ տեսությունների վրա՝ ձևավորվեց զարգացող երկրների արտաքին առևտրային քաղաքականությունն, իսկ վերջինս իր ազդեցությունը թողեց զարգացող երկրների առևտրային հաշվեկշռի և տնտեսական զարգացման վրա: Ընդ որում, ինչպես նկատեցինք, առևտրային տեսությունների հիման վրա առաջացել և կիրառվել են արտաքին առևտրային քաղաքականության երկու հիմնական ձև՝

- ազատական արտաքին առևտրային քաղաքականություն,
- ոչ ազատական արտաքին առևտրային քաղաքականություն:

Աշխատանքի այս բաժնում կհամեմատենք և կգնահատենք այդ երկու հիմնական արտաքին առևտրային քաղաքականությունները, կբացահայտենք դրանց դրական և բացասական կողմերը և ազդեցությունները առևտրային հաշվեկշռի վրա: Ավելին, քանի որ արտաքին առևտրային քաղաքականությամբ որոշվում է տվյալ երկրի առևտրային հաշվեկշռի վիճակն, որն էլ իր հերթին արտահայտում է, թե տվյալ արտաքին առևտրային քաղաքականությունն որքանով է հաջողվել, ապա արտաքին առևտրային քաղաքականության ճիշտ ընտրությունը և կիրառումը կնպաստի առևտրային հաշվեկշռի բարելավմանը և տնտեսական զարգացմանը: Այսպիսով, ցանկացած երկրի արտաքին առևտրային քաղաքականությունը պետք է ունենա շատ ավելի խնդիրներ, քան համաշխարհային շուկային ինտեգրվելը: Մասնավորապես՝ կարգավորել առևտրային հաշվեկշիռը և ապահովել տնտեսական զարգացում: Այստեղ հարկ է նշել, որ դրանք փոխկապված են, սակայն, ինչպես աշխատանքում հստակեցվեց, դրական առևտրային հաշվեկշիռը միշտ չէ, որ ապահովում է տնտեսական զարգացում:

Այսպես, տնտեսական զարգացման ընթացքում ազատ առևտրային քաղաքականությանն, ի տարբերություն ոչ ազատ առևտրային քաղաքականության, բնորոշ է առնվազն 4 առավելություն.

- հարաբերական առավելություն, որն առաջանում է առևտրից,

- համեմատաբար բարձր արտադրողականությամբ տնտեսական գործունեության ոլորտները կարող են զարգանալ՝ անտեսելով տեղական պահանջարկը,
- արտադրողականության շարունակական զարգացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել բարեկեցության դինամիկ մեծացման,
- ոչ արտադրողական գործունեության դադարեցում:

Առևտրից ստացվող հարաբերական առավելությունը միջազգային տնտեսագիտության դասագրքերում ամենաշատ քննարկվողներից մեկն է, որի էությունն այն է, որ երկրի առևտրից ստացվող օգուտը կախված է այդ ապրանքի արտադրության մեջ հարաբերական առավելության առկայությունից: Համաձայն Սոդերստենի և Ռիդի, սա նշանակում է, որ նույնիսկ շատ աղքատ երկիրը կարող է ստանալ օգուտներ այլ երկրների հետ կատարելով առևտուր[1]: Առևտրից ստացվում է օգուտ, քանի որ գոյություն ունի տեղական հարաբերական գների և արտասահմանյան գների միջև տարբերություն, իսկ երբ երկիրը դառնում է ավելի ու ավելի բաց, ապա այդ դեպքում ստացվող օգուտը նվազում է, քանի որ տեղական հարաբերական գների և արտասահմանյան գների միջև տարբերությունը կրճատվում է:

Փակ տնտեսությունում տեղական արտադրության աճը սահմանափակվում է տեղական սահմանափակ շուկայով, իսկ բաց տնտեսության դեպքում արդյունավետ և ընդարձակվող արտադրությունն իր առջև ունի ամբողջ համաշխարհային շուկան: Հետագայում բաց, բազմաճյուղ տնտեսությունում հնարավոր է կապիտալի մեծ կուտակում, որը կնպաստի կապիտալատար ճյուղերի զարգացմանը (Ռիբչինսկու տեսություն):

Երրորդ առավելությունը հիմնվում է երկրորդի վրա և 1999թ. Բերնարդը և Ջենսենը առաջ քաշեցին այն տեսակետն, որ արտադրողականության շարունակական աճն, որի հետևանքով դինամիկ մեծանում է բարեկեցությունն, ածանցվում է արտահանումից, այսինքն՝ այն զուգորդվում է արտահանման հետ, իսկ արտադրողականությունն՝ ի հաշիվ առևտրի, շարունակական աճում է[2]:

[1]Sodersten B. and Reed G. “International Economics”, 3 rd Edition, Macmillan, London 1994
[2]Bernard A. and Jensen J. B. “Exporting and productivity”, Social Science Research Network Electronic Library, 1999

Վերջապես վերջին առավելությունն՝ ոչ արտադրողական գործունեության դադարեցումը, տեղի է ունենում ի հաշիվ մրցակցության: Այն ձեռնարկություններն, որոնք գործում են ոչ արդյունավետ՝ չդիմանալով մրցակցությանը, դուրս են մղվում շուկայից:

Հետագայում դասական տնտեսագետները և զարգացման դասական տնտեսագետներն արտադրության ոլորտը դիտարկում էին որպես «տնտեսական աճի շարժիչ» ուժ: Այստեղ հարկ է նշել, որ զարգացման դասական տնտեսագետները վատատեսորեն էին մոտենում շուկայի ինքնագործունեության գաղափարին և լավատես էին այն հարցի շուրջ, որ այդ առաջացած կամ առաջացող խնդիրները կարող են լուծվել կառավարության կողմից: Համաձայն նրանց, այս ոլորտն երկարաժամկետ հատվածում հարաբերականորեն առաջացնում է մասշտաբի աճող հատույց ոչ միայն տվյալ ոլորտում, այլ նաև մի շարք այլ տնտեսական գործունեության ոլորտներում: Այլ հավասար պայմաններում, արտադրանքի թողարկման ավելացման հետ մեկտեղ մեծանում է նաև արտադրողականությունը: Այսպես, արտադրությունն առաջացնում է արտաքին արդյունքներ և այլ տնտեսական գործունեության ոլորտների հետ կապեր, հակառակ դրան գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտներն այլ տնտեսական գործունեության ոլորտների հետ չեն հաստատում այդպիսի սերտ կապեր: Այսպիսով, տեղական արտադրությունը զարգացնելու նպատակով, կառավարությունը ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության միջոցով միջամտում էր արտաքին առևտրում, որպեսզի հովանավորեր տեղական արտադրողներին:

Այս առումով, 1988թ. Վեյսը նշել է, որ զարգացող երկրներին չի հաջողվել նվազեցնել իրենց ներմուծման ծավալներն, ավելին դրանք՝ կիրառելով ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականություն, նվազեցրել են իրենց արտահանման ներուժը[1]: Սակայն, այստեղ մենք չպետք է համաձայնվենք Վեյսի հետ, քանի որ ՀՀ առևտրային հաշվեկշիռը կարգավորելիս մեր նպատակը ներմուծումը վերացնելը չէ, այլ հնարավորություն տալ տեղական ձեռնարկատերերին զարգացնելու իրենց արտադրությունը՝ հետագայում հիմք ստեղծելով արտահանման բազայի մեծացման համար:

Համաձայն Ա. Դարբինյանի, Հայաստանը լինելով ոչ մեծ երկիր, ունի բավական փոքր ներքին շուկա, որտեղ ապրանքների և ծառայությունների սպառման հնարավորությունները

[1]Weiss J. “Industry in Developing Countries: Theory, Policy and Evidence”, Routledge, London 1988

սահմանափակ են: Այդ պատճառով, նա կողմ է ազատ առևտրին և նշում է, որ ազատ առևտուրը կհանգեցնի արտահանման խթանմանը[1]: Այստեղ կարելի է չհամաձայնվել Ա. Դարբինյանի հետ, քանի որ, ինչպես բացահայտվում է աշխատանքում, անկախացումից հետո Հայաստանն որդեգրել է ազատ առևտրային քաղաքականություն և մինչև օրս զգալի տեղաշարժ չի նկատվել արտահանման ծավալների մեջ:

Համաձայն Գ. Կիրակոսյանի, անգամ ձևավորված ամենաազատական տնտեսության մեջ պետությունը պահպանում է իր տնտեսական դերը[2]: Այո պետությունն իհարկե պահպանում է իր տնտեսական դերը, քանի որ նա պետություն է, սակայն կարևորն՝ ինչպես է պահպանում այդ դերը: Պետության տնտեսական դերը կարող է լինել ակտիվ կամ պասիվ, ընդ որում զարգացող երկրներում, որոնք դեռ ունեն տնտեսական լուրջ խնդիրներ, պետությունը պետք է իր ակտիվ միջամտությունը ցուցաբերի տնտեսական ոլորտում:

Հայտնի է, որ արտաքին առևտրում հովանավորչության տեսքով կառավարության միջամտությունը տնտեսության համար առաջացնում է ուղղակի և անուղղակի ծախքեր: Օրինակ, ուղղակի ծախքեր են ռեսուրսների անհավասարաչափ բաշխումը և սպառողի ավելցուկի կրճատումն , իսկ անուղղակի՝ հովանավորչական քաղաքականության հետևանքով առաջացած ոչ արտադրողական գործունեությունը: Այժմ դիտարկենք, թե հովանավորչական քաղաքականության շնորհիվ ինչպես է կատարվում ռեսուրսների ոչ ճիշտ բաշխումը: Այս մոտեցումը կիրառվել է Կիրկպատրիքի և Վեյսի կողմից 1992թ., և համաձայն այս մոդելի, հովանավորչական քաղաքականությունն առաջացնում է ծախսեր և ոչ թե օգուտներ[3]: Նրանց կողմից դիտարկվել է ստանդարտ արտադրական հնարավորությունների կորը երկու՝ X և Y ապրանքների համար (Տես՝ Գրաֆիկ 1.2-1): SS և ՀՀ գծերը ներկայացնում են տեղական և միջազգային հարաբերական գները: SS տեղական հարաբերական գինը հովանավորչական քաղաքականության արդյունք է: Ազատ առևտրի պայմաններում արտադրության արդյունավետ մակարդակը բավարարվում է A կետում, իսկ հովանավորչության դեպքում արտադրության մակարդակը B կետն է:

---

[1]Ա. Դարբինյան «ՀՀ արտաքին առևտրի քաղաքականությունը և նրա հեռանկարները», էկոնոմիկա, N 1-3, էջ 18, Երևան 1997
[2]Գ. Ե. Կիրակոսյան «Անցումային տնտեսության վերափոխումները: Տեսության հարցեր», Տնտեսագետ, Երևան 2002
[3]C.Kirkpatrick and J. Weiss "Industrial and Trade Policy Reform in Developing Countries", Manchester University Press, pp.1-12, London 1992

Գրաֆիկ 1.2-1



Հովանավորչական քաղաքականության առաջացրած ծախսերը

Հ′Հ ներկայացնում է X ապրանքի նկատմամբ ռեսուրսների բաշխման ոչ արդյունավետ չափը: Սակայն, սա ճիշտ է զարգացած երկրների տնտեսության համար: Իրականում զարգացող երկրների համար շատ հավանական է, որ հովանավորչական քաղաքականությունն, եթե այն կազմակերպվում է ճիշտ, բոլորովին էլ չհանգեցնի ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխմանն, այլ ընդհակառակն օժանդակի ռեսուրսների արդյունավետ բաշխմանը: Մեր մոդելում դա տեղի կունենա, եթե երկիրն ունենա հարաբերական առավելություն կամ ձեռք բերի հարաբերական առավելություն Y ապրանքի արտադրության մեջ:

Այսպես, Հ. Մանասյանն առաջարկում է, որ կառավարությունը պետք է ակտիվացնի աջակցությունն այն տնտեսական գործունեության ոլորտներում, որտեղ Հայաստանը դեռևս պահպանում է համեմատական որոշ առավելություններ, օրինակ՝ արդյունաբերության ոլորտը: Ըստ Մանասյանի, տարբեր երկրների տնտեսական դինամիկայի տարբերությունները պայմանավորված են կոնկրետ երկրի ելակետային պայմաններով և տնտեսության կայունացման ու կառուցվածքային բարեփոխումների քաղաքականությամբ[1]: Այս առումով մենք լիովին համաձայն ենք Հ. Մանասյանի հետ:

Եթե սկսենք մոտենալ հովանավորչական քաղաքականությանը քննադատորեն, ապա բացի ռեսուրսների բաշխման ոչ արդյունավետությունից, հովանավորչական

[1] Հ. Մանասյան «Հայաստանի տնտեսական աճի բաղադրիչները», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N 11, էջ 31, Երևան 2002

քաղաքականությունը կարող է առաջացնել «X ոչ արդյունավետություն», օրինակ՝ խթանելով ռենտայի փնտրման գործունեությանը:

Գրաֆիկ 1.2-2



Հովանավորչական քաղաքականության «X ոչ արդյունավետությունը»

Սա մեկնաբանելու համար նորից ներկայացնենք արտադրական հնարավորությունների պարզ մոդելն՝ ենթադրելով որ «X ոչ արդյունավետության» պատճառով այն տեղաշարժվում է դեպի ձախ (տես՝ Գրաֆիկ 1.2-2:): Այստեղ արդեն հովանավորչական քաղաքականության պատճառով արտադրության մակարդակը C կետն է, որտեղ հովանավորչական քաղաքականության հետևանքով X ապրանքի նկատմամբ ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխման չափը՝ Հ′Հ, ավելի մեծ է, քան նախորդ գրաֆիկում ներկայացված Հ′Հ-ը:

Սակայն, եթե անտեսվի Կիրկպատրիքի և Վեյսի հովանավորչական քաղաքականության մոտեցումն, որն առաջացնում է ծախսեր, այլ ոչ թե օգուտներ, ապա մեր արտադրական հնարավորութունների կորը կարող է տեղաշարժվել դեպի աջ, այլ ոչ թե դեպի ձախ: Արտադրական հնարավորությունների կորը կարող է տեղաշարժվել դեպի աջ, քանի որ զարգացող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, ձեռնարկություններն աշխատում են ոչ լրիվ հզորությամբ և պետության կողմից չնչին օժանդակությունը թույլ կտա դրանց մեծացնելու իրենց արտադրական հնարավորությունները: Սա հնարավոր կլինի, եթե հովանավորչական քաղաքականությունն առաջնորդվի դինամիկ օգուտներով, այսինքն, եթե հովանավորչական քաղաքականության շնորհիվ ընդլայնվի Y ապրանքի արտադրության ծավալները (տես՝ Գրաֆիկ 1.2-3): Այստեղ հովանավորչության դեպքում արտադրության ծավալը E կետն է, որն

ապահովում է X և Y ապրանքների ավելի մեծ կոմբինացիա, քան ազատ առևտրի պայմաններում A կետը:

Գրաֆիկ 1.2-3



Հովանավորչական քաղաքականության առաջացրած օգուտները

Այսպես, համաձայն ակադեմիկոս Մ. Քոթանյանի, ոչ մի երկիր տնտեսության զարգացման բնագավառում լուրջ հաջողության չի հասել առանց պետական հովանավորչության: Շուկան օրվա, ամսվա, լավագույն դեպքում տարվա խնդիր է լուծում: Հեռանկարային խնդիրները, գնահատումները, կանխատեսումները՝ ելնելով իրավիճակի խորը վերլուծությունից, մարդիկ են նախագծում և ծրագրավորում[1]: Մենք այստեղ ամբողջովին համաձայն ենք Մ. Քոթանյանի հետ, ավելին նրա այդ պնդումը հիմնավորվում է պատմական առումով, քանի որ ժամանակին իրոք բոլոր ներկայիս զարգացած, հետագայում նաև զարգացող երկրները կիրառել են հովանավորչական քաղաքականություն:

Նեոդասականներն ինդուստրացմանը նվիրած իրենց աշխատություններում նշում են, որ զարգացող երկրներում հովանավորչական քաղաքականության մակարդակը բավական բարձր է: Վերջինս իր ազդեցությունն է թողնում ոչ միայն հովանավորվող տնտեսական գործունեության ոլորտների, այլ նաև մի շարք այլ ոլորտների վրա: Արտաքին կողմնորոշում ունեցող արտադրությունները պետք է լինեն մրցակցային, որի համար տնտեսությունը պետք է կիրառի արտահանումը խրախուսող առևտրային քաղաքականություն, քանի որ դա խթանում է մրցակցությանը, միջազգային ստանդարտների իմացությանը և արտադրողականության

[1]Մ. Քոթանյան «Շուկայական էկոնոմիկա», Երևան 1988

բարձրացմանը: Մենք այստեղ չենք ժխտում նեոդասականների այս մոտեցումը, սակայն պնդում ենք, որ Հայաստանի դեպքում սկզբնական շրջանում այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է կիրառել համապատասխան միջոցառումներ տեղական արտադրությունը զարգացնելու համար, որից հետո միայն մտածել արտահանման խրախուսման մասին: Երկիրը պետք է ունենա զարգացած արդյունաբերական բազա, որպեսզի արտաքին առևտրում կարողանա մրցակցել օտարերկրյա մրցակիցների հետ:

Հարկ է նշել, որ Թ. Թորոսյանը՝ կարևորելով ազատ առևտրի դերը տնտեսության զարգացման գործընթացում, միաժամանակ կողմ է նաև հովանավորչական քաղաքականությանը: Լինելով փոքր երկիր՝ Հայաստանն ունի բավական սահմանափակ ներքին շուկա, այդ իսկ պատճառով Հայաստանի զարգացման հեռանկարները կապված են միջազգային շուկայի հետ[1]: Թ. Թորոսյանն առաջարկում է արտահանման խթանման համար ձեռնարկություններին ֆինանսական և հարկային արտոնությունների հետ մեկտեղ տրամադրել նաև մաքսային արտոնություններ: Մենք լիովին համաձայն ենք Թ. Թորոսյանի տեսակետի հետ, սակայն արտահանման խրախուսումը շատ ավելի նպատակահարմար կլինի կիրառել տեղական արտադրության զարգացումից հետո, որպեսզի դրա արդյունքը լինի դինամիկ, այլ ոչ թե ստատիկ:

Այսպիսով, ներկայումս «առևտրի ազատականացում» հասկացությունը լի է մի շարք սխալ հետևություններով: Առևտրի ազատականացման ներկա ըմբռնումն իր մեջ ընդգրկում է երկու հիմնական հասկացություն՝ *« համընդհանուր»* և *« միանման»:*

Համընդհանուր ասելով հասկանում են, որ ազատ առևտուրը բոլոր երկրներին ապահովում է օգուտներ՝ անկախ դրանց զարգացման աստիճանից, արդյունաբերական և տեխնոլոգիական կարողություններից և կառուցվածքային բնութագրերից:

Միանմանի դեպքում հասկանում են, որ յուրաքանչյուր երկրի արդյունաբերության բոլոր ոլորտներում թողարկված ապրանքների վրա պետք է կիրառվի տարիֆի միևնույն մակարդակ, իսկ իդեալական դեպքում՝ տարիֆի զրո մակարդակ:

[1]Թ. Շ. Թորոսյան «Արտահանման և ներմուծման հարաբերակցության կատարելագործումը ՀՀ-ում», էկոնոմիկա N 1-3, էջ-4, Երևան 1998

Համընդհանուր առևտրի ազատականացման տեսությունն առաջացել է երկու հիմնական փոխկապակցված տարրերից՝

- հարաբերական առավելություններ ուսմունքի ստատիկ տարբերակ
- շուկան միշտ գործում է արդյունավետ

Հարաբերական առավելությունների տեսության համաձայն՝ պարզեցված երկու երկիր , երկու ապրանք մոդելում, պահանջարկի և ճաշակների տրված պայմաններում, մասնագիտացման և հարաբերական առավելության վրա (Ռիկարդոյի մոդել) ազդում են աշխատուժի արտադրողականության (արտադրության գործոնի որակը) տարբերությունները կամ արտադրության գործոնների հագեցվածության (արտադրության գործոնի քանակը) տարբերությունները (Հեկշեր- Օհլինի մոդել): Այլ կերպ, յուրաքանչյուր երկիր կմասնագիտանա արտադրության մեջ և կարտահանի այն ապրանքներն, որոնց արտադրության համար ինտենսիվորեն օգտագործվում են արտադրության գործոններ, որոնք հարաբերականորեն ամենաառատն են տվյալ երկրում: Հարաբերական առավելությունների աղբյուր հանդիսացող Ռիկարդոյի և Հեկշեր- Օհլինի մոդելներից բխում է, որ երկու դեպքում էլ յուրաքանչյուր երկիր իր ռեսուրսները բաշխում է ելնելով ընթացիկ ծախքերի կառուցվածքից: Այսինքն, կարելի է նշել, որ.

- հարաբերական առավելությունն որոշվում է ելնելով շուկայի պայմաններից,
- ազատ առևտուրը խթանում է երկու երկրներում ռեսուրսների արդյունավետ բաշխմանը,
- արտադրական հնարավորությունների կորի տեղաշարժն անտեսվում է, այսինքն՝ երկարաժամկետ ժամանակահատվածը չի դիտարկվում:

Այս պատճառով մենք հարաբերական առավելությունների տեսությունը կանվանենք *ստատիկ հարաբերական առավելությունների* տեսություն:

Հարաբերական առավելությունների ուսմունքի Հեկշեր-Օհլինի մոդելն ենթադրում է, որ ձեռնարկություններն ակտիվ դեր չեն խաղում տնտեսության մեջ և հարաբերական առավելությունը ձեռք է բերվում ազգային տնտեսության մակարդակում: Ուստի, արտադրության գործոնների գները հանդիսանում են երկրի միջազգային մրցունակությունն որոշող միակ աղբյուրը: Սակայն, քանի որ փոխարժեքի միջոցով ազգային գները վերածվում են միջազգային

գների, ապա փոխարժեքն, այլ հավասար պայմաններում, կարող է ազդեցիկ դեր ունենալ երկրի միջազգային մրցունակության վրա:

Այսպիսով *ստատիկ* հարաբերական առավելությունների տեսությունից չի բխում, որ ազատ առևտուրն ամենալավն է: Համաձայն Քորդենի, ազատ առևտուրը միայն որոշակի ենթադրությունների դեպքում է ամենալավը[1]: Իրականում Պաուլ Սամուելսոնն, որը համարվում է ժամանակակից միջազգային առևտրի հիմնադիրներից մեկը, զգուշացնում է միջազգային առևտրի դասական տեսության սխալ մեկնաբանության մասին: Համաձայն նրա, նախ այդ տեսությունից բխում է, որ ազատ առևտուրը կամ ընդհանրապես առևտուրն ավելի լավ է, քան ավտարկիան, բայց դա անպայմանորեն չի նշանակում, որ ազատ առևտուրն երկրի համար օպտիմում է: Ազատ առևտրի պայմաններում ՝ երկու երկիր, երկու ապրանք մոդելում, երկու երկրներն էլ շահում են ի տարբերություն ավտարկիայի, բայց ոչ անպայմանորեն օպտիմում մակարդակում: Ազատ առևտրի հավասարակշիռ վիճակը կարող է երկրի համար չհանդիսանալ ամենանախընտրելի կետը: Սամուելսոնը նշում է նաև, որ անհնար է ցույց տալ ազատ առևտրի ավելի լավ լինելն այլ առևտրի տեսակների հետ համեմատած, և անպայմանորեն ճիշտ չէ, որ ազատ առևտուրն ամենալավ առևտրային քաղաքականությունն է[2]:

Այսպիսով, հարաբերական առավելությունների ուսմունքը բացատրում է զարգացած և զարգացող երկրների միջև տեղի ունեցող առևտուրը և դրա դրդապատճառները: Սակայն, այն շրջանցում է զարգացած երկրների միջև տեղի ունեցող առևտուրը: Առավել ևս, այն չի բացահայտում, թե Ֆրանսիան, Գերմանիան, Ճապոնիան, ԱՄՆ և Նոր Ինդուստրիալ Երկրները ինչպես վերափոխվեցին տարրական արտադրողներից դեպի արդյունաբերական ապրանքներ արտահանողների: Հարաբերական առավելությունների տեսությունն այս ամենը չի կարող բացատրել, քանի որ մեկ մակարդակից մեկ այլ մակարդակ անցումը չի կարող բացատրվել տեսության ստատիկ էությամբ:

Զարգացած երկրների միջև առևտուրը բացատրվում է մասշտաբի աճող հատույցով, կամ ապրանքների տարբերակումով: Մասշտաբի արդյունքը կարող է լինել ստատիկ կամ դինամիկ, իսկ ձեռնարկության համար՝ ներքին կամ արտաքին:

---

[1]Corden W. M. “Trade Policy and Economic Welfare”, Clarendon Press, Oxford 1974
[2]Samuelson P. A. “Welfare economies and international trade”, American Economic Review, pp. 261–266, 1938

Մեծ ձեռնարկությունը կարող է միաժամանակ ունենալ և' ներքին, և' արտաքին մասշտաբի արդյունք: Հետևաբար մասշտաբի ներքին և արտաքին արդյունքների միջև գոյություն ունի փոխազդեցություն: Համաձայն Յանգի, գոյություն ունի աշխատուժի բաժանման երկու փոխկապակցված տեսակետ[1].

- ձեռնարկության ներսում,
- ձեռնարկությունից դուրս:

Ձեռնարկությունը հասնում է մասշտաբի արտաքին արդյունքի, եթե կատարվում են մի շարք որակական փոփոխություններ՝ արտադրելով նոր ապրանքներ, հիմնելով նոր արտադրություններ: Բիզնեսի իրականացման այսպիսի մոտեցումը նշանակում է, որ ձեռնարկությունն երբեք չի գտնվում հավասարակշիռ վիճակում և մրցակցությունն ընթանում է ոչ միայն գնային, այլ նաև ոչ գնային առումով:

Այսպիսով, մասշտաբի արդյունք ապահովելը պրոգրեսիվ գործունեություն է և պահանջում է ժամանակ: Այդ առումով, շուկայի չափերը կամ տարողությունը շատ կարևոր գործոն է ժամանակի ընթացքում տնտեսական աճ ապահովելու գործում: Եթե դիտարկենք Հայաստանի օրինակը, ապա այդ դեպքում մենք ունենք «շատ փոքր» սահմանափակ շուկա, որի պատճառով գրեթե անհնար կլինի ապահովել մասշտաբի արդյունք: Սակայն, այդ խնդիրը կարող է լուծվել միջազգային շուկայի միջոցով:

Մասշտաբի արդյունքի աղբյուրները կարող են լինել տարբեր, այսինքն մասշտաբի արդյունքը կարող է լինել ոչ միայն արտադրության մեջ, այլ նաև կառավարման, շուկայագիտության, վերահսկողության մեջ: Սովորել-անելով (Learning-by doing) և փորձը հանդիսանում են մասշտաբի դինամիկ արդյունք, քանի որ դրանք կախված են ընդհանուր արտադրության ծավալից, որն իր հերթին ֆունկցիա է կախված ժամանակից, ձեռնարկության չափերից և արտադրության ծավալների աճի տեմպից: Գրականության մեջ միջազգային առևտրի հիմք է հանդիսանում ձեռնարկության համար մասշտաբի արտաքին արդյունքը, քանի որ այս դեպքում ձեռնարկության միջին ծախքերը նվազում են կախված ամբողջ արդյունաբերական ոլորտի չափերից: Ձեռնարկության համար մասշտաբի ներքին արդյունքի դեպքում միջին ծախքերը նվազում են կախված ձեռնարկության չափերից:

[1]Young A "Increasing return and economic progress", Economic Journal, N 38, 1928

Գործնականում միջազգային առևտրի վրա մեծապես ազդում են խոշոր միջազգային ձեռնարկություններն, որոնք սովորաբար ապահովում են բավական զգալի ներքին մասշտաբի արդյունք: Միջազգային ձեռնարկությունների գործունեությունն ազդում է արտադրված ապրանքի գնի և ոչ գնային հատկությունների վրա, եթե դրանք ընդլայնեն արտադրության ծավալներն, ապա կարող են նույնիսկ նվազեցնել շուկայական գինը: Ավելին, դրանց մեծ չափերը հնարավորություն են տալիս ավելի լավ մրցակցել ապրանքների տարբերակման և որակի առումով: Զարգացած երկրների մեծ շուկաները և ժամանակի ընթացքում ձեռք բերած փորձն այսպիսի ձեռնարկություններին թույլ է տվել ապահովել ստատիկ և դինամիկ ներքին մասշտաբի արդյունքներ:

Այսպիսով, տեսականորեն միջազգային շուկան, այսինքն՝ առևտուրը, պետք է օգնի ձեռնարկություններին՝ հասնելու մասշտաբի ներքին արդյունքի: Սակայն, որպեսզի ձեռնարկությունները մուտք գործեն միջազգային շուկա, դրանք պետք է լինեն մրցունակ: Այսինքն, զարգացող երկրներն, ինչպիսին Հայաստանն է, միջազգային շուկա մուտք գործելու համար, նախ պետք է հովանավորեն իրենց տեղական արտադրությունն, որպեսզի ապահովեն մասշտաբի արդյունք: Հետագայում դա հնարավորություն կտա դրանց մրցակցել միջազգային շուկայում:

Հետևաբար երկու դեպքում էլ՝ լինեն ձեռնարկությունները փոքր թե խոշոր, միջազգային առևտուրը շատ կարևոր գործոն է տնտեսական զարգացման գործընթացում և բոլոր երկրների վերջնական նպատակը պետք է լինի ապահովել «ազատ առևտրի» որքան հնարավոր է մեծ աստիճան: Այնուամենայնիվ, դա չպետք է անպայմանորեն հանդիսանա անցումային փուլում գտնվող երկրների անմիջական նպատակը: Մասշտաբի արդյունքի առկայության դեպքում՝ լինի դա ներքին, արտաքին, կամ երկուսն էլ միասին, հարաբերական առավելությունների ուսմունքը խախտվում է:

Գլուխ 2. ՀՀ առևտրային հաշվեկշիռը և դրա զարգացման դինամիկան 1993-2003թթ.

2.1 Արտաքին առևտրային քաղաքականության և առևտրային հաշվեկշռի փոխկապակցվածությունը

Աշխատանքում քննարկվեցին հետպատերազմյան շրջանում առկա միջազգային առևտրի տեսությունները և դրանց հիման վրա ձևավորված զարգացող երկրների արտաքին առևտրային քաղաքականություններն, որոնք ուղղակիորեն ազդում են առևտրային հաշվեկշռի վրա: Այժմ դիտարկենք, թե ինչպիսի արտաքին առևտրային քաղաքականություն է ընտրել Հայաստանը և թե դրա արդյունքում ինչպիսին է ՀՀ առևտրային հաշվեկշիռը:

Անկախացումից հետո Հայաստանի կառավարությունը ընտրեց բավական ազատականացված առևտրային քաղաքականություն, որը գրեթե ամենաազատականն էր ԱՊՀ երկրների շրջանակում: Մասնավորապես, ՀՀ առևտրային քաղաքականության զարգացման գործընթացում մեծ դեր ունեցավ 1993թ. օգոստոսին Ազգային ժողովի կողմից ընդունած Մաքսադրույքների մասին օրենքը: Այսպես, 1993թ. մաքսային ցանկում ընդգրկված էր միայն 132 անվանում ապրանք, իսկ ներմուծվող ապրանքների նկատմամբ գործում էր մաքսի հետևյալ դրույքաչափերը՝ 0, 5, 10, 30 և 50%: Ընդ որում, ներմուծվող ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսերի կշռված միջին մակարդակը 5%-ից ցածր էր: Մաքսի 0% դրույքաչափ կիրառվում էր հիմնականում միջանկյալ ապրանքների, ռեսուրսների ներմուծման վրա, սակայն կապիտալ ներդրումների ավելացման նպատակով ապրանքների ներմուծումն ազատված էր մաքսատուրքերից: Հետագայում, արտաքին առևտրի զարգացմամբ պայմանավորված, 1997թ. մաքսային համակարգում կատարվեց փոփոխություն, մասնավորապես՝ մաքսային ցանկի ապրանքների անվանումների թիվը հասավ մոտ 300-ի, իսկ մաքսի հինգ դրույքաչափի համակարգը փոխարինվեց մաքսի երկու դրույքաչափի համակարգով՝ 0 և 10%:

Ներկայումս ՀՀ արտաքին առևտրային քաղաքականությունը կարգավորվում է Մաքսային օրենսդրությամբ, որը ՀՀ ազգային ժողովն ընդունեց 2001թ. հուլիսին և ուժի մեջ մտավ 2002թ. հունվարի մեկից: ՀՀ արտաքին առևտրի քաղաքականության մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է վերլուծել ՀՀ մաքսային օրենսգիրքը:

ՀՀ Մաքսային օրենսդրությունը գրեթե ամբողջովին համապատասխանում է ԱՀԿ հիմնական պահանջներին ու սկզբունքներին, մասնավորապես՝ ՄԱԳՀ-ի II հոդվածում

ամփոփված ԱԱԲ ռեժիմին: Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի, անձիք հավասար հիմունքներով իրավունք ունեն ներմուծել ու արտահանել ապրանքներ և տրանսպորտային միջոցներ: Ավելին, ՀՀ քաղաքացիների և օտարերկրացիների միջև չի դրվում խտրականություն:

ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների վրա մաքսադրույքը կիրառվում է արժեքային սկզբունքով: Ընդ որում, մաքսային արժեքն որոշելու համար արտարժույթի փոխանակումն իրականացվում է տվյալ ապրանքների հայտարագրման օրը նախորդ օրվա շուկայական փոխարժեքի միջինով:

ՀՀ գործում է հետևյալ երեք հիմնական մաքսային վճար՝

- մաքսատուրքեր
- մաքսավճարներ
- օրենքով սահմանված տուրքեր և այլ պարտադիր վճարներ

Արտահանման մաքսատուրքերի դրույքը կազմում է 0%, իսկ ներմուծմանը՝ 0 կամ 10%: Ավելին, համաձայն ԱՀԿ պարտավորության, ներմուծվող ապրանքների վրա կիրառվող մաքսատուրքերի միջին դրույքը չպետք է գերազանցի 5%-ը:

ՀՀ մաքսային սահմանով ապրանքների, տրանսպորտային միջոցների և արժույթի մաքսային ձևակերպումների համար գանձվում է 3500 դրամ մաքսավճար, ապրանքների զննման ու հաշվառման համար 1 տոննայի դիմաց՝ 1000 դրամ (իսկ յուրաքանչյուր լրացուցիչ 1 տոննայի համար՝ 300 դրամ), խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների դիմաց՝ 500 հազ. դրամ, մաքսային մարմնի կողմից տրամադրվող յուրաքանչյուր փաստաթղթի համար՝ 1000 դրամ, ՀՀ տարածքով ապրանքների մաքսային ուղեկցման յուրաքանչյուր 100 կմ համար՝ 10 հազ. դրամ, ապրանքների պահպանման համար (մեկ տոննայի հաշվով)՝ օրական 1000 դրամ (յուրաքանչյուր լրացուցիչ մեկ տոննայի համար՝ 300 դրամ) և տրանսպորտային միջոցների պահպանման համար (մինչև 10 նստատեղով մարդատար ավտոմեքենաներ)՝ 2000 դրամ, իսկ այլ տրանսպորտային միջոցների համար՝ 5000 դրամ: Մաքսավճարները փոփոխվում են յուրաքանչյուր տարի՝ հիմք ընդունելով արժույթի տարեկան միջին անվանական փոխարժեքի փոփոխությունները: Մաքսավճարներից ազատվում են մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքները, միջազգային կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային

միջոցները և մշակութային արժեքներն, որոնց ներմուծումը կամ արտահանումը կրում է ժամանակավոր բնույթ : Ֆիզիկական անձիք կարող են ներմուծել, կամ արտահանել մինչև 500 ԱՄՆ դոլարին համարժեք և 50 կգ չգերազանցող ապրանք: Արտարժույթի արտահանումը և ներմուծումն, ինչպես նաև արժութային ցանկացած իրավական գործարք, ՀՀ-ում իրականացվում է առանց որևէ սահմանափակման:

ՀՀ արտաքին առևտրի կարգավորման գործում, բացի մաքսային լծակներից, կիրառվում են նաև ոչ մաքսային լծակներ: Համաձայն ՀՀ կառավարության 1995թ. դեկտեմբերի 29-ի «Ոչ մաքսային միջոցների կարգավորման» թիվ 124 որոշման՝ ներմուծվող և արտահանվող ապրանքները չունեն որևէ քանակական սահմանափակում: Արգելված է միայն այն ապրանքների ներմուծումն ու արտահանումն, որոնք վնասակար են առողջության, հասարակության և շրջակա միջավայրի համար:

Բացի քանակական սահմանափակման լծակներից, ոչ մաքսային լծակ է համարվում նաև արտոնագրումը: Ըստ ԱՀԿ Լիցենզավորման մասին համաձայնագրի՝ ներմուծման և արտահանման արտոնագրման ընթացակարգերը պետք է իրականացվեն առանց խտրականության, քանի որ դա կարող է արհեստական խոչընդոտներ առաջացնել թե՛ արտահանողի, թե՛ ներմուծողի համար:

ՀՀ արտաքին առևտրի գործընթացում, բացի մաքսային և ոչ մաքսային լծակներից, արտահանման և ներմուծման վրա ազդում են նաև ԱԱՀ և ակցիզային հարկը: Ակցիզային հարկը ՀՀ-ում կիրառվում է հիմնականում հետևյալ ապրանքների նկատմամբ. գարեջուր, խաղողի գինիներ, վերմուտ և այլ խմիչքներ՝ բուսական և բուրավետ էքստրակտների հավելումներով, էթիլային սպիրտ, ալկոհոլային խմիչքներ, այդ թվում՝ խաղողի գինու կամ գինենյութերի թորումից ստացվող սպիրտային թրմեր (կոնյակ, արմանյակ և այլն), թութունի փոխարինիչ, նավթ և նավթային ապրանքներ, նավթային ու այլ կարբոհիդրիտային գազեր՝ բացառությամբ բնական գազի: Մինչ 2000 թ. օգոստոսի 1-ը ՀՀ-ում գործում էր տեղական արտադրության և ներմուծվող ապրանքների համար ակցիզային հարկի տարբեր դրույքներ, որից հետո ԱՀԿ պահանջով ընդունվեց «Ակցիզային հարկի մասին» նոր օրենք, որն այդ խտրականությունը վերացրեց: ՀՀ-ում ԱԱՀ նոր օրենքն ուժի մեջ է մտել 2001թ. հունիսի 25-ից, համաձայն որի՝ այն կազմում է 20 %: ԱԱՀ-ն չի տարածվում արտահանվող ապրանքների վրա, սակայն կիրառվում է ներմուծվող և

տեղական ապրանքների նկատմամբ: Ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ գանձվում է ՀՀ մաքսային սահմանի վրա՝ անկախ երկրի ծագումից, բացառությամբ այն ապրանքների, որոնց մաքսատուրքը կազմում է 0% և չեն հարկվում ակցիզային հարկով: Այսպիսով ՀՀ մաքսային քաղաքականության կարևորագույն սկզբունքներն են.

- ՀՀ արտահանումն ազատ է որևէ առևտրային սահմանափակումից,
- ՀՀ արտաքին առևտրում բացակայում է արտահանման կամ ներմուծման որևէ քանակական սահմանափակում,
- ներմուծման մաքսադրույքը կազմում է կամ 10 կամ 0%, որտեղ 10% դրույքաչափը կիրառվում է հիմնականում առաջին անհրաժեշտության ապրանքների՝ սննդամթերք և գյուղատնտեսական ապրանքներ, սպառման նկատմամբ[1]:

Մաքսադրույք չի կիրառվում հետևյալ ապրանքների ներմուծման դեպքում.

- ապրանքներ, որոնք նախատեսված են կապիտալ ներդրումների համալրման համար, ավելին այդ ապրանքները պետք է լինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված «Կապիտալ ներդրումների համալրման համար ապրանքներ» անվանացանկում,
- տրանզիտ ապրանքներ,որոնք անցնում են Հայաստանի տարածքով
- արժույթ և արժեթղթեր,
- մշակման և վերամշակման նպատակով ՀՀ ժամանակավոր ներմուծված կամ արտահանված ապրանքներ:

Այսպիսով կարել է փաստել, որ ՀՀ արտաքին առևտրային քաղաքականությունը հենց սկզբնական շրջանում բավական ազատական էր, որն էլ ավելի ազատականացվեց ԱՀԿ անդամակցությամբ: Ստեղծվել են գրեթե բոլոր անհրաժեշտ պայմաններն արտաքին առևտրատնտեսական գործարքների զարգացման և համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու համար: Սակայն, որպեսզի կարողանանք ամբողջական պատկերացում կազմել թե կոնկրետ Հայաստանի դեպքում որքանով է ազատ առևտրային քաղաքականությունն արդարացրել իրեն, անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՀ առևտրային հաշվեկշիռը,

[1]Մանրամասները տես՝ Թ. Թորոսյան «ԱՀԿ անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա», էջ 25-27, Երևան 2004

մասնավորապես՝ տարածքային տեղաբաշխման և ապրանքային կառուցվածքներն, այնուհետև փորձել գնահատել արտաքին առևտրի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա:

Այսպես, 1993թ. սկսած մինչև օրս ՀՀ առևտրային հաշվեկշիռը բացասական է, որը հիմնականում պայմանավորված է արտահանման համեմատաբար փոքր և ներմուծման մեծ ծավալներով: ՀՀ առևտրային հաշվեկշռի դինամիկան մանրամասն ուսումնասիրելու համար դիտարկենք Գծապատկեր 2.1-1-ը:

Գծապատկեր 2.1-1



Առևտրային հաշվեկշռի դինամիկան 1993-2003թթ.[1] (մլն. դոլար)

Ինչպես վկայում է Գծապատկեր 2.1-1-ը, ՀՀ առևտրային հաշվեկշռի պակասուրդն ընդհուպ մինչև 1998թ. ունեցել է աճի միտում՝ կազմելով 672.3 մլն. դոլար, որը նշված ժամանակահատվածում առևտրային հաշվեկշռի պակասուրդի ամենաբարձր ցուցանիշն է: Դա

[1]Այս և ՀՀ արտաքին առևտրին վերաբերող հետագա բոլոր գծապատկերները հիմնված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված նյութերի վրա:

հիմնականում պայմանավորված է եղել ներմուծման ծավալների շարունակական մեծացմամբ, որը 1997թ. զուգորդվել է նաև արտահանման կրճատմամբ: Առևտրային հաշվեկշռի 1999թ. պակասուրդի կրճատման արդյունք է ներմուծման կտրուկ նվազումը, քան արտահանման աճը: Նախորդ տարվա հետ համեմատ արտահանումն աճել է ընդամենը 4.5%-ով՝ կազմելով 233.5 մլն. դոլար, իսկ ներմուծումը կրճատվել է 10,4%-ով՝ կազմելով 801.7 մլն. դոլար: 2001թ. առևտրային հաշվեկշռի պակասուրդի նվազման պատճառն այն է, որ ներմուծման ծավալները կրճատվել են 10.8 մլն. դոլարով, իսկ արտահանումն աճել է 45.3 մլն. դոլարով՝ համապատասխանաբար կազմելով 874.3 և 342.8 մլն. դոլար: Հակառակ դրան, 2002թ. առևտրային հաշվեկշռի պակասուրդի զգալի նվազումը բացատրվում է, որ արտահանման աճի տեմպը գերազանցել է ներմուծման աճի տեմպին (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.1-1): Արտահանման աճի տեմպը կազմել է 47.9, իսկ ներմուծմանը՝ 13.3%, որի արդյունքում արտահանումը կազմել է 507.1 դոլար, իսկ ներմուծումը 991.0 մլն. դոլար: Տվյալները փաստում են, որ 2003թ. կրկին գրանցվել է առևտրային հաշվեկշռի պակասուրդի բավական մեծ աճ՝ 2003թ. առևտրային հաշվեկշռի պակասուրդը կազմել է 591.3 մլն. դոլար, որը նախորդ տարվա հետ համեմատ աճել է 22.1%: Սակայն, առևտրային հաշվեկշռի այս պակասուրդի յուրահատկությունն այն է, որ թե՛ արտահանման, թե՛ ներմուծման ցուցանիշներով նկատվել է երկուստեք բավական մեծ աճի տեմպեր: 2003թ. ներմուծման ծավալները նախորդ տարվա հետ համեմատ աճել են 28.1% կազմելով 1269.4 մլն. դոլար, իսկ արտահանման ծավալները աճել են 33.7%-ով՝ կազմելով 678.1 մլն. դոլար (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.1-1):

Այսպիսով, կարելի է ընդգծել, որ ՀՀ արտաքին առևտրի քաղաքականությունն, որը բավական ազատական էր և էլ ավելի ազատականացվեց ԱՀԿ անդամակցությամբ, ապահովել է առևտրային հաշվեկշռի զգալի մեծ պակասուրդ: Առևտրային հաշվեկշռի պակասուրդը սկզբնական շրջանում հիմնականում պայմանավորվել է ներմուծման ծավալների աճով, իսկ արդեն 2003թ.՝ միաժամանակ ներմուծման և արտահանման աճով: Չնայած նրան, որ 2003թ. արտահանման ծավալների աճի տեմպը կազմել է 33.7, իսկ ներմուծմանը՝ 28.1%, առևտրային հաշվեկշռի պակասուրդը նախորդ տարվա հետ համեմատ մեծացել է: Դա հիմնականում պայմանավորվել է այն փաստով, որ 2002թ. ներմուծումը մոտ երկու անգամ գերազանցել է արտահանմանը (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.1-1):

2.2 Առևտրային հաշվեկշռի ապրանքային կառուցվածքը և դրա բարելավման հնարավորությունները

Աշխատանքի այս բաժնում վերլուծվում է առևտրային հաշվեկշռի ապրանքային կառուցվածքը: Ապրանքախմբերի տեսակարար կշիռների փոփոխությունները վերլուծելու նպատակով արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը կքննարկվի ներմուծում-արտահանում կտրվածքով:

Ներմուծում: Արտաքին առևտրի ներմուծման կառուցվածքում 1993-2003թթ. մեծ է եղել հետևյալ ապրանքախմբերի տեսակարար կշիռները՝ կենդանական ծագման արտադրանք, բուսական ծագման արտադրանք, պատրաստի սննդի արտադրանք, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր , մանածագործական իրեր ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր, քիմիական արդյունաբերության արտադրանք, մեքենաներ և սարքավորումներ, հանքահումքային արդյունաբերության արտադրանք, տրանսպորտի միջոցներ, սարքեր և ապարատներ (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.2-1): Թվարկվածներն այն ապրանքախմբերն են, որոնց ներմուծման տեսակարար կշիռները 1993-2003թթ. զգալի տատանվել են և այդ պատճառով ենթակա են ուսումնասիրման: Վերը նշված ապրանքախմբերի ներմուծման տեսակարար կշիռների փոփոխությունն ուսումնասիրելու նպատակով դիտարկենք Գծապատկեր 2.2-1-ը:

Գծապատկեր 2.2-1



Ապրանքախմբերի ներմուծման տեսակարար կշիռները 1993-2003թթ.

Ինչպես վկայում են Գծապատկեր 2.2-1-ի փաստացի տվյալները, կենդանական ծագման արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը 1994թ. աճել է՝ կազմելով 11.7%, որից հետո 1995թ. սկսած այն ձեռք է բերել անընդհատ նվազման միտում՝ 2003թ. կազմելով 2.5%: Սակայն, արժեքային առումով կենդանական ծագման արտադրանքի ներմուծման ծավալը մինչև 1996թ. ունեցել է աճման միտում՝ կազմելով 67.9 մլն. դոլար: Այնուհետև, կենդանական ծագման արտադրանքի ներմուծումն ընդհուպ մինչև 2002թ. ձեռք է բերել նվազման միտում՝ կազմելով 1996թ. 40.8%: 2003թ. այդ ապրանքախմբով նկատվել է ներմուծման ծավալների աճ՝ կազմելով 31.7 մլն. դոլար: 2001թ. համեմատ 2003թ. կենդանական ծագման արտադրանքի ներմուծման ծավալն աճել է 4.2%-ով, իսկ 2002թ. համեմատ՝ 14.4%-ով: Այսպիսով, ակնհայտ է, որ չնայած կենդանական ծագման արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը 1995թ. սկսած ունեցել է անընդհատ նվազման միտում, սակայն այդ ապրանքախմբով ներմուծումն արժեքային առումով մինչև 1996թ. ունեցել է աճման միտում: 1997թ. սկսած մինչև ընդհուպ 2002թ. ներմուծման տեսակարար կշռի անընդհատ նվազումն ուղեկցվել է ներմուծման ծավալի՝ արժեքային առումով, անընդհատ նվազմամբ: Դա հիմնականում բացատրվում է այդ ապրանքախմբով տեղական արտադրության կազմակերպմամբ և զարգացմամբ: 2003թ. այդ ապրանքախմբով ներմուծման տեսակարար կշիռը շարունակել է նվազել, իսկ ներմուծման ծավալն՝ արժեքային առումով, աճել է: Ներմուծման ծավալի աճը հիմնականում պայմանավորված է ընդհանուր պահանջարկի մեծացմամբ:

Բուսական ծագման արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը մինչև 1995թ. ունեցել է նվազման միտում՝ կազմելով 12.7%, որից հետո այն մինչև 2000թ. տատանվել է՝ կազմելով 11.2%: 2001թ. սկսած բուսական ծագման արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը ձեռք է բերել անընդհատ նվազման միտում՝ 2003թ. կազմելով 5.9%: Սակայն, արժեքային առումով բուսական ծագման արտադրանքի ներմուծան ծավալն ընդհուպ մինչև 1996թ. ունեցել է աճման միտում՝ կազմելով 113.5 մլն. դոլար: Այնուհետև, մինչև 2003թ. բուսական ծագման արտադրանքի ներմուծման ծավալը տատանվել է՝ ընդհանուր առմամբ ունենալով նվազման միտում: 2003թ. բուսական ծագման արտադրանքի ներմուծման ծավալը կազմել է 1996թ. ծավալի 30%-ը՝ կազմելով 74.9 մլն. դոլար: 2002թ. համեմատ 2003թ. այս ապրանքախմբով նույնպես նկատվել է ներմուծման ծավալի աճ, սակայն այն գրանցվել է շատ աննշան՝ 0.9%:

Այսպիսով, նկատելի է, որ բուսական ծագման արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը և ներմուծման ծավալն ընդհանուր առմամբ ունեցել են նվազման միտում: Դա բացատրվում է այդ ապրանքախմբով տեղական արտադրության կազմակերպմամբ և զարգացմամբ: Ի տարբերություն կենդանական ծագման արտադրանքի, բուսական ծագման արտադրանքի ներմուծման ծավալը 2002թ. համեմատ 2003թ. գրեթե նույնն է մնացել: Դա բացատրվում է նրանով, որ ընդհանուր պահանջարկի մեծացումն էական ազդեցություն չի ունեցել այդ ապրանքախմբի պահանջարկի վրա:

Պատրաստի սննդի արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը մինչև 1998թ. տատանվել է՝ ընդհանուր առմամբ ունենալով աճման միտում: 1998թ. պատրաստի սննդի արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը կազմել է 12.2%, որից հետո՝ սկսած 1999թ., այն ունեցել է նվազման միտում՝ 2003թ. կազմելով է 7.3%: Սակայն, եթե մենք դիտարկենք արժեքային առումով, ապա պատրաստի սննդի արտադրանքի ներմուծումը մինչև 1998թ. ունեցել է անընդհատ աճման միտում՝ կազմելով 108.5 մլն. դոլար: Հաջորդող երկու տարիներին նկատվել է պատրաստի սննդի արտադրանքի ներմուծման ծավալի զգալի կրճատում՝ 2000թ. կազմելով 1998թ. 64%-ը, որից հետո կրկին այս ապրանքախմբով նկատվել է անընդհատ աճման միտում՝ 2003թ. կազմելով 92.7 մլն. դոլար: 2001թ. համեմատ 2003թ. պատրաստի սննդի արտադրանքի ծավալն աճել է 21.1%-ով, իսկ 2002թ. համեմատ՝ 17.0%-ով: Այսպիսով, նկատելի է այն փաստն, որ պատրաստի սննդի արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը և ներմուծման ծավալը մինչև 1998թ. ունեցել են աճման միտում: Դա հիմնականում բացատրվում է այդ ապրանքախմբով տեղական պահանջարկի առկայությամբ և տեղական արտադրանքի ոչ բավարար քանակության առկայությամբ: 1999-2000թթ. պատրաստի սննդի արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը և ներմուծման ծավալը ձեռք է բերել նվազման միտում: Դա հիմնականում բացատրվում է այդ ապրանքախմբով տեղական արտադրության զարգացմամբ: Վերջին տարիներին պատրաստի սննդի արտադրանքի տեսակարար կշռի նվազումը հիմնականում բացատրվում է ընդհանուր ներմուծման ծավալների մեծացմամբ, իսկ ներմուծման ծավալի ավելացումն՝ ընդհանուր պահանջարկի մեծացմամբ:

Հանքահումքային արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը մինչև 1997թ. ունեցել է աճման միտում՝ կազմելով 23.5%, որից հետո՝ սկսած 1998թ., այն տատանվել է՝ ընդհանուր

առմամբ ունենալով նվազման միտում՝ 2003թ. կազմելով 13.9%: Հանքահումքային արտադրանքի ներմուծման ծավալներն՝ արժեքային առումով, մինչև 1997թ. անընդհատ աճել են՝ կազմելով 209.1 մլն. դոլար, որից հետո այն նորից տատանվել է՝ ընդհանուր առմամբ ունենալով նվազման միտում: 2003թ. հանքահումքային արտադրանքի ներմուծման ծավալը կազմել է 1997թ. 84.4%-ը: 2002թ. համեմատ 2003թ. այս ապրանքախմբով ներմուծման ծավալն աճել է 0.02%-ով՝ կազմելով 176.5 մլն. դոլար: Այսպիսով, մինչև 1997թ. հանքահումքային արտադրանքի տեսակարար կշռի մեծացումն ուղեկցվել է ներմուծման ծավալների աճով, որից հետո՝ մինչև 2002թ., այս ապրանքախմբով ներմուծման տեսակարար կշիռը և ներմուծման ծավալը տատանվել է՝ ձեռք բերելով նվազման միտում: Դա հիմնականում պայմանավորված է այդ ապրանքախմբի որոշ արտադրատեսակներով տեղական արտադրության կազմակերպմամբ և զարգացմամբ: Բուսական ծագման արտադրանքի ներմուծման ծավալի նման, հանքահումքային արտադրանքի ներմուծման ծավալը 2002թ. համեմատ 2003թ. գրեթե նույնն է մնացել:

Քիմիական արդյունաբերության արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը մինչև 1997թ. զգալի տեմպերով աճել է՝ կազմելով 9.5%, որից հետո այն ընդհուպ մինչև 2000թ. տատանվել է՝ վերջնական արդյունքում պահպանելով գրեթե նույն մակարդակը: 2000թ. քիմիական արդյունաբերության արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը կազմել է 9.3%: Սկսած 2001թ. քիմիական արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը ձեռք է բերել անընդհատ նվազման միտում՝ 2003թ. կազմելով 6.5%: Արժեքային առումով քիմիական արդյունաբերության արտադրանքի ներմուծման ծավալը մինչև 1997թ. ունեցել է անընդհատ աճման միտում՝ կազմելով 84.5 մլն. դոլար, որից հետո ընդհուպ մինչև 2002թ. ձեռք է բերել նվազման միտում՝ կազմելով 1997թ. ներմուծման ծավալի 70%-ը: Դա հիմնականում բացատրվում է այդ ապրանքախմբի որոշ արտադրատեսակներով տեղական արտադրության կազմակերպմամբ և զարգացմամբ: 2003թ. քիմիական արդյունաբերության արտադրանքի ներմուծման ծավալն աճել է կազմելով է 82.5 մլն. դոլար: 2001թ. համեմատ, 2003թ. քիմիական արդյունաբերության արտադրանքի ներմուծման ծավալն աճել է 28.1%-ով, իսկ 2002թ. համեմատ՝ 30%-ով: Այսպիսով, կարելի է ընդգծել, որ քիմիական արդյունաբերության արտադրանքի ներմուծման տեսակարար կշիռը և ներմուծման ծավալն՝ արժեքային առումով,

աճել են մինչև 1997թ., որից հետո ընդհուպ մինչև 2000թ. դրանք տատանվել են՝ վերջնական արդյունքում պահպանելով միևնույն մակարդակը: 2001-2002թթ. ներմուծման տեսակարար կշռի նվազումն ուղեկցվել է ներմուծման ծավալի՝ արժեքային առումով նվազմամբ: 2002թ. համեմատ 2003թ. զգալի աճել է քիմիական արտադրության արտադրանքի ներմուծման ծավալն, իսկ տեսակարար կշիռը գրեթե մնացել է անփոփոխ: Դա հիմնականում բացատրվում է ընդհանուր պահանջարկի մեծացմամբ, որն իր զգալի ազդեցությունն է ունեցել այդ ապրանքախմբով ներմուծման ծավալների վրա:

Մանածագործական իրերի ներմուծման տեսակարար կշիռը մինչև 2001թ. տատանվել է՝ ընդհանուր առմամբ ունենալով աճման միտում: 2001թ. մանածագործական իրերի ներմուծման տեսակարար կշիռը կազմել է 4.1%, որից հետո այն ձեռք է բերել անընդհատ նվազման միտում՝ 2003թ. կազմելով 3.1%: Արժեքային առումով մանածագործական իրերի ներմուծման ծավալը 2003թ. կազմել է 39.3 մլն. դոլար, որն ամենաբարձր ցուցանիշն է ուսումնասիրվող ամբողջ ժամանակաշրջանի համար: 2001թ. համեմատ 2003թ. ներմուծման ծավալն աճել է 10,1%-ով, իսկ 2002թ.՝ 16.6%-ով: Այսպիսով, չնայած մանածագործական իրերի ներմուծման տեսակարար կշիռը նվազել է, սակայն ներմուծման ծավալն՝ արժեքային առումով աճել է: Մանածագործական իրերի ներմուծման տեսակարար կշռի նվազումը հիմնականում պայմանավորված է ընդհանուր ներմուծման ծավալների մեծացմամբ:

Սարքեր և ապարատներ ապրանքախմբով ներմուծման տեսակարար կշիռն ընդհուպ մինչև 2001թ. ունեցել է աճման միտում՝ կազմելով 3.1%, որից հետո ձեռք է բերել անընդհատ նվազման միտում՝ 2003թ. կազմելով 2.6%: Արժեքային առումով սարքեր և ապարատներ ապրանքախմբով ներմուծման ծավալն ունեցել է աճման միտում՝ 2003թ. կազմելով 33.0 մլն. դոլար: 2001թ. համեմատ 2003թ. սարքեր և ապարատներ ապրանքախմբով ներմուծման ծավալն աճել է 22,6%-ով, իսկ 2002թ.՝ 58.6%-ով: Այսպիսով, չնայած սարքեր և ապարատներ ապրանքախմբով ներմուծման տեսակարար կշռի նվազմանն, այս ապրանքախմբով ներմուծման ծավալն՝ արժեքային առումով, զգալի աճել է: Դա, ինչպես արդեն բազմիցս նշվել է, բացատրվում է ընդհանուր ներմուծման ծավալների մեծացմամբ: Չնայած նրան, որ այս ապրանքախմբի որոշ արտադրատեսակներով զարգանում է տեղական արտադրությունն,

ընդհանուր պահանջարկի մեծացումն իր ազդեցությունն է թողել այս ապրանքախմբով ներմուծման ծավալների մեծացման վրա:

Մեքենաներ և սարքավորումներ ապրանքախմբով ներմուծման տեսակարար կշիռն ընդհուպ մինչև 1997թ. զգալի տեմպերով աճել է՝ կազմելով 11.4%, որից հետո այն տատանվել է՝ վերջնական արդյունքում պահպանելով գրեթե նույն մակարդակը: 2003թ. մեքենաներ և սարքավորումներ ապրանքախմբով ներմուծման տեսակարար կշիռը կազմել է 10.4%: Արժեքային առումով մեքենաներ և սարքավորումներ ապրանքախմբով ներմուծման ծավալն ընդհուպ մինչև 1997թ. անընդհատ աճել է՝ կազմելով 101.5 մլն. դոլար: 2003թ. այս ապրանքախմբով ներմուծման ծավալները զգալի ավելացել են՝ կազմելով 132.1 մլն. դոլար: 2001թ. համեմատ 2003թ. մեքենաներ և սարքավորումներ ապրանքախմբով ներմուծման ծավալն աճել է մոտ 2.5 անգամ, իսկ 2002թ. համեմատ՝ 27.1%-ով: Դա հիմնականում բացատրվում է այդ ապրանքախմբով պահանջարկի մեծացմամբ և տեղական արտադրության ոչ բավարար քանակության առկայությամբ:

Այսպիսով, վերլուծելով արտաքին առևտրի ներմուծման ապրանքային կառուցվածքը, կարելի է եզրահանգել, որ.

- պատրաստի սննդի, բուսական և կենդանական ծագման, հանքահումքային արտադրանքի ներմուծման տեսակարար կշռի և ներմուծման ծավալի՝ արժեքային առումով նվազումը պայմանավորված է այդ ապրանքախմբերով տեղական արտադրության կազմակերպմամբ և զարգացմամբ,
- վերջին տարիներին նշված ապրանքախմբերով ներմուծման տեսակարար կշիռների նվազումը և ներմուծման ծավալների՝ արժեքային առումով, մեծացումը պայմանավորված է ընդհանուր ներմուծման ծավալների մեծացմամբ, որն էլ իր հերթին պայմանավորված է ամբողջական պահանջարկի դրական շոկով[1]

Արտահանում: ՀՀ արտաքին առևտրի արտահանման կառուցվածքում 1993-2003թ. մեծ տեսակարար կշիռներ են գրանցել հետևյալ ապրանքախմբերը՝ պատրաստի սննդի

[1] ՀՀ տնտեսության ամբողջական պահանջարկի շոկերի մասին ավելի մանրամասն պատկերացում կազմելու համար տես՝ Ա. Առաքելյան, Գ. Հայրապետյան «ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը մինչև ԱՀԿ անդամակցությունը և դրանից հետո», ԱՀԿ անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա, էջ 143, Երևան 2004

արտադրանք, հանքահումքային արտադրանք, մանածագործական իրեր, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր, պլաստմասսա և դրանից պատրաստված իրեր, քիմիական արդյունաբերության արտադրանք, մեքենաներ և սարքավորումներ, սարքեր ու ապարատներ (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.2-2): Վերը նշված ապրանքախմբերի արտահանման տեսակարար կշիռների փոփոխություններն ուսումնասիրելու նպատակով դիտարկենք Գծապատկեր 2.2-2-ը

Գծապատկեր 2.2-2



Ապրանքախմբերի արտահանման տեսակարար կշիռները 1993-2003թթ.

Ինչպես վկայում են Գծապատկեր 2.2-2-ի տվյալները, պատրաստի սննդի արտադրանքի արտահանման տեսակարար կշիռն ամբողջ ժամանակաշրջանում տատանվել է՝ 2003թ. կազմելով 10.6%: Սկսած 2001թ., որտեղ պատրաստի սննդի արտադրանքի արտահանման տեսակարար կշիռը կազմել է 14.0%, այս ապրանքախմբով արտահանման տեսակարար կշիռն անընդհատ նվազել է: Հակառակ դրան, արժեքային առումով այս ապրանքախմբով արտահանման ծավալները սկսած 2001թ. անընդհատ աճել են՝ 2003թ. կազմելով 72.0 մլն. դոլար: 2001թ. համեմատ 2003թ. պատրաստի սննդի արտահանման ծավալն աճել է 51.4%-ով, իսկ 2002թ. համեմատ՝ 23.6%-ով: Այսպիսով, ակնհայտ է, որ չնայած պատրաստի սննդի արտահանման տեսակարար կշռի նվազմանն, այս ապրանքախմբով արտահանման ծավալն՝

արժեքային առումով, աճել է : Վերջին տարիներին պատրաստի սննդի արտադրանքի արտահանման տեսակարար կշռի նվազումը հիմնականում պայմանավորված է ընդհանուր արտահանման ծավալի մեծացմամբ, իսկ արտահանման ծավալի՝ արժեքային առումով, մեծացումը պայմանավորված է այս ապրանքախմբով տեղական արտադրության կազմակերպմամբ և զարգացմամբ:

Հանքահումքային արտադրանքի արտահանման տեսակարար կշիռը մինչև 1995թ. զգալի տեմպերով աճել է՝ կազմելով 10.6%, որից հետո մինչև 1998թ. տատանվել է՝ վերջնական արդյունքում պահպանելով նույն մակարդակը: 1998թ. հանքահումքային արտադրանքի արտահանման տեսակարար կշիռը կազմել է 10.1%: 1999թ. այս ապրանքախմբի արտահանման տեսակարար կշռով նկատվել է զգալի աճ՝ կազմելով 16.8%, որից հետո հանքահումքային արտադրանքի արտահանման տեսակարար կշիռը ձեռք է բերել անընդհատ նվազման միտում՝ 2003թ. կազմելով 7.0%: Արժեքային առումով այս ապրանքախմբով արտահանման ծավալներն անընդհատ աճել են սկսած 2000թ.: 2003թ. հանքահումքային արտադրանքի արտահանման ծավալը կազմել է 47.6 մլն. դոլար: 2001թ. համեմատ 2003թ. այս ապրանքախմբով արտահանումն աճել է 42.1%-ով, իսկ 2002թ.՝ 6.2%-ով: Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ չնայած հանքահումքային արտադրանքի արտահանման տեսակարար կշռի նվազմանն, այս ապրանքախմբով արտահանման ծավալն՝ արժեքային առումով, աճել է: Այս երևույթը, պատրաստի սննդի արտադրանքի նման, նույնպես պայմանավորված է ընդհանուր արտահանման ծավալների մեծացմամբ և այս ապրանքախմբով տեղական արտադրության կազմակերպմամբ և զարգացմամբ: Հայաստանը կարող է մեծ հաջողությունների հասնել բենտոնիտի, դիատոմիտի (հինգ հանքավայր), պեռլիտի և ցեոլիտի արտադրության և արտահանման տնտեսական գործունեության ոլորտներում: Դիատոմիտն օգտագործվում է ինսուլինի, մրգահյութի, գինու, գարեջրի և այլ ոգելից ու ոչ ոգելից խմիչքների զտման ու գունաթափման ժամանակ: Քիմիական արդյունաբերության մեջ դիատոմիտները կիրառվում են որպես կլանիչներ: Ջերմամեկուսիչ բետոնների, ռետինատեխնիկական իրերի, պլաստմասսաների արտադրության մեջ պեռլիտն օգտագործվում է որպես լցանյութ, իսկ քիմիական արդյունաբերության մեջ պեռլիտը կիրառվում է որպես զտիչ նյութ: Պեռլիտը լայն

կիրառում ունի նաև կերամիկայի և ապակու արտադրություններում, ինչպես նաև մաքրիչ փոշիների, հղկանյութերի և այլ կենցաղային իրերի արտադրության մեջ:

Քիմիական արդյունաբերության արտադրանքի արտահանման տեսակարար կշիռն ընդհուպ մինչև 1998թ. տատանվել է՝ վերջնական արդյունքում զգալի նավազելով: 1998թ. քիմիական արդյունաբերության արտադրանքի արտահանման տեսակարար կշիռը կազմել է 1%: 1999թ. սկսած մինչև 2003թ. այս ապրանքախմբով արտահանման տեսակարար կշիռը նվազել է՝ կազմելով 0.4%: Արժեքային առումով քիմիական արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1995թ.՝ 14.6 մլն. դոլար, իսկ մնացած տարիներին այն 5,5 մլն. դոլարից չի անցել: 2003թ. քիմիական արդյունաբերության արտահանման ծավալը կազմել է 2.7 մլն. դոլար, որը 2002թ. համեմատ աճել է 28.5%-ով: Այսպիսով, ընդհանուր առմամբ քիմիական արդյունաբերության արտադրանքի արտահանման տեսակարար կշռի նվազումն ուղեկցվել է արտահանման ծավալի՝ արժեքային առումով, նվազմամբ: Դա հիմնականում պայմանավորված է այդ ապրանքախմբով տեղական արտադրության կազմակերպման որոշ դժվարություններով: Քիմիական արդյունաբերության տնտեսական գործունեության ոլորտում արտահանման ընդլայնման հնարավորությունների առումով կարևոր է 3 խոշոր՝ «Նաիրիտ-1» ՓԲ, Վանաձորի «Պրոմեթեյ-Քիմպրոմ» ՓԲ և «Դողա-գործ-1» ԲԲ ընկերությունների գործունեությունը: 2002թ. պայմանագիր է կնքվել «Նաիրիտ-1» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը սեփականության իրավունքով «Ռանսատ ՊԼՍ» ընկերությանը փոխանցելու մասին: «Նաիրիտ-1» ՓԲ ընկերությունը 2002թ. հունիսից վերսկսել է ացետիլենային եղանակով քլորոպրենային կաուչուկների արտադրությունը՝ տարեկան մոտ 10 հազ. տոննա հզորությամբ: 2003թ. հունվարի 1-ի դրությամբ արտադրվել է 3.0 հազ. տոննա կաուչուկ: Արտադրանքը հիմնականում արտահանվում է ԱՊՀ երկրներ, մասնավորապես՝ Ռուսաստան:

Մանածագործական իրերի արտահանման տեսակարար կշիռը մինչև 2001թ. տատանվել է՝ 2000թ. կազմելով 4.4%: 2001թ. այս ապրանքախմբի արտահանման տեսակարար կշռով նկատվել է զգալի աճ՝ կազմելով 7.1%, որից հետո այն ձեռք է բերել նվազման միտում՝ 2003թ. կազմելով 4.5%: Արժեքային առումով մանածագործական իրերի արտահանման ծավալը 2001թ. կազմել է 24.1 մլն. դոլար, որը նախորդ տարվա համեմատ աճել է 88.2%-ով: 2001թ.

համեմատ մանածագործական իրերի արտահանման ծավալը 2003թ. աճել է 26.9%, իսկ 2002թ. համեմատ նվազել է 0.6%-ով: Այսպիսով, նկատելի է այն փաստն, որ չնայած 2001թ. սկսած մանածագործական իրերի արտահանման տեսակարար կշիռը նվազել է, սակայն արժեքային առումով այս ապրանքախմբով արտահանման ծավալն աճել է: Դա պայմանավորված է վերջին տարիներին այս ապրանքախմբով տեղական արտադրության կազմակերպմամբ և զարգացմամբ:

Մեքենաներ և սարքավորումներ ապրանքախմբով արտահանման տեսակարար կշիռը ընդհուպ մինչև 2001թ. տատանվել է՝ կազմելով 12.7%, որից հետո ձեռք է բերել անընդհատ նվազման միտում՝ 2003թ. կազմելով 3.0%: Արժեքային առումով մեքենաներ և սարքավորումներ ապրանքախմբով արտահանման ծավալը մինչև 1995թ. ունեցել է աճման միտում՝ կազմելով 37.4 մլն. դոլար: Այս ապրանքախմբով արտահանման ծավալի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2001թ.՝ կազմելով 43.2 մլն. դոլար: 2003թ. մեքենաներ և սարքավորումներ ապրանքախմբով արտահանման ծավալը կազմել է 20.4 մլն. դոլար, որը կազմել է 2001թ. արտահանման ծավալի 47.3%-ը, իսկ 2002թ.՝ 89.8%-ը: Այսպիսով, քիմիական արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալի նման, մեքենաներ և սարքավորումներ ապրանքախմբով արտահանման տեսակարար կշռի նվազումն ուղեկցվել է արտահանման ծավալի՝ արժեքային առումով, նվազմամբ: Ավելին, քիմիական արդյունաբերության արտադրանքի նման այս ապրանքախմբով տեղական արտադրության կազմակերպումը և զարգացումը պայմանավորված է մի շարք դժվարություններով:

Սարքեր և ապարատներ ապրանքախմբով արտահանման տեսակարար կշիռն ընդհուպ մինչև 2000թ. տատանվել է՝ ընդհանուր առմամբ ունենալով նվազման միտում: 2000թ. սարքեր և ապարատներ ապրանքախմբով արտահանման տեսակարար կշիռը կազմել է 0.8%: 2001թ. սկսած այս ապրանքախմբի արտահանման տեսակարար կշռով նկատվել է աճման միտում՝ 2003թ. կազմելով 4.2%: Արժեքային առումով՝ մինչև 2001թ. ընկած ժամանակաշրջանում, սարքեր և ապարատներ ապրանքախմբով արտահանման ծավալը չի գերազանցել 4.8 մլն. դոլարը: 2003թ. սարքեր և ապարատներ ապրանքախմբով արտահանման ծավալը կազմել է 28.6 մլն. դոլար, որը 2001թ. համեմատ աճել է մոտ երկու անգամ, իսկ 2002թ. համեմատ աճել է 39.5%-ով: Այսպիսով, ակնհայտ է, որ սարքեր և ապարատներ ապրանքախմբով արտահանման

տեսակարար կշռի մեծացումն ուղեկցվել է արտահանման ծավալների՝ արժեքային առումով, մեծացմամբ: Դա նույնպես պայմանավորված է վերջին տարիներին այս ապրանքախմբով տեղական արտադրության կազմակերպմամբ և զարգացմամբ:

Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր ապրանքախմբով արտահանման տեսակարար կշիռը տատանվել է, սակայն վերջնական արդյունքում այն ձեռք է բերել արտահանվող ապրանքախմբերի մեջ ամենամեծ տեսակարար կշիռը՝ 2003թ. կազմելով 51.5% (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.2-2): Արժեքային առումով այս ապրանքախմբով արտահանման ծավալն ընդհուպ մինչև 1996թ. ունեցել է անընդհատ աճման միտում՝ կազմելով 140.1 մլն դոլար: 1997թ. այս ապրանքախմբով արտահանման ծավալը կտրուկ կրճատվել է՝ կազմելով 1997թ. 38.9%-ը: Այնուհետև, սկսած 1998թ. այս ապրանքախմբով նկատվել է արտահանման ծավալների անընդհատ աճ՝ 2003թ. կազմելով 330.2 մլն դոլար: Այս ապրանքախմբով արտահանման հետագա ծավալների աճն ապահովված է, քանի որ 2002թ. ապրիլի 5-ին Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվեց համաձայնագիր, համաձայն որի սահմանվեցին 2002 - 2006 թթ. Հայաստանի Հանրապետություն ներկրվող բնական ալմաստների ծավալները՝ 400 հազ. կարատ ոսկերչական նշանակության և 400 հազ. կարատ տեխնիկական նշանակության բնական ալմաստ:

Ամբողջ արտահանման կազմում մեծ տեսակարար կշիռ ունեցող թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր (51.5%), ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր (13.3%) ապրանքախմբերն ապահովում են ամբողջ արտահանման 64.8%-ը: Ընդ որում, միայն թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր ապրանքախումբն ապահովում է ամբողջ արտահանման կեսից ավելին:

Այսպիսով, վերլուծելով արտաքին առևտրի արտահանման ապրանքային կառուցվածքը, կարելի է եզրահանգել, որ.

- մեքենաներ և սարքավորումների, քիմիական արդյունաբերության արտադրանքի արտահանման տեսակարար կշիռների և արտահանման ծավալների՝ արժեքային առումով,

նվազումը պայմանավորված է այդ տնտեսական գործունեության ոլորտներում առկա մի շարք խնդիրներով,

- վերջին տարիներին որոշ ապրանքախմբերով արտահանման տեսակարար կշիռների նվազումը և արտահանման ծավալների՝ արժեքային առումով, մեծացումը պայմանավորված է ընդհանուր արտահանման ծավալների մեծացմամբ, որն էլ իր հերթին պայմանավորված է ամբողջական առաջարկի դրական շոկով[1]:

Այդ պատճառով, անհապաղ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ, բարելավելու ՀՀ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը, մասնավորապես՝ ընդլայնել արտահանման անվանացանկը: Ներմուծման ծավալների անընդհատ մեծացման և արտահանման այդպիսի խիստ սահմանափակ կառուցվածքի պայմաններում անհապաղ անհրաժեշտ է խթանել արտահանման ներուժ ունեցող տնտեսական գործունեության ոլորտների ու ներմուծումը փոխարինող արտադրությունների զարգացումը:

Ելնելով աշխատանքում կատարված վերլուծություններից ու ստացված արդյունքներից՝ առաջարկվում են արտահանման ներուժ ունեցող և ներմուծումը փոխարինող տնտեսական գործունեության հետևյալ ոլորտները.

- թեթև արդյունաբերություն,
- գյուղատնտեսական ապրանքների վերամշակող արտադրություն,
- սննդի արտադրություն,
- հանքահումքային արդյունաբերություն,
- քիմիական արդյունաբերություն:

[1] ՀՀ տնտեսության ամբողջական առաջարկի շոկերի մասին ավելի մանրամասն պատկերացում կազմելու համար տես՝ Ա. Առաքելյան, Գ. Հայրապետյան «ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը մինչև ԱՀԿ անդամակցությունը և դրանից հետո», ԱՀԿ անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա, էջ 144, Երևան 2004

2.3 Առևտրային հաշվեկշռի տարածքային տեղաբաշխման կառուցվածքը և դրա ընդլայնման հնարավորությունները

ՀՀ առևտրային հաշվեկշռի պակասուրդն ավելի մանրամասն դիտարկելու նպատակով անհրաժեշտ է քննարկել դրա տարածքային տեղաբաշխումն, որի համար հարկ է առանձնացնել արտահանման և ներմուծման բաժիններն ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ և ըստ դրա կատարել համեմատություններ: Այստեղ քննարկվելու է ՀՀ արտաքին առևտուրն այն երկրների կամ երկրների խմբերի հետ, որտեղ ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ ներմուծման և արտահանման բաժինները համեմատական առումով շատ փոքր չեն:

Ներմուծում: Ինչպես վկայում են Հավելված, Աղյուսակ 2.3-1-ի տվյալները, 1993թ. ՀՀ ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ ներմուծման ծավալներով բավական մեծ տեսակարար կշիռ էին զբաղեցնում ԱՊՀ երկրները՝ 66.2%, այնուհետև ԵՄ երկրները՝ 14.0, ԱՄՆ՝ 10.6 և Իրանը՝ 6.2%: ԱՊՀ երկրներից ներմուծման մեջ տեսակարար կշռով առաջին տեղում էր Ռուսաստանը՝ 30.6%, այնուհետև Թուրքմենստանը՝ 25.2, Վրաստանը՝ 7.7%: ԵՄ երկրներից ընդհանուր ներմուծման մեջ տեսակարար կշռով առաջին տեղում էր Իտալիան՝ 12.2, այնուհետև Բելգիան՝1.1%:

Գծապատկեր 2.3-1



ԱՊՀ և ԵՄ երկրներից ներմուծման ծավալների դինամիկան 1993-2003թթ. (մլն. դոլար)

ԱՊՀ և ԵՄ երկրներից ներմուծման ծավալների դինամիկան ուսումնասիրելու նպատակով դիտարկենք Գծապատկեր 2.3-1-ը: Գծապատկեր 2.3-1-ից, որը հիմնված է Հավելված, Աղյուսակ 2.3-2-ի տվյալների վրա, պարզ կարելի է հետևել, որ ՀՀ ներմուծման

ընդհանուր ծավալն՝ արժեքային առումով, 1993թ. սկսած մինչև 1998թ. ներառյալ անընդհատ աճման միտում է ունեցել՝ կազմելով 895.7 մլն. դոլար: Այնուհետև 1998-2001թթ. ընկած ժամանակահատվածում ներմուծման դինամիկան տատանվել է, իսկ 2001-2003թթ. ընկած ժամանակահատվածում նորից զգալի տեմպերով սկսել է աճել: 2003թ. ՀՀ ընդհանուր ներմուծման ծավալը 1998թ. համեմատ աճել է 41.7%-ով՝ կազմելով 1269.4 մլն. դոլար: Վերլուծելով ՀՀ ընդհանուր ներմուծման դինամիկան կարելի է առանձնացնել 3 փուլ.

- 1993-1996թթ., որտեղ նկատելիորեն մեծացել են ներմուծման ծավալները,
- 1996-2001թթ., որտեղ բացառությամբ 1999թ. նկատվել է ներմուծման ծավալների գրեթե հաստատուն մակարդակ,
- 2001-2003թթ., որտեղ նորից զգալիորեն մեծացել են ներմուծման ծավալները:

ԵՄ երկրներից ներմուծումը 1993թ. սկսած մինչև ընդհուպ 1998թ. մեծ տեմպերով անընդհատ աճել է՝ կազմելով 259.4 մլն. դոլար: 1998-2003թթ. ընկած ժամանակահատվածում այն տատանվել է, սակայն ընդհանուր առմամբ ներմուծման դինամիկան ունեցել է աճման միտում: 2003թ. ԵՄ երկրներից ներմուծման ծավալը 1998թ. համեմատ աճել է 43.5 %-ով՝ կազմելով 372.4 մլն. դոլար: Ինչպես վկայում են Հավելված, Աղյուսակ 2.3-2-ի տվյալները, ԵՄ երկրներից ներմուծման ծավալների տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ներմուծման մեջ սկսած 1994թ. մինչև 2000թ. ներառյալ աճել է՝ կազմելով 34.2%: Այնուհետև հաջորդող երկու տարիներին այն նվազել է՝ կազմելով 25.8%, իսկ 2003թ. կազմել է 29.3%:

ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալները 1993-1955թթ. ընկած ժամանակաշրջանում անընդհատ աճել են՝ 1995թ. կազմելով 328.5 մլն. դոլար: 1997-2000թթ. ընթացքում ԱՊՀ երկրներից ներմուծումը մեծ տեմպերով անընդհատ անկում է ապրել: 2000թ. 1995թ. համեմատ այն կրճատվել է 48.8%-ով՝ կազմելով 168.3 մլն. դոլար: 2001-2003թթ. այն կրկին ձեռք է բերել աճի միտում: 2003թ. այն կազմել է 1995թ. արժեքի 94%-ը՝ կազմելով 309.7 մլն. դոլար: Այսպիսով սկզբնական շրջանում՝ 1993-1997թթ., ՀՀ ընդհանուր ներմուծման մեջ բավական մեծ տեղ է գրավել ԱՊՀ երկրներից ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը և հակառակ դրան բավական փոքր է եղել ԵՄ երկրներից ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը: Սակայն, դրությունը փոխվեց 1997-2000թթ. ընկած ժամանակաշրջանում, երբ ԱՊՀ երկրներից

ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը զգալի նվազեց և հակառակ դրան, զգալի աճեց ԵՄ երկրներից ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.3-2):

2003թ. ԵՄ երկրներից ներմուծման ծավալների աճը հիմնականում ապահովել են հետևյալ երկրները՝ Բելգիա 10.2%, Մեծ Բրիտանիա 4.5, Իտալիա 3.1, Գերմանիա 3.4, Հունաստան 2.4, Ֆրանսիա 1.4%: Նկատելի է, որ 1993թ. համեմատ ԵՄ երկրներից ներմուծումը ընդլայնվել է՝ ընդգրկելով նոր երկրներ: 2003թ. 1993թ. համեմատ զգալի նվազել է Իտալիայից ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը և հակառակ դրան զգալի աճել է Բելգիայից ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը: Այստեղ հարկ է նշել, որ Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Հունաստանից և Ֆրանսիայից ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը 1993թ. չէր գերազանցում 0.4%-ը:

2003թ. ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալների աճը հիմնականում ապահովել են հետևյալ երկրները՝ Ռուսաստան 16.4%, Ուկրաինա 3.5 և Վրաստան 3.0%: Այստեղ հարկ է նշել, որ Թուրքմենստանից ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը 2003թ. կազմել է 0.6%, այն դեպքում, երբ 1993թ. այն կազմում էր 25.2%:

2003թ. 1993թ. համեմատ զգալի մեծացել է Շվեյցարիայից, Թուրքիայից, ԱՄԷ-ից, Իսրայելից ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռները, հակառակ դրան կրճատվել է ԱՄՆ-ից, Իրանից ներմուծվող ապրանքներինը:

Արտահանում:1993թ. ՀՀ ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ արտահանման ծավալներով բավական մեծ տեսակարար կշիռ են ունեցել ԱՊՀ երկրները՝ 81.2%, ԵՄ երկրները՝ 10.6%, Իրանը 3.5% (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.3-3): ԱՊՀ երկրներ արտահանման մեջ տեսակարար կշռով առաջին տեղում էր Ռուսաստանը՝ 37.5%, Թուրքմենստանը՝ 36.5, Ուկրաինան՝ 2.6, Վրաստանը՝ 2.0, Բելառուսը՝ 1.2%: ԵՄ երկրներ արտահանման մեջ տեսակարար կշռով առաջին տեղում էր Բելգիան՝ 9.5%, այնուհետև Ֆրանսիան՝ 0.7 և Գերմանիան՝ 0.2%:

ԱՊՀ և ԵՄ երկրներ արտահանման ծավալների դինամիկան ուսումնասիրելու նպատակով դիտարկենք Գծապատկեր 2.3-2-ը:

Գծապատկեր 2.3-2



ԱՊՀ և ԵՄ երկրներ արտահանման ծավալների դինամիկան 1993-2002թթ. (մլն. դոլար)

Գծապատկեր 2.3-2-ն, որը կառուցվել է հիմնվելով Հավելված, Աղյուսակ 2.3-4-ի տվյալների վրա, փաստում է, որ 1993թ. սկսած մինչև 2000թ. ներառյալ ՀՀ արտահանման ծավալների զգալի մեծացում չի նկատվել: Ավելին, այն տատանվել է 200-300 մլն. դոլարի սահմաններում: Սակայն, 2002թ. և 2003թ. նկատվել է արտահանման ծավալների կտրուկ բարձրացում: Այսպիսով եթե փորձենք բնութագրել ՀՀ արտահանման դինամիկան, ապա այն անցել է երկու փուլ.

- 1994-2000թթ., որտեղ արտահանման ծավալները տատանվել են 200-300 մլն. դոլարի սահմաններում,
- 2001-2003թթ., որտեղ նկատվել է արտահանման ծավալների կտրուկ աճ

ԱՊՀ երկրներ արտահանումը սկզբնական շրջանում՝ 1993-1995թթ., աճել է՝ կազմելով 159.4 մլն. դոլար, որը 1993թ. համեմատ աճել է 24.3%-ով: Այնուհետև, 1996թ. սկսած մինչև ընդհուպ 1999թ. ԱՊՀ երկրներ արտահանումը զգալի տեմպերով նվազել է՝ կազմելով 57.8 մլն. դոլար, որը կազմում էր 1993թ. ԱՊՀ երկրներ արտահանման ծավալի 45.5%-ը: Սկսած 2000թ. ԱՊՀ երկրներ արտահանման մեջ նկատվեց զգալի աշխուժություն: Արդյունքում, 2003թ. ԱՊՀ երկրներ արտահանման ծավալը հավասարվեց 1993թ. մակարդակին՝ կազմելով 126.7 մլն. դոլար: Այսպես, օրինակ «Արմենալ» ՓԲԸ, որի բաժնեմասերի 100% այսօր արդեն պատկանում

են «Ռուսկի ալյումինիի» բազմազգ ընկերությանն, իր թողարկած արտադրանքի ոչ մի մասը չի իրացնում ԱՊՀ երկրների շուկաներում[1]: Դա բացատրվում է նրանով, որ այդ ընկերության տնօրինությունը գտնում է , որ եվրոպական շուկան և տրանսպորտի առումով և արտադրանքի իրացման արագությամբ շատ ավելի շահավետ է: Ընկերության արտադրանքի 75% իրացվում է Եվրոպայում, 10-15% Մերձավոր Արևելքում, մնացածն՝ ԱՄՆ-ում և Կանադայում: Ըստ ընկերության ներկայացրած տվյալների, նրանք հասել են նրան, որ տրանսպորտային ծախսերը Հայաստանից Եվրոպա համարժեք է Ռուսաստանից Եվրոպա տեղափոխման գներին և տրանսպորտային այդ ծախսերը բացասաբար չեն անդրադառնում ընկերության արտադրության վրա:

ԵՄ երկրներ արտահանումը 1993թ. կազմել է 16.5 մլն. դոլար: Այնուհետև սկսած 1994թ. ընդհուպ մինչև 2003թ.՝ բացառությամբ 2001թ., ԵՄ երկրներ արտահանումը զգալի տեմպերով անընդհատ աճել է: 2003թ. ԵՄ երկրներ արտահանումը կազմել է 258.6 մլն. դոլար, որը 1993թ. համեմատ ավելացել է մոտ 15 անգամ:

Այստեղ հարկ է նշել, որ ՀՀ արտաքին առևտրում 1993-2001թթ. ընկած ժամանակահատվածում գոյություն է ունեցել մի շատ հետաքրքիր երևույթ: ՀՀ արտահանումը և ներմուծումն ԱՊՀ և ԵՄ երկրների հետ պարուրաձև է ընթացել: Այսինքն, երբ աճել/նվազել է արտահանումը/ներմուծումը ԱՊՀ երկրների հետ նվազել/աճել է արտահանումը/ներմուծումը ԵՄ երկրների հետ (Տես՝ Գծապատկեր 2.3-1 և Գծապատկեր 2.3-2): Սակայն, սկսած 2001թ. ԱՊՀ և ԵՄ երկրների հետ և՛ արտահանումը, և՛ ներմուծումը սկսել է աճել միաժամանակ միևնույն ուղղությամբ:

Տնտեսագետների մեծ մասը 2003թ. արտահանման ծավալների աճը կապում են ԱՀԿ անդամակցության հետ: Իհարկե ԱՀԿ անդամակցությունը ստեղծում է արտահանման ավելացման համար նպաստավոր պայմաններ, սակայն նրանք ներմուծման ավելացման վրա կարծես թե ուշադրություն չեն դարձնում, կամ անտեսում են 2003թ. ներմուծման զգալի ծավալը : Արտահանման ծավալների մեծացումը բացատրվում է նրանով, որ ապրանքների իրացման համար ԱՀԿ ստեղծեց պայմաններ՝ ընդգրկելով նոր շուկաներ ավելի բարենպաստ պայմաններով, և արդյունքում գրանցվեց արտահանման ծավալների աճ: Ինչպես բացահայտվեց

[1]Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N1(21), էջ 16-17, Երևան 2003

աշխատանքում կատարված վերլուծություններից, ՀՀ արտահանման ծավալը սկսել է զգալի տեմպերով աճել սկսած 2001թ.: Ավելին, արժեքային առումով ամբողջ արտահանման ծավալի 64.8% բաժին է ընկնում թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և ոչ թանկարժեք մետաղներ ապրանքախմբերին:

Այս ամենը փաստում են, որ ազատ առևտուրն որպես այդպիսին Հայաստանի դեպքում ներկա անցումային փուլում իր արդյունքն է տալիս բավական երկար ժամանակահատված հետո: Այդ պատճառով շատ կարևոր է պետության ակտիվ միջամտությունը տնտեսության մեջ, որը կկրճատի այդ ժամանակահատվածը, կամ ավելին, եթե այն տևի նույնքան, կստացվի ավելի մեծ արդյունք՝ արտահանման ծավալների մեծացման ավելի մեծ տեմպեր:

Արտաքին առևտուրը հարևան երկրների հետ: Աշատանքում դիտարկվում է Հայաստանի արտաքին առևտուրը և դրա փոփոխման դինամիկան հարևան, մասնավորապես՝ Թուրքիայի, Իրանի, Վրաստանի և ԱՊՀ հիմնական գործընկեր երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի հետ մինչև ԱՀԿ անդամակցությունը և բացահայտվում է՝ դրանից հետո նշված երկրների հետ այդ առևտուրը կրել է որևէ փոփոխություններ, թե ոչ: Այստեղ հատկապես կարևորվում է հարևան երկրների հետ ՀՀ արտաքին առևտրի ուսումնասիրությունը և դրա հետագա զարգացումը, քանի որ այն մեծապես կօգնի տարածաշրջանային մի շարք խնդիրների լուծմանը: Մասնավորապես, հարևան երկրների հետ առևտրատնտեսական կապերի հետագա զարգացումը կարող է հանգեցնել նոր տարածաշրջանային միավորման առաջացման՝ ամրացնելով ու մեծացնելով յուրաքանչյուր երկրի դերը և տեղը համաշխարհային տնտեսության մեջ: ԱՊՀ երկրների հետ առևտրային համակարգի ուսումնասիրությունը և դրա հետագա զարգացումը կապված է այն հանգամանքի հետ, որ նախկին Խորհրդային Միության տնտեսությունը եղել է փոխկապակցված և այդ կապերի չնչին վերականգնումը կարող է ապահովել զգալի օգուտներ:

Իրանի, Թուրքիայի և Վրաստանի հետ արտաքին ապրանքաշրջանառությունն ուսումնասիրելու նպատակով դիտարկենք Գծապատկեր 2.3-3-ը: Ինչպես փաստում են Գծապատկեր 2.3-3-ի տվյալներն, ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալներով առաջին տեղում է Իրանը՝ 2003թ. 89.0 մլն. դոլար, երկրորդ տեղում՝ Վրաստանը՝ 54.1 և երրորդ տեղում Թուրքիան՝ 2003թ. 39.1 մլն. դոլար: 1998թ.-ից հետո նշված երկրների հետ արտաքին

ապրանքաշրջանառության մեջ կտրուկ փոփոխություններ չեն նկատվել, հակառակ դրան 1995-1998թթ. նշված երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառությունը կրել է կտրուկ փոփոխություններ:

Գծապատկեր 2.3-3



Արտաքին ապրանքաշրջանառությունն Իրանի, Թուրքիայի և Վրաստանի հետ 1995-2003թթ. (մլն. դոլար)

Այժմ նույն հաջորդականությամբ ավելի մանրամասն դիտարկենք Հայաստանի արտաքին առևտուրն նշված երկրների հետ: Այսպես, Հայաստանի արտաքին առևտուրն **Իրանի** հետ վերջին տարիներին ունեցել է նվազման միտում: Նշված ժամանակաշրջանում՝ 1995-2002թթ., ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1996թ.՝ 193.7 մլն. դոլար, որտեղ արտահանումը կազմել է 43.9 , իսկ ներմուծումը՝ 149.9 մլն. դոլար (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.3-5): Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ նվազման միտումը նկատվել է սկսած 1997թ., սակայն այդ նվազման մեջ կարելի է ընգծել մեկ առանձնահատկություն՝ արտահանման միջին արժեքը կազմել է 37.1 մլն. դոլար[1], իսկ նվազման հիմնական պատճառը ներմուծվող ապրանքների ծավալների կրճատումն է: Ներմուծվող ապրանքների ծավալների կրճատումը հիմնականում բացատրվում է ապրանքների որակական ցուցանիշով և մի շարք ապրանքախմբերով՝ հիմնականում սննդամթերքի, տեղական արտադրության կազմակերպմամբ և զարգացմամբ: 1998-2002թթ. ընկած ժամանակաշրջանում Իրանի հետ ընդհանուր ապրանքաշրջանառությունը միջին

[1]Արտահանման միջին արժեքը հաշված է 1997-2002թթ կտրվածքով:

առումով կազմել է 104.6 մլն. դոլար: ԱՀԿ անդամակցությունից հետո՝ 2003թ., Հայաստանի ընդհանուր ապրանքաշրջանառությունն Իրանի հետ կազմել է 89.0 մլն. դոլար, որտեղ արտահանումը կազմել է 22.2, իսկ ներմուծումը՝ 66.8 մլն. դոլար: 2002թ. համեմատ 2003թ. արտահանումը նվազել է մոտ 28.6, իսկ ներմուծումն աճել է 7%-ով: 1995թ. Իրանի, Թուրքմենստանի և Հայաստանի կառավարությունների միջև կնքվեց առևտրատնտեսական համագործակցությունը զարգացնելու նպատակով պայմանագիր[1]: Այն ուժի մեջ մտավ 1997թ. և նպատակն էր երեք երկրների միջև զարգացնել և ամրապնդել առևտրատնտեսական կապերը, մասնավորապես՝ զարգացնել Հայաստանից Իրան ապրանքների և ծառայությունների մատակարարումն իրականացնելու հնարավորություններն, ինչպես նաև Թուրքմենստանի և Հայաստանի միջև բնական գազի և էներգակիրների փոխանցումը: Ավելին, կողմերը պարտավորվում էին յուրաքանչյուր մյուս կողմի համար սահմանել այնպիսի մաքսային տուրքեր և հարկեր, որոնք չեն գերազանցում այլ երկրների նմանատիպ արտադրանքի նկատմամբ կիրառվող մաքսային տուրքերի և հարկերի չափերը: Սակայն, հարկ է նշել, որ այս պայմանագիրն որևէ էական ազդեցություն չթողեց Իրանի հետ արտաքին ապրանքաշրջանառության զարգացման գործընթացում: Ավելին, հենց 1997թ. Իրանի հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը 1996թ. համեմատ նվազել է 32.2%՝ կազմելով 131.3 մլն. դոլար: Այսպիսով, վերը նշվածից հետևում է, որ Հայաստանի ԱՀԿ անդամակցությունից հետո ընդհանուր առմամբ Իրանի հետ կրճատվել է ընդհանուր ապրանքաշրջանառությունն, որը հիմնականում պայմանավորված է եղել արտահանման կրճատմամբ, քանի որ Հայաստանի ԱՀԿ անդամակցությունը ապահովում է արտահանման առավել լավ պայմաններով նոր շուկաներ: Ավելին, սկզբնական շրջանում Հայաստանի արտաքին առևտուրը զարգացած էր Իրանի հետ, քանի որ այն գտնվում էր շրջափակման մեջ և անցումային սկզբնական փուլում, ուստի այդ ժամանակաշրջանում առևտրատնտեսական կապերը բավական շահավետ էր Իրանի հետ, սակայն հետագայում՝ տնտեսության զարգացման հետ մեկտեղ, արտաքին առևտուրն Իրանի հետ ձեռք բերեց նվազման միտում:

[1]Միջազգային առևտրատնտեսական պայմանագրերին ծանոթանալու համար տես՝ Թ. Թորոսյան «ԱՀԿ անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա», էջ 35-55 Երևան, 2004թ

1995-2002թթ. ընկած ժամանակաշրջանում և 2003թ.՝ Հայաստանի ԱՀԿ անդամակցությունից հետո, Հայաստանի արտաքին առևտուրը **Վրաստանի** հետ կրել է կառուցվածքային փոփոխություններ: Նշված ժամանակաշրջանում հաստատված առևտրատնտեսական կապերը պայմանականորեն կարելի է բաժանել հատվածների՝ երկու երկրների մինչև ԱՀԿ անդամակցությունը և անդամակցությունից հետո ընկած ժամանակահատված: Մինչև Վրաստանի ԱՀԿ անդամակցելը Հայաստանի արտաքին առևտուրը Վրաստանի հետ ունեցել է նվազման միտում, ընդ որում նվազման դինամիկան եղել է այնպիսին, որ աճել են արտահանման և նվազել են ներմուծման ծավալները: 2000թ. ընդհանուր ապրանքաշրջանառությունը Վրաստանի հետ կազմել է 34.9 մլն. դոլար, որտեղ արտահանվող ապրանքների ծավալը կազմել է 15.4 մլն. դոլար, իսկ ներմուծման ծավալը կազմել է 19.5 մլն. դոլար(Տես Հավելված, Աղյուսակ 2.3-5): 1995թ. համեմատ 2000թ. մոտ 4.5 անգամ աճել է Վրաստան արտահանվող ապրանքների ծավալը՝ կազմելով 15.4 մլն. դոլար և հակառակ դրան մոտ 68%-ով նվազել է ներմուծման ծավալները՝ կազմելով 19.5 մլն. դոլար: Վրաստանի ԱՀԿ անդամակցությունից հետո արդեն 2002թ. զգալի աճել է Հայաստանի ապրանքաշրջանառությունը Վրաստանի հետ՝ կազմելով 48.7 մլն. դոլար, սակայն այդ աճը հիմնականում պայմանավորված էր Վրաստանից ներմուծվող ապրանքների մեծացմամբ: 2000-2002թթ. Վրաստան արտահանվող ապրանքների միջին արժեքը կազմել է 14.9 մլն. դոլար, իսկ ներմուծման մեջ նկատվել է զգալի աճման միտում: 2002թ. 2000թ. համեմատ մոտ 72.8%-ով աճել են ներմուծման ծավալները: Այսպիսով, կարելի է շեշտել, որ Վրաստանի ԱՀԿ անդամակցությունից հետո Հայաստանի արտաքին առևտրաշրջանառությունը Վրաստանի հետ մեծացել է: Սակայն այն չի ազդել Վրաստան արտահանվող ապրանքների վրա, քանի որ 2000թ. Վրաստան արտահանվող ապրանքների արժեքը կազմել է 15.4 մլն. դոլար, իսկ անդամակցությունից հետո՝ 2000-2002թթ., դրա միջին արժեքը կազմել է 14.9 մլն. դոլար: Հայաստանի ԱՀԿ անդամակցությունից հետո՝ 2003թ., Հայաստանի արտաքին առևտուրը Վրաստանի հետ կազմել է 54.1 մլն. դոլար, որտեղ արտահանումը կազմել է 15.9, իսկ ներմուծումը՝ 38.2 մլն. դոլար: 2002թ. համեմատ 2003թ. արտահանումը նվազել է 5.9%, իսկ ներմուծումն աճել է 20.1%-ով: Այսպիսով, կարելի է նշել , որ Հայաստանի ԱՀԿ անդամակցությունն ազդեցություն չի թողել Վրաստանի հետ արտաքին առևտրի վրա:

Ներմուծման աճը կարելի է բացատրել 2001թ. սկսած Վրաստանից ներմուծվող ապրանքների աճի միտումով, իսկ արտահանումը համեմատելով 2000-2002թ. արտահանման միջին արժեքի հետ կնկատենք, որ այն էական փոփոխության չի ենթարկվել: Երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերի զարգացման համար 1995թ. Հայաստանի և Վրաստանի կառավարությունների միջև կնքվեց ազատ առևտրային պայմաններ ապահովող պայմանագիր, որն ուժի մեջ մտավ 1998թ.: Սակայն, ինչպես հետագայում բացահայտվեց, այդ պայմանագիրը գրեթե ոչ մի էական ազդեցություն չի ունեցել երկու երկրների առևտրատնտեսական հարաբերություններում:

Չնայած Հայաստանի և **Թուրքիայի** միջև առկա քաղաքական ոչ կայուն վիճակին, Հայաստանը ներկայումս ունի բավական սերտ առևտրատնտեսական կապեր Թուրքիայի հետ, որը կարող էր էլ ավելի զարգանալ, եթե երկու երկրների միջև լուծվեն քաղաքական անհամաձայնությունները: Թուրքիայի հետ Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության դինամիկան տատանվել է: Սկզբնական շրջանում 1995-1997թթ. այն զգալի տեմպերով աճել է՝ 1997թ. կազմելով 45.5 մլն. դոլար, որտեղ արտահանումը կազմել է 7.1, իսկ ներմուծումը 38.4 մլն. դոլար (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.3-5): Վերջինս 1995-2002թթ. ընկած ժամանակաշրջանում գրանցված ամենաբարձր ցուցանիշն է[1]: Այստեղ հարկ է նշել, որ 1995-1997թթ. ընկած ժամանակաշրջանում Թուրքիայի հետ արտաքին առևտրում ընդհանուր ապրանքաշրջանառության աճը պայմանավորվել է միաժամանակ և՛ արտահանման, և՛ ներմուծման աճով: Այդ ընթացքում Վրաստանի և Իրանի հետ արտաքին առևտրում նկատվում է այլ պատկեր՝ Վրաստանի հետ արտաքին առևտուրը նվազման միտում է ձեռք բերել սկսած 1996թ., իսկ Իրանի դեպքում՝ 1997թ. գրանցվել է կտրուկ նվազում: Սկսած 1997թ. Թուրքիայի հետ Հայաստանի արտաքին առևտուրը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծվող ապրանքների անհամեմատ բարձր տեսակարար կշռով: 2003թ.՝ Հայաստանի ԱՀԿ անդամակցությունից հետո, ընդհանուր ապրանքաշրջանառությունը Թուրքիայի հետ կազմել է 39.1 մլն. դոլար, որտեղ արտահանումը կազմել է 1.0, իսկ ներմուծումը՝ 38.1 մլն. դոլար: 2002թ. համեմատ 2003թ. արտահանումը նվազել է 28.6%-ով, իսկ ներմուծումը գրեթե մնացել է

[1]Թուրքիայի հետ առևտրատնտեսական կապերի զարգացումը ավելի մանրամասը դիտարկելու համար տես՝ Թ. Թորոսյան «Հայաստան-Թուրքիա առևտրատնտեսական կապերը», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N 6-7, էջ 84-89, Երևան 2002

անփոփոխ՝ աճելով 0.5%-ով: Այսպիսով, ինչպես և Վրաստանի դեպքում, կարող ենք նշել, որ Հայաստանի ԱՀԿ անդամակցությունն ոչ մի էական ազդեցություն չի թողել Թուրքիայի հետ արտաքին առևտրում, քանի որ ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ արտահանման նվազումը սկսվել էր դեռ 1998թ., իսկ 1998-2002թթ. ընկած ժամանակահատվածում ներմուծման միջին արժեքն եղել է 35.9 մլն. դոլար: Թուրքիա արտահանվող ապրանքների նման ցածր մակարդակը թեև կարելի է բացատրել նրանով, որ ներկայումս Հայաստանում զարգանում է սննդամթերքի արտադրությունը և թեթև արդյունաբերությունն, իսկ Թուրքիան կիրառում է բարձր հովանավորչական քաղաքականություն ներմուծվող սննդամթերքների, գյուղատնտեսական արտադրանքի և ոգելից խմիչքների նկատմամբ: Ավելին, նշված ապրանքախմբերով առևտուրը պահանջում է միջպետական կառավարում, որը դեռևս չի հաստատվել երկու երկրների միջև: Հայաստանի ԱՀԿ անդամակցությունը կարող է կարևոր հանգամանք հանդիսանալ ներկայումս լայն քննարկման առարկա դարձած հայ-թուրքական ուղղակի տնտեսական կապերի զարգացման խնդիրների լուծման համար: Ներկայումս Թուրքիան և արդեն նաև Հայաստանը հանդիսանում են ԱՀԿ անդամ և այն կարող է հիմք հանդիսանալ երկու երկրների միջև հետագա քաղաքական և տնտեսական կապերի զարգացման համար, որի իրագործման համար կարող են փաստել վերջին շրջանում հայ-թուրքական սահմանի բացման քննարկումները: Մինչև Հայաստանի ԱՀԿ անդամակցությունը հայ-թուրքական սահմանի բացումը շատ դժվար էր պատկերացնել, սակայն Հայաստանի անդամակցությունից հետո երկու երկրներն էլ կարծես թե գիտակցում են սահմանի բացումից ստացվող երկկողմանի օգուտները: Սահմանի բացումն իհարկե կունենա և՝ դրական, և՝ բացասական հետևանքներ Հայաստանի տնտեսության համար: Սակայն, հաշվի առնելով ներկայիս շրջափակված վիճակը և այլընտրանքային տարբերակների բացակայությունը, կարել է ընդգծել, որ այն իրականում կունենա շատ ավելի դրական, քան բացասական ազդեցություն: Ավելին, Թուրքիայի հետ առևտրային հարաբերություններն ունեն տարերային բնույթ, անտեսված է օրենսդրական դաշտն, երկու երկրների առևտրատնտեսական կապերը պետության վերահսկողությունից դուրս են, ինչի հետևանքով վնաս է հասցվում նախ Հայաստանի տնտեսությանը:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ Հայաստանի ԱՀԿ անդամակցությունն իր ազդեցությունն է թողել Իրանի և Հայաստանի արտաքին առևտրի վրա, որն արդյունք է

Հայաստանի համար առավել բարենպաստ պայմաններով շուկաների ձեռք բերմամբ: Հակառակ դրան Վրաստանի և Թուրքիայի հետ արտաքին առևտուրը գրեթե մնացել է անփոփոխ: Հայաստանի ԱՀԿ անդամակցությունը և դրա արտաքին առևտրի այդպիսի համեմատաբար կայուն վիճակը հարևան՝ արդեն ԱՀԿ անդամ, Վրաստանի և Թուրքիայի հետ կարելի է բացատրել մի շարք գործոններով: Սակայն ամենագլխավորը կարելի է համարել ժամանակի գործոնը, քանի որ այստեղ դիտարկվել է Հայաստանի ԱՀԿ անդամակցությունից մեկ տարի հետո ընկած ժամանակաշրջանի արտաքին առևտրի տվյալները և այդպիսի կարճ ժամանակաշրջանում շատ դժվար է կատարել որոշակի դատողություններ:

Արտաքին առևտուրն ԱՊՀ հիմնական գործընկեր երկրների հետ: Անկախացումից հետո Հայաստանն ԱՊՀ երկրների մեջ լայն տնտեսական և քաղաքական հարաբերություններ է պահպանել հիմնականում Ռուսաստանի հետ: Այժմ փորձենք ներկայացնել Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունները Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի հետ և պարզենք, թե արդյոք Հայաստանի ԱՀԿ անդամակցությունն ազդել է այդ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի վրա: Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի հետ ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունն ուսումնասիրելու նպատակով դիտարկենք Գծապատկեր 2.3-4-ը:

Ինչպես վկայում են Գծապատկեր 2.3-4-ի տվյալները, նշված երկրների հետ ապրանքաշրջանառության մեջ բավական մեծ տեղ է զբաղեցնում Ռուսաստանը: Ուկրաինայի և Բելոռուսիայի հետ արտաքին ապրանքաշրջանառությունը սկզբնական շրջանում եղել է շատ աննշան, սակայն ձեռք է բերել աճման միտում, այդ պատճառով մենք կարևորել ենք հենց այդ երկրների հետ արտաքին առևտրի ուսումնասիրությունը և զարգացումը:

Գծապատկեր 2.3-4



Արտաքին ապրանքաշրջանառությունը Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի հետ 1995-2003թթ. (մլն. դոլար)

1995-2003թթ. ընկած ժամանակաշրջանում՝ Հայաստանի արտաքին առևտրի դինամիկան **Ռուսաստանի** հետ դիտարկելիս, պայմանականորեն նշված ժամանակաշրջանը բաժանվել է երեք փուլի: 1995-1997թթ., երբ ընդհանուր առմամբ արտաքին առևտուրն ունեցել է աճման միտում՝ 1997թ. կազմելով 257.7 մլն. դոլար, իսկ վերջինս 1995թ. համեմատ աճել է 16.1% ով (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.3-6): 1998-2000թթ., երբ Ռուսաստանի հետ արտաքին առևտուրն ունեցել է նվազման միտում՝ 2000թ. 1997թ. համեմատ Հայաստանի արտաքին առևտուրը Ռուսաստանի հետ նվազել է 31.4%-ով: 2001-2003թթ., երբ արդեն նորից Ռուսաստանի հետ արտաքին առևտրում նկատվում է զգալի աշխուժություն՝ 2003թ. 2000թ. համեմատ Հայաստանի արտաքին առևտուրը Ռուսաստանի հետ աճել է 71.1%-ով: Առաջին փուլին բնորոշ արտաքին առևտրի աճը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծման ծավալների մեծացմամբ և արտահանման կրճատմամբ: Երկրորդ փուլում նվազումը պայմանավորված է եղել արտահանման կրճատման շարունակությամբ և դրա հետ մեկտեղ նաև ներմուծման ծավալների կրճատմամբ: Վերջապես երրորդ փուլի ընթացքում աճն առաջնորդվել է արտահանման և ներմուծման ծավալների զգալի մեծացմամբ: Հայաստանի ԱՀԿ անդամակցությունից հետո, Հայաստանի արտաքին առևտուրը Ռուսաստանի հետ ունեցել է հետևյալ տեսքը՝ 2003թ. արտաքին առևտուրը Ռուսաստանի հետ կազմել է 302.3 մլն. դոլար,

որտեղ արտահանումը կազմել է 94.5, իսկ ներմուծումը՝ 207.7 մլն. դոլար: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա համեմատ 2003թ. արտահանումն աճել է 45.8, իսկ ներմուծումը՝ 5.7%-ով:

Այստեղ ուշագրավ է արտահանման այդպիսի աճը, քանի որ Ռուսաստանը ԱՀԿ անդամ երկիր չէ և այն չի բացատրվում Հայաստանի համար ավելի լավ պայմաններով նոր շուկայի ձեռք բերմամբ և բացի այդ, մենք արդենք դիտարկել ենք այն փաստը, որ Ռուսաստանը ուներ և շարունակում է ունենալ լիբերալ արտաքին առևտրի քաղաքականություն:

Հայաստանի արտաքին առևտուրն **Ուկրաինայի** հետ տատանվել է: Այդ պատճառով, 1995-2002թթ. ընկած ժամանակաշրջանը կրկին պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլի, որոնք առավել պատկերավոր կներկայացնեն Ուկրաինայի հետ Հայաստանի արտաքին առևտուրը: 1995-1996թթ. ընթացքում արտաքին առևտուրն Ուկրաինայի հետ աճել է՝ 1996թ. կազմելով 16.7 մլն. դոլար, որտեղ արտահանումը կազմել է 4.8, իսկ ներմուծումը 11.9 մլն. դոլար (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.3-6): 1997-1999թթ. ընթացքում նկատվել է արտաքին առևտրի նվազման միտում՝ 1999թ. կազմելով 10.0 մլն. դոլար: 2000-2002թթ. (ինչպես և Ռուսաստանի դեպքում) Հայաստանի արտաքին առևտուրն Ուկրաինայի հետ զգալի տեմպերով աճել է՝ 2002թ. կազմելով 54 մլն. դոլար, այդ թվում արտահանումը կազմել է 8.1, իսկ ներմուծումը 45.9 մլն. դոլար: Ի տարբերություն Ռուսաստանի, առաջին փուլում աճել է և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները, սակայն աճը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծման ծավալների մեծացմամբ: Երկրորդ փուլում Ուկրաինայի հետ արտաքին առևտրի նվազումը Ռուսաստանի նման բացատրվում է և՛ արտահանման, և՛ ներմուծման կրճատմամբ: Վերջապես երրորդ փուլում աճը պայմանավորված է եղել հիմնականում ներմուծման ծավալների մեծացմամբ: Սակայն, դրա հետ մեկտեղ, 2001թ. աճել է նաև արտահանման ծավալները՝ կազմելով 10.9 մլն. դոլար, բայց 2002թ. այն նորից նվազել է կազմելով՝ 8.1 մլն. դոլար: Հայաստանի ԱՀԿ անդամակցությունից հետո արտաքին առևտուրն Ուկրաինայի հետ 2003թ. կազմել է 51.3 մլն. դոլար, ընդ որում, արտահանումը կազմել է 7.3, իսկ ներմուծումը 44 մլն. դոլար: Համեմատության համար նշենք, որ 2002թ. համեմատ արտահանումը նվազել է 9.8, իսկ ներմուծումը՝ 4.1%-ով: Այստեղից պարզ երևում է, որ անդամակցությունից հետո Ուկրաինայի հետ արտաքին առևտուրը կրճատվել է: Դա կարելի է բացատրել Հայաստանի արտաքին

առևտրի ուղղվածության փոփոխությամբ, քանի որ Հայաստանը շատ ավելի հակված է կատարել առևտուր ԱՀԿ անդամ երկրների հետ, որոնցում առկա են ավելի բարենպաստ առևտրի պայմաններ: 2002թ. Ուկրաինայի հետ ՀՀ արտաքին առևտրաշրջանառության զգալի աճի հիմնական պատճառն այն էր, որ 2001թ. կնքվել է Հայաստանի և Ուկրաինայի կառավարությունների միջև երկարաժամկետ տնտեսական համագործակցության պայմանագիր: Տնտեսական համագործակցության շրջանակներում հատուկ տեղ է տրվել երկու երկրների միջև ազատ առևտրային պայմանների ստեղծմանը և զարգացմանը:

Հայաստանի արտաքին առևտուրը **Բելառուսի** հետ, ի տարբերություն Ռուսաստանի և Ուկրաինայի, արժեքային առումով շատ ավելի քիչ է: Հայաստանի արտաքին առևտրաշրջանառությունը Բելառուսի հետ 1995-1997թթ. ընկած ժամանակաշրջանում ունեցել է աճման միտում (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2.3-6): 1997թ. այն կազմել է 4.4 մլն. դոլար, որտեղ արտահանումը կազմել է 1.1, իսկ ներմուծումը 3.3 մլն. դոլար: Այնուհետև, 1998թ. սկսած մինչև 2000թ. այն նվազել է՝ 2000թ. 1997թ. համեմատ Հայաստանի արտաքին առևտուրը Բելառուսի հետ նվազել է 65.9%-ով: 2001թ. սկսած Բելառուսի հետ ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ նորից նկատվել է աճի միտումներ՝ 2003թ. 2000թ. համեմատ այն աճել է մոտ 3.5 անգամ՝ կազմելով 7.1 մլն. դոլար: Վերը դիտարկված երկրների համեմատ, Հայաստանի արտաքին առևտրաշրջանառությունը Բելառուսի հետ բավական փոքր է, սակայն վերջին երեք տարիների արդյունքում այն Ռուսաստանի և Վրաստանի հետ ունեցած արտաքին առևտրի նման աճել է: Հայաստանի ԱՀԿ անդամակցությունից հետո արտաքին առևտուրը Բելառուսի հետ 2003թ. ունեցել է հետևյալ տեսքը՝ Բելառուս արտահանված ապրանքների ծավալը կազմել է 2.0, իսկ ներմուծումը 5.1 մլն. դոլար: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա համեմատ 2003թ. արտահանումն աճել է 33.3%-ով, իսկ ներմուծումը՝ մոտ 1.5 անգամ: Այսպիսով, Հայաստանի ԱՀԿ անդամակցությունից հետո արտաքին առևտրաշրջանառությունը Բելառուսի հետ ավելացել է, սակայն այն հիմնականում պայմանավորված է եղել ներմուծման մեծացմամբ: Անդամակցությունից հետո արտահանման և ներմուծման միաժամանակ մեծացումը չի կարող պայմանավորվել ԱՀԿ անդամակցությունով, քանի որ Բելառուսը չի համարվում ԱՀԿ անդամ: Ինչպես նաև Ռուսաստանի դեպքում, այս երևույթը կարելի է բացատրել Հայաստանի արտաքին առևտրի ուղղվածության փոփոխությամբ: Այսինքն, սկզբնական շրջանում՝ 1995-

1996թ. ընկած ժամանակաշրջանում, Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունները բավական սերտ էին ԱՊՀ երկրների հետ, սակայն հետագայում դրանք ձեռք բերեցին նոր ուղղություն՝ դեպի ԵՄ և Հեռավոր Արևելքի երկրներ:

Բոլոր ապրանքախմբերով Բելառուս արտահանումը 1995-2003թթ. կա'մ նվազել է, կա'մ անկայուն տատանվել է, բացի պատրաստի սննդի արտադրանքից, մասնավորապես՝ ոգելից և ոչ ոգելից խմիչքներից[1]: Դա պայմանավորված է բելառուսական շուկայում այդ ապրանքների հաջողությամբ: Հայկական արտադրության խմիչքներն արդեն ծանոթ են բելոռուսական շուկայի սպառողներին: Բացի այդ, հարկ է նշել, որ Բելոռուսիայի շուկայի սպառողներն ավելի հակված են ԱՊՀ երկրներից ապրանքներ սպառելուն, որը լայն հնարավորություն է ստեղծում Հայաստանի տեղական մրցունակ ապրանքներն ուղղել դեպի բելառուսական շուկա: Դրա վառ օրինակն է հայկական ծխախոտի արտահանումը բելոռուսական շուկա: Սակայն յուրաքանչյուր հայրենական ապրանք, որը պետք է ներկայացվի բելառուսկան շուկա, պետք է ունենա բարձր որակ և մրցունակ գին, որպեսզի հետագայում հաջողության հասնի: Հայաստանի արտաքին առևտուրը Բելառուսի հետ արժեքային առումով բավական փոքր է և գտնվում է անհավասարակշիռ վիճակում, սակայն հարկ է նշել, որ 2001թ. սկսած Բելառուսի հետ արտաքին առևտրի աշխուժություն է նկատվում: 2002թ. ապրիլի 2-5 Մինսկում կայացած սննդի, գարեջրի, գինիների և այլ ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների ցուցահանդեսը հնարավորություն կտա ընդլայնել Հայաստանից արտահանվող տեսականին, քանի որ հայկական ապրանքները հաջողության են հասել այդ ցուցահանդեսում:

Այսպիսով, Հայաստանի ԱՀԿ անդամակցությունն էական ազդեցություն չի ունեցել Հայաստանի արտաքին առևտրի վրա դիտարկված երկրների հետ, բայց չպետք է մոռանալ, որ անդամակցությունից անցել է ընդամենը մեկ տարի: Ինչևէ, կարելի է առաջ բերել մի վարկած, համաձայն որի, Հայաստանի ԱՀԿ անդամակցությունը սկզբնական շրջանում (կարճաժամկետ հատվածում) ոչ մի կերպ էականորեն չի ազդում Հայաստանի արտաքին առևտրի վրա, քանի որ մինչ այդ էլ Հայաստանը ուներ լիբերալ առևտրային քաղաքականություն: Սակայն այստեղ կա մի շատ կարևոր հանգամանք, քանի որ ներկայումս Հայաստանում սկսել է զարգանալ

[1]Ուկրաինայի և Բելառուսի հետ առևտրում ապրանքային կառուցվածքի մասին ավելի մանրամասն պատկերացում կազմելու համար տես՝ Թ. Թորոսյան, Գ. Հայրապետյան «Հայաստանի արտաքին առևտրատնտեսական կապերը Ուկրաինայի և Բելառուսի հետ», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N8-9, էջ 52-58, Երևան 2003

ծառայությունների ոլորտն, ինչն անմիջականորեն առնչվում է ԱՀԿ հետաքրքրության շրջանակներին, ապա դրական արդյունք կարող է երևան գալ ծառայությունների առևտրում (սակայն երկարաժամկետ հատվածում): Երկարաժամկետ հատվածում, որպեսզի ապրանքների առևտրում դրական ադյունք երևան գա անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանում զարգանա տեղական արտադրությունն, որը կարող է դուրս գալ միջազգային շուկա:

Գտնվելով շրջափակման մեջ և առկա բարձր տրանսպորտային ծախսերի պայմաններում, շատ ավելի նպատակահարմար կլիներ խորացնել արտաքին առևտրատնտեսական կապերը հարևան և ԱՊՀ երկրների հետ: Մյուս կարևոր պատճառը, որը պետք է Հայաստանին դրդի դեպի հարևան և ԱՊՀ երկրների շուկա, դա մրցակցության պայմանն է: ԵՄ երկրները զինված են նորագույն արտադրության տեխնոլոգիաներով և դա նրանց ապահովում է արտադրանքի բարձր որակ և ցածր արտադրության ծախքեր, բացի այդ ԵՄ երկրների սպառողների ճաշակները շատ խիստ են ու տարբերակված:

Նախկին Խորհրդային Միության երկրներն, որոնք արդեն անդամակցել են ԱՀԿ ներառյալ Հայաստանն, ընդունել են լիբերալ առևտրային քաղաքականության ռեժիմ և կատարել են շուկայական բարեփոխումների մի շարք ծրագրեր: Սակայն Ռուսաստանն, Ուկրաինան և Բելառուսն ընդունել են այլ ռազմավարություն, քանի որ այդ երկրների կառավարությունների կարծիքով, անցումային շրջանում՝ տնտեսությունը վերականգնելու համար, անհրաժեշտ է կիրառել հովանավորչական քաղաքականություն:

ԱՀԿ անդամակցությունը ստեղծում է առևտրի զարգացման համար լայն հնարավորություններ, սակայն դա չի նշանակում, որ անդամակցությունից բոլոր օգուտներն ինքնաբերաբար և միանգամից պետք է ստացվեն՝ հատկապես Հայաստանի նման փոքր երկրի համար: ԱՀԿ անդամակցությունը կարող է օգնել, բայց այն չի երաշխավորում:

Ինչևէ, Հայաստանի ԱՀԿ անդամակցությունը շատ կարևոր քայլ կարող է հանդիսանալ երկարաժամկետ ժամանակաշրջանում այլ երկրների հետ տնտեսական հարաբերությունների զարգացման համար, վստահություն ներշնչել երկարաժամկետ բիզնես իրականացնելու, խթան հանդիսանալ օտարերկրյա ներդրումները ներգրավելու համար, իսկ կարճաժամկետ հատվածում հնարավոր է նկատել նաև առևտրի նվազում:

Գլուխ 3 ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման ուղիները և հեռանկարները

3.1 Արտաքին առևտրի զարգացման հիմնական ուղիները և առևտրային հաշվեկշռի կարգավորման հեռանկարները

Աշխատանքում կատարված վերլուծություններից և ստացված արդյունքներից հետևում է, որ անհրաժեշտ է ՀՀ առևտրային հաշվեկշիռն անհապաղ կարգավորել: Այդ պատճառով, հարկ է քննարկել ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման հնարավոր ուղիները՝ մեկ անգամ ևս նշելով, որ մեր կողմից այստեղ չի առաջարկվում այդ կարգավորումն իրականացնել ի հաշիվ ուղղակի ներմուծման կրճատման: Այլ բան է, եթե տեղական արտադրության զարգացմամբ այդ ներմուծվող ապրանքները փոխարինվեն տեղական արտադրության ապրանքների սպառմամբ և մեկ այլ բան է, երբ ներմուծվող ապրանքները հարկադրաբար են փոխարինվում տեղական արտադրության ապրանքներով:

Հիմնվելով աշխատանքում կատարած վերլուծությունների և ստացված արդյունքների վրա՝ հարկ է նշել, որ ՀՀ արտաքին առևտրային քաղաքականությունն ինքնաբերաբար չի կարող կարգավորել առևտրային հաշվեկշիռը: Ավելին, եթե փորձենք այս ամենը ներկայացնել սխեմայի միջոցով, ապա կունենանք հետևյալ տեսքը՝

Սխեմա 3.1-1



Արտաքին առևտրային քաղաքականության և առևտրային հաշվեկշռի փոխկապակցվածությունը

Սխեմա 3.1-1-ից ակնհայտ է, որ առևտրային հաշվեկշռի վիճակն որոշվում է ընտրված արտաքին առևտրային քաղաքականությունից: Սակայն, իրականում առևտրային հաշվեկշիռը և արտաքին առևտրային քաղաքականությունը պետք է փոխկապակցված լինեն: Այսինքն գոյություն ունենա հետադարձ կապ՝ հաշվի առնելով առևտրային հաշվեկշռի վիճակը, պետք է դրանից էլ որոշվի համապատասխան արտաքին առևտրային քաղաքականությունը:

Ինչպես մենք արդեն նշել ենք, ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման գործընթացում պետք է հիմնականում կենտրոնանալ արտահանման վրա, Հայաստանի դեպքում ներմուծման կրճատումն արդյունավետ չի լինի, քանի որ համեմատական առումով դա առանց այն էլ փոքր է: Ավելին, ներմուծման կրճատումը կնվազեցնի սպառողների բարեկեցության մակարդակն, որը ներկայիս պայմաններում նպատակահարմար չէ:

Աշխատանքում կատարված համեմատական վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ ներկայիս գրականության մեջ հովանավորչական քաղաքականությանը շատ քննադատորեն են մոտենում: Պատճառն այն է, թե արդյոք հարկավոր է կառավարության միջամտությունն արտաքին առևտրում, թե ազատ առևտուրն ամենահաջողն է, ընդ որում շատ տնտեսագետներ կողմ են ազատ առևտրին: Սակայն, եթե մենք տարբերություն դնենք «ներմուծման փոխարինում» հասկացության որպես *պատմական երևույթի* և որպես *կշռադատված, նպատակաուղղված քաղաքականության*, որը պետք է իրականացվի կառավարության կողմից տեղական արդյունաբերությունը զարգացնելու համար, ապա չենք ընկնի քննադատական այդպիսի ծուղակի մեջ:

Որպես պատմական երևույթ, ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունը կարելի է վերագրել շատ զարգացող երկրների՝ հատկապես Լատինական Ամերիկայի երկրների պրակտիկային, այսինքն՝ կազմակերպվում էր տեղական արտադրություն, որը փոխարինում էր նախկինում ներմուծվող ապրանքներին:

Այս առումով, ինչպես բացահայտվեց աշխատանքում, ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության շնորհիվ զարգացող երկրների առևտրային հաշվեկշիռները կարգավորվում էին ներմուծման ծավալների անմիջական կրճատմամբ:

Որպես նպատակաուղղված քաղաքականություն, ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունը կարող է հանդիսանալ կառավարության այնպիսի միջոցներից մեկն, որը պետք է հիմք ստեղծի արտաքին առևտրի հետագա զարգացման՝ հետևաբար և առևտրային հաշվեկշռի կարգավորման համար:

Այսպիսով, հիմք ընդունելով աշխատանքում ստացված արդյունքները և հաշվի առնելով ՀՀ առաջարկի և պահանջարկի շոկերի ներկայիս վիճակն, առաջարկվում է ՀՀ առևտրային

հաշվեկշռի կարգավորման համար ընտրել ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականությունը:

Ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության հիմնական նպատակը պետք է լինի զարգացնել տեղական արտադրությունը և բարձրացնել միջազգային շուկայում երկրի մրցակցային դիրքն, որն էլ հետագայում հենց կհանդիսանա առևտրային հաշվեկշռի կարգավորման հիմնական միջոցներից մեկը: Հարկ է նշել, որ այս առումով մենք լիովին համաձայն ենք ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի հետ, համաձայն որի, երկրի գլխավոր շարժիչ ուժը պետական ազգային շահերն են՝ հայրենական արտադրողների շահերի պաշտպանությունը: Հայաստանում պետական հովանավորչական քաղաքականություն պետք է կիրառել հատկապես մեքենաշինության, սննդի և հանքային արդյունաբերության տնտեսական գործունեության ոլորտների նկատմամբ[1]:

Մեր կողմից առաջարկված ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականությունը պետք է կենտրոնանա 3 հիմնական խնդիրների վրա, որոնց լուծմամբ կարելի է ապահովել ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորումը և նույնիսկ ավելին՝ դինամիկ տնտեսական զարգացում: Այդ խնդիրներն են.

- արտահանման ներուժ ունեցող տնտեսական գործունեության ոլորտներում բարձրացնել նոր ձևավորվող ձեռնարկությունների գործունեության արդյունավետությունը,
- ապահովել արտահանման ներուժ ունեցող տնտեսական գործունեության ոլորտներում գործող ձեռնարկությունների «սովորելու» գործընթացը,
- նպատակային ներգրավել ՕՈՒՆ-ը դեպի արտահանման ներուժ ունեցող տնտեսական գործունեության ոլորտներ:

Այսպիսով, առևտրային հաշվեկշռի կարգավորման և տնտեսական զարգացման համար ՀՀ կառավարության միջոցներից մեկը կարող է հանդիսանալ ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության կիրառումը : Այստեղ հարկ է նշել, որ մեր խնդիրը զուտ առևտրային հաշվեկշռի կարգավորումը չէ: Տնտեսական զարգացման տեսությունը շատ ավելի լայն հասկացություն է, քան առևտրի տեսությունը: Այստեղ դիտարկվելու է

[1]Վ. Խոջաբեկյան «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը: XIX-XX դարերում, XXI դարի շեմին», Գիտություն, էջ-387, Երևան 2002

առևտրային հաշվեկշռի կարգավորումը և տնտեսական աճը մակրո մակարդակում: Առևտրային հաշվեկշռի կարգավորման գործընթացի հիմքը ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականությունն է, որը պետք է իրականացվի կառավարության կողմից տեղական արտադրությունը զարգացնելու համար: Հատկապես առանձնացվում են հետևյալ ապրանքների արտադրությունն, որոնք.

- նախկինում արտադրվել են Հայաստանում, սակայն ներկայումս ներմուծվում են,
- ներկայումս արտադրվում են Հայաստանում, սակայն կան լուրջ խնդիրներ կապված օտարերկրյա մրցակցության հետ,
- նախկինում չեն արտադրվել Հայաստանում և ներմուծվում են,
- չեն արտադրվում Հայաստանում և չեն ներմուծվում:

Ելնելով վերն ասվածից, եթե փորձենք կառուցել արտաքին առևտրային քաղաքականության և առևտրային հաշվեկշռի սխեմատիկ մոդելն, ապա այն կընդունի հետևյալ տեսքը՝ տես Սխեմա 3.1-2: Ինչպես մենք տեսնում ենք, Սխեմա 3.1-2-ը հիմնովին տարբերվում է Սխեմա 3.1-1-ից, մասնավորապես՝ Սխեմա 3.1-2-ը կառուցվել է վերը նշված հետադարձ կապով: Այսինքն, առևտրային հաշվեկշռի ներկա վիճակից ելնելով՝ այն կարգավորելու համար, ընտրվում է արտաքին առևտրային համապատասխան քաղաքականություն: Սակայն, այստեղ մենք չենք բացառել նաև ուղիղ կապը, այսինքն՝ առկա արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունն առևտրային հաշվեկշռի վրա (Տես՝ Սխեմա 3.1-2), քանի որ մեր կողմից առաջարկված մոտեցումը պետք է կրի ժամանակավոր բնույթ:

Ինչպես փաստում է Սխեմա 3.1-2-ը, առևտրային հաշվեկշռի կարգավորման հիմքում ընկած է ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականությունը, որը կենտրոնանալով նոր ձևավորվող ձեռնարկությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ձեռնարկություններում «սովորելու» գործընթացի խթանման և ՕՈՒՆ-ի նպատակային ներգրավման վրա, ապահովելու է արտահանման ծավալների ավելացում:

Այստեղ հարկ է նշել, որ առևտրային հաշվեկշիռը կարգավորելիս հարկ է ուշադրություն դարձնել երկու՝ *«շուկայի կողմնորոշում»* և *«տնտեսության ճյուղային կողմնորոշում» հասկացությունների* վրա:

Սխեմա 3.1-2



Առևտրային հաշվեկշռի կարգավորման ռազմավարություն

Շուկայի կողմնորոշում ասելով նկատի ունենք, որ անհրաժեշտ է որոշել՝ տեղական ձեռնարկություններում թողարկված արտադրանքը պետք է իրացվի տեղում, թե՞ միջազգային շուկայում, թե՞ պետք է հաշվի առնել այդ երկու շուկաները միաժամանակ:

Տնտեսության ճյուղային կողմնորոշումը դա երկրի այլընտրանքային հնարավորությունն է՝ գնահատելու և ընտրելու այն տնտեսական գործունեության ոլորտը կամ ոլորտներն, որոնք տվյալ երկրի համար կհանդիսանան որպես տնտեսական աճ ապահովող «շարժիչ»:

Աշխատանքում կատարված վերլուծությունից հետևում է, որ ՀՀ արտաքին առևտրում բացակայում է կոնկրետ շուկայի կողմնորոշումը, մասնավորապես այն մերթ հակված է ԵՄ երկրներ, մերթ ԱՊՀ երկրներ: Դա հիմնականում բացատրվում է շուկայական և քաղաքական պայմանների փոփոխության ազդեցությամբ: Սակայն, չի կարելի ՀՀ արտաքին առևտրի ուղղվածությունը թողնել այդպիսի ինքնակարգավորվող վիճակում: Այդ առումով, հատկապես

կարևորվել է ՀՀ արտաքին առևտրի զարգացումը հարևան և ԱՊՀ հիմնական գործընկեր երկրների հետ:

ՀՀ տնտեսության ճյուղային կողմորոշման համար հիմք է ընդունվել աշխատանքում կատարված արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքի վերլուծությունը, մասնավորապես՝ այն տնտեսական գործունեության ոլորտներն, որոնք ունեն արտահանման մեծ ներուժ: Ինչպես աշխատանքում նշվել է, դրանք են.

- սննդի արտադրությունը,
- հանքահումքային արդյունաբերությունը,
- քիմիական արդյունաբերությունը,
- գյուղատնտեսական վերամշակող արտադրությունը,
- թեթև արդյունաբերությունը :

Այսպիսով, մեր կողմից առաջարկված ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության կիրառումը պետք է կենտրոնանա վերը նշված տնտեսական գործունեության ոլորտներով տեղական արտադրության զարգացման վրա:

Առևտրային հաշվեկշռի կարգավորման համար մեր կողմից հիմք ընդունած ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության յուրահատկությունն այն է, որ նման քաղաքականության կիրառումը չի նշանակում ապրանքների և ծառայությունների ծավալների կտրուկ կրճատում, այլ այն պետք է խթանի տեղական արտադրության զարգացմանը և հետագայում հիմք ստեղծի արտահանման ծավալների մեծացման համար: Հայաստանի դեպքում, եթե նույնիսկ ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության կիրառման ժամանակահատվածում ներմուծման ծավալները կրճատվեն, ապա հետագայում, այլ հավասար պայմաններում, այն նորից ձեռք կբերի աճի միտում: Ներմուծման ծավալների հետագա աճի վրա կազդեն մի քանի գործոններ.

- ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության կիրառման ժամանակ սովորաբար մեծանում է կապիտալ և միջանկյալ ապրանքների ներմուծման ծավալները: Այս դեպքում, ճիշտ է, մեծանում է ներմուծման ծավալները, սակայն փոփոխվում է նաև ներմուծման, հետևաբար նաև առևտրային հաշվեկշռի ապրանքային կառուցվածքը,

- եկամուտների անհավասար մեծացումը կարող է սպառողական պահանջարկն ուղղել արտասահմանյան ապրանքների վրա:

Ինչպես նշում են Ս. Դավոյանը, Ա. Մարկոսյանը և Հ. Սարգսյանը, տնտեսական վերելքն, երկարատև տնտեսական աճն ենթադրում է որոշակի ռազմավարության առկայություն, իսկ վերջինս բնորոշվում է համակարգված գործողությունների ամբողջությամբ[1]: Ըստ մեզ, ներկա փուլում Հայաստանի համար այդպիսի որոշակի ռազմավարություն պետք է հանդիսանա առևտրային հաշվեկշռի կարգավորումն, որը պետք է իրականացվի մեր կողմից առաջարկված ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության միջոցով:

Նպատակաուղղվածությունը կարևորում է նաև Յ. Սուվարյանը: Նա տնտեսական զարգացումը դիտարկում է տնտեսության կառավարման նպատակաուղղվածության մեջ[2]: Այստեղ կարելի է համաձայնվել Յ. Սուվարյանի տեսակետի հետ, քանի որ առևտրային հաշվեկշռի կարգավորումն, որի հիմքում ընկած է տեղական արտադրության և տնտեսական զարգացումը, դա իրականում տնտեսության կառավարման գործընթաց է:

Այսպիսով, ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության սպասվող արդյունքը պետք է առաջացնի կարճաժամկետ հատվածում առևտրի արդյունավետություն՝ բացառելով բաշխման և տեխնիկական ոչ արդյունավետությունն, որն առաջանում է հովանավորչական քաղաքականության կիրառման ժամանակ: Առևտրի ռեժիմի փոփոխության իրականացումն երկրի ներսում զուգորդվում է տեխնիկական դժվարություններով և այդ ոլորտներում գործող քաղաքական ուժեղ ճնշումներով: Տեխնիկական դժվարություններից մեկն այն է, որ առևտրի ռեժիմի փոփոխությունը պետք է իրականացվի տեղական տնտեսական քաղաքականության փոփոխության հետ զուգահեռ, այսինքն՝ կարիք չկա շուկայական տնտեսության առևտրային քաղաքականության գործիքները կիրառել մի տնտեսությունում, որը դեռ հիմնված է պլանային տնտեսության վրա: Առևտրի ռեժիմի փոփոխման քաղաքական դժվարություններն առկա են բոլոր, հատկապես անցումային շրջանի երկրներում, որտեղ գործում է քանակական վերահսկողությունը: Վերջինս

[1]Ս. Դավոյան, Ա. Մարկոսյան, Հ. Սարգսյան «Վերափոխումները անցումային երկրներում», Տիգրան Մեծ, էջ- 553, Երևան 2003
[2]Յ. Սուվարյան «ՀՀ տնտեսության պետական կառավարման արդյունավետության միտումները և աճի գերակայությունը», էկոնոմիկա, N 5, Երևան 2000

առաջացնում է ռենտա, իսկ դրա ստացողները շատ քիչ են հակված դեպի փոփոխությունները: Շատ անգամ կարելի է սովորել՝ հետևելով անցումային այլ երկրների փորձին, որոնք ժամանակին կիրառել են առևտրի ռեժիմի փոփոխության քաղաքականություններ և ունեցել են մեծ հաջողություններ: Սակայն առևտրի ռեժիմի փոփոխությունների արդյունքները տարբեր երկրներում տարբեր են և հիմնվելով արդյունքների այդ տարբերությունների վրա կարելի է հանգել հետևյալ երկու հետևությանը.

- *Գոյություն չունի մեկ, միակ ուղի, որը ստեղծում է արդյունավետ բարեփոխումներ, յուրաքանչյուր երկիր պետք է ընտրի իր սեփական ուղին՝ կախված իր հնարավորություններից և սահմանափակումներից:*
- *Ընտրված ուղին պետք է լինի համաձայնեցված՝ մեղմացնելու կամ վերացնելու որոշակի խնդիրներ, հակառակ դեպքում կատարված բարեփոխումները արդյունավետ չեն լինի:*

3.1-1 Նոր ձևավորվող ձեռնարկությունների հիմնախնդիրը

Նոր ձևավորվող ձեռնարկության հովանավորչության գաղափարն ընդունվել է դասական և նեոդասական մի շարք տնտեսագետների կողմից: Այսպես, Ջոն Ստյուարտ Միլը նշել է, որ երկրի ներսում նոր արտադրողներից պահանջվում է ժամանակ, որպեսզի ձեռք բերեն այնքան իմացություն, որը մյուսների համար արդեն ավանդույթ է: Վերջինիս արդյունքում կնվազեն միավոր արտադրության ծախքերը: Հայաստանի դեպքում Միլի մոտեցումը էլ ավելի կուժեղանա, քանի որ անկախացումից և տնտեսական բարեփոխումներից հետո կարելի է փաստել, որ ամբողջ երկրի արտադրությունը համարվում է նոր ձևավորվող: Եվ, եթե Միլը նկատի է ունեցել ներքին մրցակցությունն, որի հիմքի վրա էլ առաջ է քաշել նոր ձևավորվող ձեռնարկությունների հովանավորչության գաղափարն, ապա Հայաստանի դեպքում առկա է արտաքին մրցակցությունը: Սակայն, համաձայնվելով Միլի հետ, այստեղ պետք է նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք, որ նոր ձևավորվող ձեռնարկության գաղափարը պետք է կրի ժամանակավոր բնույթ և կիրառվի այնքան ժամանակ, քանի դեռ տեղական արտադրության ծախքերը բարձր են ներմուծվող ապրանքի գներից: Այս պարագայում տարիֆի կիրառումը տարածված միջոց է հաղթահարելու այդ դժվարությունները նոր ձևավորվող ձեռնարկությունում: Այստեղ հարկ է նշել, որ նոր ձևավորվող ձեռնարկությունների հովանավորչության տեսության հիմնադիրը Ֆրեդերիկ Լիստն է[1]:

Այս առումով, Պրեբիշն առաջ քաշեց այն գաղափարն, որ նոր ձևավորվող ձեռնարկությունների հովանավորչությունն պետք է ընդգրկի ամբողջ արդյունաբերությունն, այլ ոչ թե մեկ կոնկրետ արդյունաբերական ոլորտ: Պրեբիշի այս մոտեցումը բացատրվում էր նրանով, որ այդ ժամանակաշրջանում զարգացող երկրների առաջին անհրաժեշտության ապրանքների գները նվազում էին և հակառակ դրան զարգացած երկրների արդյունաբերական ապրանքների գներն աճում էին: Ավելին, ինչպես ներկայացվեց աշխատանքում, համաձայն Պրեբիշի, առաջին անհրաժեշտության ապրանքների պահանջարկի փոքր առաձգականությունը վատթարացնում է զարգացող երկրի առևտրի պայմանները՝ դրանով իսկ ապահովելով առևտրային հաշվեկշռի զգալի մեծ պակասուրդ: Սակայն, այստեղ Պրեբիշն առաջարկել է նոր

[1]List F. "The National System of Political Economy", Translated by Matile GA. Philadelphia, J.B. Lippincott and Co. 1856

ձևավորվող ձեռնարկության հովանավորչության ոչ ճիշտ կիրառում, քանի որ դրա կիրառումը պետք է օգնի երկրի արդյունաբերական այնպիսի ոլորտների զարգացմանն, որոնք կարող են ապահովել մրցակցային առավելություն, իսկ երկիրն արդյունաբերական բոլոր ոլորտներով գործնականում չի կարող ապահովել մրցակցային առավելություն:

Իսկ համաձայն նեոդասական տնտեսագիտական տեսության, գների համակարգն աշխատում է այնպես, որ ռեսուրսները բաշխվում են արդյունավետ: Հարաբերական առավելությունների դեպքում՝ հաշվի առնելով ապրանքների, ծառայությունների և մասնագիտացման փոխանակումը, կունենանք ավելի մեծ արտադրության ծավալներ և եկամտի մակարդակ, որը կհանգեցնի խնայողության մակարդակի ավելացմանը: Վերջինս հնարավորություն կտա ռեսուրսներն ուղղել սպառողական ապրանքների արտադրությունից դեպի կապիտալ ապրանքների արտադրության մեջ: Սակայն սա ճիշտ է այլ հավասար պայմաններում, իսկ իրականում սա միշտ չէ, որ տեղի է ունենում՝ հատկապես զարգացող երկրների տնտեսություններում:

Այսպիսով, ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման համար, մասնավորապես՝ արտահանման մեծացման համար, անհրաժեշտ է ապահովել արդյունաբերական զարգացած բազա: Այդ գործընթացում շատ մեծ դեր է խաղում արտահանման ներուժ ունեցող նոր ձևավորվող ձեռնարկությունների գործունեության արդյունավետության բարձրացումը: Հիմք ընդունելով աշխատանքում կատարված վերլուծությունները և ստացված արդյունքները՝ փորձենք պարզել, մեր կողմից առաջ քաշված արտահանման ներուժ ունեցող տնտեսական գործունեության ոլորտներում նոր ձևավորվող ձեռնարկությունների թիվը և դրանց գործունեության արդյունավետությունը: Հայաստանում նոր ձևավորվող ձեռնարկությունների թվի և արդյունաբերությունը բնութագրող կարևոր ցուցանիշների մասին պատկերացում է տալիս Աղյուսակ 3.1-1-ը:

Աղյուսակ 3.1-1

-	1998	1999	2000	2001	2002
Ձեռնարկ. թիվը	1050	1177	1234	1713	1816
Նոր ձեռնարկ. թիվը	-	127	57	479	103
արտ. ծավալը (մլրդ. դրամ)	261.2	283.5	300.5	309.3	341.1
Անձնակազմ (հազ. մարդ)	160.0	143.8	124.1	109.1	94.7

Արդյունաբերության բնութագրիչ ցուցանիշներ (Աղբյուր՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2003)

Աղյուսակ 3.1-1-ից հետևում է, որ արդյունաբերության մեջ նոր ձևավորվող ձեռնարկությունների թիվն ունի անընդհատ աճի միտում: Հետևաբար կառավարությունը պետք է ձեռնարկի միջոցներ՝ դրանց գործունեությունը բարելավելու և կարգավորելու համար:

Արդյունաբերության մեջ ձեռնարկությունների ամենամեծ թիվը և տարեց տարի ձևավորվող նոր ձեռնարկությունները սննդի արտադրության տնտեսական գործունեության ոլորտում է (Տես՝ Հավելված, Աղյուսակ 3.1-5): Ընդ որում, 1998թ. սկսած այս ոլորտում անընդհատ աճել է թողարկվող արտադրանքի ծավալը՝ 2002թ. կազմելով 126.7 մլրդ. դրամ: Դրանով էլ պայմանավորվել է այս ապրանքախմբով արտահանման ծավալների մեծացումը: Սակայն, ինչպես նկատվել է աշխատանքում կատարված վերլուծության արդյունքներից, այս ապրանքախմբով ներմուծման ծավալները դեռևս շարունակում են աճել:

Չնայած մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության մեջ գործող ձեռնարկությունների այդպիսի զգալի թվին՝ 2002թ. մոտ 269 ձեռնարկություն, այն 2002թ. ապահովել է ամբողջ արդյունաբերական արտադրանքի 4.2%-ը (Տես՝ Հավելված, Աղյուսակ 3.1-1): Աշխատանքում արտահանման ապրանքային կառուցվածքի վերլուծության ժամանակ պարզվել է, որ մեքենաներ և սարքավորումներ ապրանքախմբի արտահանումը վերջին տարիներին ունեցել է նվազման միտում, որը պայմանավորված է այս ճյուղում արտադրության համեմատաբար փոքր ծավալներով՝ 2002թ. 14.5 մլրդ. դրամ:

Քիմիական արդյունաբերության տնտեսական գործունեության ոլորտում, որտեղ 2001թ. ստեղծվել է 43 նոր ձեռնարկություն և 2002թ. ձեռնարկությունների ընդհանուր թիվը հասել է 92-ի՝ ապահովել է ամբողջ արդյունաբերական արտադրանքի 2.2%-ը (Տես՝ Հավելված, Աղյուսակ 3.1-2): Այստեղ նույնպես արտադրության ծավալները շատ փոքր են և ավելին, 2002թ. նկատվել է նվազման միտում՝ կազմելով 7.4 մլրդ. դրամ: Դրանով էլ պայմանավորվել է այս ապրանքախմբով արտահանման ծավալների նվազումը և հակառակ դրան ներմուծման ծավալների աճը:

Շինանյութերի արտադրության տնտեսական գործունեության ոլորտում, որտեղ 2001թ. ստեղծվել է 32 նոր ձեռնարկություն և 2002թ. դրանց ընդհանուր թիվը կազմել է 171 ձեռնարկություն՝ ապահովել է ամբողջ արդյունաբերական արտադրանքի 3.0%-ը (Տես՝

Հավելված, Աղյուսակ 3.1-3): 2000թ սկսած արդյունաբերության այս ոլորտում նկատվել է արտադրության ծավալների՝ արժեքային առումով, ավելացում՝ 2002թ. կազմելով 10.2 մլրդ. դրամ:

Հայաստանի դեպքում, արտահանման ներուժ ունեցող տնտեսական գործունեության ոլորտներում նոր ձևավորվող ձեռնարկությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, կառավարության միջամտության ձև է ներմուծման տարիֆի կիրառումը: Սակայն հնարավոր է, որ դա արդյունավետ չլինի մի քանի պատճառներով.

- հնարավոր է, որ տվյալ ձեռնարկության կամ ձեռնարկությունների գործունեությունը խթանելու համար ներմուծման տարիֆի կիրառումն արդյունավետ միջոց չէ սպասվող արդյունքին հասնելու համար,
- հետագայում բավական դժվար է հրաժարվել հովանավորչական քաղաքականությունից, և հնարավոր է, որ նոր ստեղծված կամ զարգացող ձեռնարկություններն երբեք չգործեն արդյունավետ,
- վերջապես տարիֆի կիրառումն ոչ արդյունավետ է բաշխում ռեսուրսները և նվազեցնում է սպառողների բարեկեցության մակարդակը:

Սակայն, այլ հավասար պայմաններում, ՀՀ առևտրային քաղաքականության մեջ օպտիմալ տարիֆի ժամանակավոր կիրառումը հնրավորություն կտա կրճատել ներմուծման ծավալները՝ տեղական արտադրողներին հնարավորություն տալով բարելավել իրենց ապրանքների որակը և հասնել արտադրության ծախքերի այնպիսի մակարդակի, որը հետագայում դրանց հնարավորություն կտա մրցակցել առանց հովանավորչական քաղաքականության:

Կառավարության միջամտության մեկ այլ ձև է, օրինակ ձեռնարկություններին սուբսիդիաների տրամադրումը: Ձեռնարկությունների սուբսիդավորումը հնարավոր է ավելի նպատակահարմար լինի Հայաստանի տնտեսության համար, չնայած ինչպես տարիֆի, այնպես էլ սուբսիդավորման դեպքում, ռեսուրսները կարող են ոչ արդյունավետ բաշխվել, սակայն այս դեպքում սպառողների բարեկեցության նվազում չի առաջանում: Համաձայն Լինդերտի, արտադրական սուբսիդիան ավելի նախընտրելի է, քան տարիֆը, քանի որ այն

հնարավորություն է տալիս ավելի քիչ սոցիալական ծախսերով հասնելու արտադրության և զբաղվածության ավելի մեծ մասշտաբների, ինչը բացակայում է տարիֆի դեպքում[1]:

Հայաստանի համար հնարավոր տարբերակ է նաև ցածր տոկոսադրույքներով ձեռնարկություններին վարկերի տրամադրումը: Եթե արտադրության առկա բարձր ծախքերը հնարավոր լինի փոխհատուցել ապագայում արտադրության ծախքերի նվազման հաշվին, ապա դրանք կարող են փոխառություններ վերցնել իրենց ապագա եկամուտներից:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ մեր կողմից առաջարկվում է կիրառել ժամանակավոր հովանավորչական քաղաքականություն, մասնավորապես՝ օգտագործելով ժամանակավոր ներմուծման տարիֆներ: Դիտարկենք ներմուծման տարիֆի ժամանակավոր կիրառման ազդեցությունն արտադրողի վրա: Գրաֆիկ 3.1-1-ում ուղղահայաց առանցքը ներկայացնում է ծախքեր/գինն, իսկ հորիզոնական առանցքը՝ ժամանակահատվածը: Անհատական արտադրողի համար միջին ծախքերի կորը (ՄԾ) ժամանակի ընթացքում նվազում է, քանի որ տեղի է ունենում «սովորելու գործընթացը», որին կանդրադառնանք աշխատանքի հետագա քննարկումներում:

Գրաֆիկ 3.1-1



Հովանավորչական քաղաքականության ազդեցությունը նոր ձևավորվող ձեռնարկության գործունեության արդյունավետության բարձրացման վրա

Ներմուծման գինը (P0) , որը հաշվարկվում է CIF գնով, ժամանակի ընթացքում ընդունում ենք հաստատուն, այսինքն՝ համաշխարհային գինը դիտարկվող ժամանակահատվածում չի

[1]Lindert P. H. and Pugel T. A. " International Economics", Irwin 1996

փոփոխվում: Այսպիսով, ինչպես հետևում է գրաֆիկից t_1 ժամանակում նոր ստեղծված ձեռնարկության արտադրության ծախքերը համընկնում են միջազգային ստանդարտներին, իսկ t_1 ժամանակաշրջանից հետո արդեն կարելի է առևտուրն ազատականեցնել և ձեռնարկությունն արդեն կմրցակցի օտարերկրյա շուկաներում՝ արտահանելով իր արտադրանքը: Արտաքին արդյունքները ներկայացված են ԱԱ կորի միջոցով, որը ստացվում է նոր ստեղծված ձեռնարկության սեփական ծախքերի կորից՝ ՄԾ հանած արտադրության յուրաքանչյուր միավորից ստացված օգուտներն, որոնք ստեղծվել են ուրիշների կողմից: Այսպիսով, ներառելով արտաքին արդյունքների՝ ԱԱ, կորը ձեռնարկությունն արտադրության ծախքերի միջազգային ստանդարտներին կհասնի t_0 ժամանակում: Սակայն, այն ենթադրությունն, որ համաշխարհային գինը ժամանակի ընթացքում հաստատուն է՝ իրական չէ, քանի որ իրականում համաշխարհային գինը կարող է նվազել՝ արտադրողականության մեծացման հաշվին: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ կարելի է ընդգծել, որ միայն այն ձեռնարկությունները հաջողություն կունենան, որոնք հասկանում են այդ ամենն, արագ ադապտացվում են, տեխնոլոգիապես ակտիվ են և չեն գնում ոչ արդյունավետության հովանավորչական քաղաքականության հաշվին:

Ավելին, ձեռնարկատերն, որը կատարում է ծախքեր արտադրության գործընթացը բարելավելու և արտադրության ամենալավ ուղին գտնելու համար, որպեսզի կարողանա դիմակայել օտարերկրյա մրցակցությանը, կանգ է առնում այնպիսի խնդրի առաջ, որ այդ տեխնիկական իմացությունն ազատ կարող է հասու դառնալ մյուս տեղական արտադրողների համար և դրանք կարող են առանց ծախքեր կատարելու արագորեն կիրառել: Մրցակցության հետևանքով գինը կնվազի և ձեռնարկությունն, որը ծախքեր է կատարել չի կարող վերականգնել իր ծախքերը և ստանալ օգուտներ: Բացի այդ, հովանավորչական քաղաքականությունն ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է որպեսզի ձեռնարկությունները ձեռք բերեն մասշտաբի արդյունք: Շատ արտադրական գործընթացներում՝ արտադրության մի ինչ-որ մակարդակից սկսած, յուրաքանչյուր մեկ լրացուցիչ միավորի արտադրության ծախքերը նվազում են: Այդ նվազագույն մակարդակն, որից հետո սկսում է գործել մասշտաբի արդյունքը, կախված է ձեռնարկությունների արտադրական ֆունկցիաներից: Այստեղից հետևում է, որ որքան ձեռնարկությունները շատ արտադրեն և իրացնեն, այնքան կմեծանա դրանց արդյունավետությունը: Մասշտաբի արդյունքն ապահովելու համար մեծ դեր է խաղում

սպառողների թիվը և գնողունակության աստիճանը: Հայաստանի դեպքում առկա է փոքր ազգային շուկա և բնակչության ցածր գնողունակության մակարդակ, սակայն եթե հաջողվի իրականացնել հովանավորչական քաղաքականություն , ապա հնարավոր է, որ արտադրված ապրանքներն իրացվեն նաև օտարերկրյա տարողունակ և բարձր գնողունակություն ունեցող շուկաներում՝ դրանով իսկ կարգավորելով առևտրային հաշվեկշիռը:

Տնտեսության մեջ ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության կիրառումը կարող է առաջացնել արտաքին արդյունքներ և կապեր այլ տնտեսական գործունեության ոլորտների հետ: Արտաքին արդյունքները սովորաբար սահմանվում են որպես անհատական արտադրողների կամ սպառողների կողմից ստեղծված արդյունքներ, սակայն նրանք կապ չունեն այդ արդյունքի ծախքերի և եկամուտների հետ: Այստեղ արդեն կարելի է դիտարկել ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության կիրառումից ձևավորվող տեխնոլոգիական և դրամական արտաքին արդյունքները: Դիտարկենք տեխնոլոգիական արտաքին արդյունքը:

Այսպես, X ձեռնարկությունը կատարում է ծախքեր իր աշխատողների ուսուցման վրա, որպեսզի բարձրացնի արտադրողականությունը: Ենթադրենք աշխատողը X ձեռնարկությունից տեղափոխվում է Y ձեռնարկություն, այս դեպքում X ձեռնարկությունն ունենում է կորուստ: Այսպիսով, եթե հովանավորվող ձեռնարկություններն ունեն հնարավորություն մեծացնելու իրենց ծախքերը, մասնավորապես՝ ուսուցման ծախքերն, ապա մնացած ձեռնարկություններն առանց որևէ ծախքեր կատարելու դրանից շահում են:

Դրամական արտաքին արդյունքներն առաջանում են շուկայում գների տատանումներից: Ենթադրենք կտորեղեն արտադրող Y ձեռնարկությունում տեղի ունի մասշտաբի աճող հատույց, այսինքն՝ նվազում են արտադրության ծախքերը (Տես՝ Սխեմա 3.1-3): Այս դեպքում հագուստ արտադրող Z ձեռնարկությունը կարող է հասնել ավելի մեծ շահույթի մակարդակի: Կտորեղենի արտադրության մեծացումը կստեղծի նաև պահանջարկ X ձեռնարկության կողմից բամբակի արտադրության մեծացման :

Սխեմա 3.1-3



Դրամական արտաքին արդյունքների մեկնաբանումը

Գոյություն ունեն շատ թերահավատություններ ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության կիրառումից առաջացող արտաքին արդյունքների նկատմամբ: Օրինակ, որոշ տնտեսագետներ գտնում են, որ կառավարության համար ավելի նպատակահարմար կլինի ուղղակիորեն սուբսիդավորել ձեռնարկության աշխատողների ուսուցումը: Սա հնարավորություն կտա խուսափել հովանավորչական քաղաքականության հետևանքով առաջացող սպառողի ավելցուկի կորուստից: Սակայն, կարելի է համաձայնվել այս մտքի հետ, եթե որոշակի ձեռնարկության, ձեռնարկությունների կամ որոշակի արտադրության ոլորտի առջև գոյություն ունի միայն աշխատողների ուսուցման խնդիրը: Հաջորդ հիմնական քննադատական մոտեցումն այն է, որ ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունը կենտրոնանում է սահմանափակ տեղական շուկայի վրա և սա լուրջ սահմանափակում է մասշտաբի աճող հատույցի հասնելու համար: Այստեղ մենք կրկին չենք կարող համաձայնվել այս մոտեցման հետ, քանի որ մենք առաջարկում ենք կիրառել ժամանակավոր, ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականություն: Հետագայում մասշտաբի աճող հատույցը կապահովվի համաշխարհային շուկայի միջոցով:

Տնտեսության մեջ մի որոշակի տնտեսական գործունեության ոլորտի և այլ ոլորտների հետ ունեցած կապերը սերտորեն փոխկապված են արտաքին արդյունքների հետ և երբեմն դրանք հանդես են գալիս որպես հոմանիշներ: 1958թ. Հիրշմանը արտադրական փոխկապակցվածության շրջանակներում առաջ քաշեց «հաջորդող» և «նախորդող» կապեր հասկացությունները: Համաձայն նրա, հաջորդող կապերն առաջանում են մի որոշակի արտադրությունից դեպի սպառողներ հարաբերություններում, իսկ նախորդող կապերը՝ մի որոշակի արտադրությունից դեպի մատակարարներ հարաբերություններում:

Սխեմա 3.1-4



Հաջորդող և նախորդող կապերը տնտեսության մեջ

Այսպես, հագուստ արտադրող Z ձեռնարկությանն անհրաժշետ է Y ձեռնարկությունից կտորեղեն (Տես՝ Սխեմա 3.1-4): Այս կապը բնորոշվում է որպես ուղղակի նախորդող կապ: Իր հերթին կտորեղենի արտադրող Y ձեռնարկությանն անհրաժեշտ է բամբակ: Այս կապը բնորոշվում է որպես անուղղակի կապ: Z ձեռնարկության սպառողների հետ ունեցած կապերն այստեղ որպես հաջորդող կապեր են:

Այստեղ ամբողջ հարցն այն է, որ որքան շատ և փոխկապակցված են այս կապերն այնքան մեծ են դրա ընդլայնման հնարավորությունները: Գոյություն ունի տարածված կարծիք, որ արտադրության ոլորտներն առաջացնում են ավելի շատ կապեր և արտաքին արդյունքներ, քան տնտեսության մեջ այլ ոլորտները:

Այսպիսով, կառավարության միջամտությունն արտաքին առևտրում առավել ևս ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության իրականացումն, որը առաջացնում է արտաքին արդյունքներ, շատ կարևոր ռազմավարություն է առևտրային հաշվեկշռի կարգավորման հարցում :

Նոր ձևավորվող ձեռնարկությունների հովանավորչության տեսությունը հաճախ սխալ է մեկնաբանվում, կամ ներկայացվում: Այդ պատճառով էլ գրականությունը հեղեղված է քննադատությամբ և մոլորությամբ: Տեսության քննադատները նոր ձևավորվող ձեռնարկությունների հովանավորչության կողմնակիցներին համարում են ազատ առևտրին դեմ, կամ նույնիսկ դեմ միջազգային առևտրին: Եվ այս ամենը տեղի ունի սոսկ այն պատճառով, որ քննադատները նոր ձևավորվող ձեռնարկությունների հովանավորչությունը համարում են ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության հոմանիշ: Սակայն,

քաղաքականության քննադատներն արտահանումը խրախուսող առևտրային քաղաքականությունը համարում են «ազատ առևտրի» հոմանիշ, որը իրականում այդպես չէ: Իրականում նոր ձևավորված ձեռնարկությունների հովանավորչությունը կարող է հանդիսանալ ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության գործիքներից մեկը՝ կարգավորելու առևտրային հաշվեկշիռը:

Ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության նպատակը կարճաժամկետ հատվածում պետք է լինի առևտրային արդյունավետությունը՝ մի կողմ թողնելով առևտրի հովանավորչությունից առաջացող տեխնիկական ոչ արդյունավետությունը: Այնուհետև, երկարաժամկետ հատվածում անհրաժեշտ է կա'մ ազատականացնել առևտուրը, կա'մ կողմնորոշվել դեպի արտահանումը խրախուսող առևտրային քաղաքականություն: Ընդ որում, երկարաժամկետ հատվածում առևտրային արդյունավետությունը կասկածելի է, քանի որ փոփոխվում են տեխնիկական պայմանները և տեղական ու համաշխարհային գները:

Հայաստանում ստեղծված նոր ձեռնարկությունները լուրջ խնդիրների են հանդիպում օտարերկրյա բազմամյա փորձ ունեցող ձեռնարկությունների կողմից արտադրած ապրանքների հետ մրցակցության պայմաններում: Դրա համար անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր հովանավորչական քաղաքականություն, քանի որ ժամանակի ընթացքում արտադրության ծախքերը կնվազեն մոտենալով միջազգային ստանդարտներին: Աշխատանքում չի առաջարկվում միաժամանակ հովանավորել արդյունաբերության բոլոր ոլորտները, գործնականում դա նաև գրեթե անհնարին է: Այլ առաջարկվում է ժամանակի որոշակի պահին կատարել ընտրանք, թե որ ոլորտներն են անհրաժեշտ և արդյունավետ հովանավորելու համար: Այստեղ հարկ է նշել, որ այս գործընթացը բավական բարդ է և ցանկալի է, որ սկզբնական պահին հովանավորվի թեթև արդյունաբերության ոլորտը, քանի որ դա, ի տարբերություն ծանր արդյունաբերության, չի պահանջում բավական զգալի միջոցներ և երկար ժամանակահատված:

Այսպիսով, ՀՀ տնտեսության մեջ հովանավորչական քաղաքականության ժամանակավոր կիրառումը հնարավորություն կտա զարգացնել տեղական արդյունաբերական բազան՝ տեղական արտադրողներին հնարավորություն տալով բարելավել իրենց ապրանքների

որակը և հասնելու արտադրության ծախքերի այնպիսի մակարդակի, որը հետագայում դրանց հնարավորություն կտա մրցակցել առանց հովանավորչական քաղաքականության:

Մենք այստեղ չենք առաջարկում վերադառնալ ավանդական տեսքով ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության կիրառմանը և ոչ էլ դա հնարավոր կլինի ներկայիս առևտրի ազատականացման և գլոբալացման ժամանակաշրջանում: Այնուամենայնիվ, գոյություն չունի զարգացման այլընտրանքային ձև, որը հնարավորություն կտա վերակառուցել տեղական հնարավորությունները: Սակայն, ԱՀԿ շրջանակներում առկա համաձայնագրերը Հայաստանին հնարավորություն չեն տա, կամ կսահմանափակեն հնարավորություններն այդ վերակառուցման գործում: Այդ պատճառով որքան հնարավոր է քաղաքականությունը պետք է համատեղել ԱՀԿ համաձայնագրերի և պահանջների հետ: Քանի որ, ՀՀ-ն հիմնականում ներմուծող երկիր է, ապա ներմուծման գործընթացի հուսալիությունը և դրա անվտանգությունը ներքին արտադրության համար կարևոր նշանակություն ունի: ԱՀԿ Անվտանգության համաձայնագիրը (Agreement of Safeguards) թույլ է տալիս անդամ երկրներին մշակել և կիրառել տեղական արտադրության անվտանգության ապահովման այն չափաքանակներն, որից ավելի ներմուծումը կարող է լուրջ վնաս պատճառել ներքին արտադրությանը: Այսպիսով, ԱՀԿ-ն երկրներին թույլ է տալիս կիրառել ժամանակավոր հովանավորչական քաղաքականություն, եթե երկիրը ցույց է տալիս, որ դա իրեն անհրաժեշտ է:

Բացի այդ, ավելի ընդարձակելով դիտարկվող խնդիրները, նոր ձևավորվող ձեռնարկությունների գաղափարը չի վերաբերվում միայն արտադրության գործընթացին և ոչ էլ սահմանափակվում է միայն տեղական շուկայով: Արտադրությունն, որը կազմակերպվում է արտահանման համար, նույնպես պահանջում է այդպիսի ժամանակահատված, սակայն արտահանման դեպքում, այլ հավասար պայմաններում, ժամանակահատվածը շատ ավելի երկար է, քան տեղական շուկայի համար պահանջվող ժամանակահատվածը: Դա այդպես է, քանի որ արտահանման գործընթացում ձեռնարկատերերը ներգրաված են հետևյալ շղթայի մեջ՝

Սխեմա 3.1-5



Արտահանման գործընթացում ընդգրկված ձեռնարկությունների արդյունավետության բարձրացման անհրաժեշտ փուլերը

Սխեմա 3.1-5-ը փաստում է, որ արտահանման ներուժ ունեցող նոր ձևավորվող ձեռնարկությունները մշտապես պետք է գտնվեն այդ շղթայի մեջ, իսկ դրանց համար ժամանակահատվածը շատ ավելի երկար է, քանի որ, ի տարբերություն տեղական շուկայի, միջազգային շուկայի պահանջներն էլ ավելի խիստ են: Բացի այդ, այստեղ մեծ դեր են խաղում նաև արտադրական գործընթացում կիրառվող տեխնոլոգիաները:

Այսպիսով, հովանավորչական քաղաքականությունը չպետք է դիտարկել որպես անընդհատ գործընթաց, այլ դրա միջոցով որոշակի զարգացման մակարդակի հասնելուն պես պետք է անընդհատ մեծացնել ազատ առևտրի մակարդակը: Այսինքն, հովանավորչությունը պետք է լինի ժամանակավոր և ամենակարևորը հասնի իր նպատակին: Առևտրի ազատականացումն, եթե այն կատարվում է վաղաժամ և հանկարծակի, կվնասի նոր ձևավորվող ձեռնարկություններին: Այստեղ հարկ է նշել, որ նույնիսկ Ադամ Սմիթը և Դավիդ Ռիկարդոն զգուշացրել են հանկարծակի առևտրի ազատականացումից առաջացող վնասների մասին: Համաձայն Սմիթի, «Ազատ առևտուրը պետք է հաստատվի աստիճանորեն և շրջահայացորեն, քանի որ, եթե առևտրի արգելքներն անմիջապես վերացվեն, ապա նույն տեսակի արտասահմանյան էժան ապրանքները կհեղեղեն մեր շուկան և հազարավոր աշխատողներ կզրկվեն իրենց աշխատանքից և ապրելու միջոցներից[1]»

Այսպիսով, որպեսզի տեղական նոր ստեղծված ձեռնարկությունները կարողանան դիմակայել օտարերկրյա մրցակցությանն, անպայման անհրաժեշտ է կառավարության

[1]Panic M. "National Management of International Economy", Macmillan Press, pp. 123-124, London 1988

ժամանակավոր միջամտությունն առևտրային քաղաքականության մեջ: Նոր ձևավորվող ձեռնարկությունները հավասար պայմաններում չեն կարող մրցակցել արդեն ձևավորված արտասահմանյան ձեռնարկությունների հետ: Դրանց անհրաժեշտ է կառավարության կողմից որոշակի աջակցություն, որպեսզի կարողանան մրցակցել օտարերկրյա ձեռնարկությունների հետ:

3.1-2 Ձեռնարկություններում «սովորելու» գործընթացի հիմնախնդիրը

Ինչպես բացահայտվեց աշխատանքում, ՀՀ տնտեսության տարբեր գործունեության ոլորտներում, եթե անգամ ստեղծվում են նոր ձեռնարկություններ, ապա ընդհանուր թողարկվող արտադրանքի ծավալները շատ դանդաղ տեմպերով են ավելանում, իսկ որոշ դեպքերում նույնիսկ նվազում են: Այդպիսի տնտեսական գործունեության ոլորտներից էին, օրինակ՝ մեքենաներ և սարքավորումների արտադրությունը, թեթև և քիմիական արդյունաբերությունը:

Զարգացող երկրներում արտադրողականության աճը սովորաբար չի առաջնորդվում նորարարությամբ, այլ այն տեղի է ունենում ձեռնարկություններում «սովորելու» գործընթացի միջոցով: Ձեռնարկությունները կարող են զգալի մեծացնել հասարակական արդյունքը՝ յուրացնելով և հարմարեցնելով զարգացած երկրների առաջատար տեխնոլոգիաները: Այս առումով, Ամսդենը նշել է, որ որպեսզի այս գործընթացը տեղի ունենա, ձեռնարկությունները պետք է ստանան ռենտա[1]:

Հաճախ շատ դժվար է տարբերակել նորարարությունը և ձեռնարկություններում ընթացող «սովորելու գործընթացը», քանի որ ձեռնարկությունների «սովորելու» գործընթացն իր մեջ պարունակում է ոչ միայն առկա տեխնոլոգիաների ընդօրինակում, այլ նաև հարմարեցում տեղական պայմաններին, ինստիտուտներին: Այսինքն, ձեռնարկություններում ընթացող «սովորելու» գործընթացն իր մեջ կարող է պարունակել նաև նորարարություն: Նորարարների նման ձեռնարկատերերն, որոնք արագ կիրառում են «սովորելու» գործընթացն, ի վիճակի կլինեն իջեցնել սահմանային ծախքերը և բարելավել ապրանքի որակը: Սակայն, նորարարության նման ձեռնարկությունների «սովորելու» գործընթացը կարող է պահանջել մեծ ջանքեր և լինել ռիսկային: Տեսականորեն ձեռնարկատերն, այլ հավասար պայմաններում, ներդրում կկատարի ռիսկային ոլորտում, եթե գոյություն ունի զարգացած կապիտալի և ապահովագրական շուկաներ: Նշված շուկաները Հայաստանում զարգացած չեն, և այդ պատճառով էլ այստեղ ձեռնարկատերերի մեծ մասը նախընտրում են ցածր արտադրողականությամբ տեղական հին տեխնոլոգիաները բարձր արտադրողականություն ապահովող, սակայն ռիսկային, նորերից: Պարզ է, որ բարձր արտադրողականություն ապահովող

[1]Amsden A. “Asia’s Next Giant”, Oxford University Press, Oxford 1989

տեխնոլոգիաների կիրառությունն արտադրության մեջ կբարձրացնի հասարակության բարեկեցությունը: Սակայն ձեռնարկատերը՝ ներդրման ոչ հաջողման դեպքում, կունենա մեծ ֆինանսական կուրուստներ, քանի որ բոլորը գիտեն, որ այդպիսի տեխնոլոգիաները բավական թանկ արժեն: Այսպիսով, որպեսզի այդպիսի հակասություն չառաջանա, Հայաստանի կառավարությունը կարող է սուբսիդավորել ձեռնարկությունում ընթացող «սովորելու» գործընթացը: Նորարարության և ձեռնարկության «սովորելու» գործընթացի միջև անալիտիկ նմանությունն այն է, որ երկու դեպքում էլ ժամանակի ընթացքում ռենտան դրդապատճառներ է ստեղծում արտադրության ծախքերի նվազման համար: Ձեռնարկության «սովորելու» գործընթացի պարագայում ռենտան դա, ըստ էության, պայմանական տրամադրված սուբսիդիաներն են, որը մենք կանվանենք *«սովորելու» ռենտա*: Ի տարբերություն *Շումպետերյան ռենտայի*, որն առաջանում է հետո՝ որպես նորարարության արդյունք, ձեռնարկության «սովորելու» գործընթացի ռենտան առաջանում է նախօրոք: Սուբսիդիաներն, որոնք տրամադրվում են ձեռնարկությունում «սովորելու» գործընթացի համար պայմանական են և մի որոշակի ժամանակահատվածում պետք է հասնեն այդ նպատակին, իսկ սուբսիդիաներն, որոնք տրմադրվում են որպես ուղղակի տրանսֆերտներ կարող են ունենալ մի շարք այլ նպատակներ:

Դիտարկենք Հայաստանում գործող մի քանի ձեռնարկություններ, որոնք հաջողության են հասել սովորելու գործընթացի հաշվին, կամ ունեն որոշակի խնդիրներ այդ բնագավառում: 1993թ., երբ Հայաստանը գտնվում էր անցումային փուլի սկզբնական շրջանում երկրում գործող ձեռնարկությունները հայտնվել էին ծանր վիճակում: Նույնպիսի վիճակում էր նաև «Ձերմուկ» հանքային ջրերի ձեռնարկությունը: Հետագայում ձեռնարկությունն իրականցված տեխնիկական վերազինման և տեխնոլոգիական վերակառուցման շնորհիվ հասավ մեծ հաջողությունների՝ աշխատողների թիվը մոտ 5 անգամ աճեց՝ հասնելով 250-ի, բարելավվեց աշխատանքային պայմանները և բարձրացվեց աշխատավարձերի մակարդակը[1]: Ներկայումս ձեռնարկության թողարկած արտադրանքը սպառվում է թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկաներում, իսկ իրացման հիմնական արտաքին շուկաներն են՝ ԱՄՆ, Ռուսաստան, Լիբանան, Գերմանիա, Չեխիա, Լատվիա և այլ երկրներ : Իսկ «Երևանի գարեջուր» ՓԲ ընկերությունը գարեջրի պատրաստման

[1]Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա , N 6(26), էջ 45-46, Երևան 2003

համար նախընտրում է դասական տեխնոլոգիաներն, որի դեպքում ավելի երկար ժամանակաշրջան է պահանջվում, քան ժամանակակից տեխնոլոգիաներ օգտագործելիս: Ձեռնարկության ղեկավարության համոզմամբ, չնայած նրանք այդ պատճառով կորցնում են շուկայի որոշ մասը, սակայն հավատարիմ են մնում իրենց սկզբունքներին: 2001թ.-ից ձեռնարկությունն արտադրում է նաև բնական հյութեր, որոնց փաթեթավորման համար օգտագործում է ավստրիական «Կոմբին-բլոկ» հոսքագիծը, քանի որ շուկայում առկա մրցակցության պայմաններում հաջողության հասնելու համար պետք է ուշադրություն դարձվի նաև ապրանքի արտաքին տեսքի վրա: Բացի այդ ձեռնարկությունը ներկայումս արտադրում է նաև «Ձերմուկ» հանքային և սովորական աղբյուրի ջրեր: Քանի որ նշված արտադրատեսակներն արդեն ներքին շուկայում ունեն պահանջարկ, ուստի մրցակցության մեջ հաջողություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ապրանքի արտաքին տեսքը և որակը, մասնավորապես՝ սովորական աղբյուրի ջրի ֆիլտրացիայի համար ներմուծվել է գերմանական հոսքագիծ, որը բարձր որակով է կատարում այն:

Դիտարկենք մեկ ուրիշ օրինակ՝ «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ, որը ներկայումս ունի մոտ 400 աշխատատեղ՝ 78 հազ. դրամ միջին աշխատավարձով[1]: 1998թ. այս ձեռնարկությունն արտադրում էր Հայաստանում սպառվող կերակրի աղի գրեթե կեսն, իսկ մնացածը ներմուծվում էր: Ներկայումս այս ձեռնարկությունը հանրապետությունում աղ արտադրող միակ ձեռնարկությունն է և արտադրում է ինչպես տեխնիկական, այնպես էլ կերակրի աղ: Արտադրության ընդհանուր ծավալը 2002թ. կազմել է 30, իսկ 1997թ. այն կազմել էր 22 հազ. տոննա աղ: Տեխնիկական աղի տարեկան արտադրության 11-13% արտահանվում է միայն Վրաստան, քանի որ ներկայիս Հայաստանի շրջափակման և աղի ոչ բարձր արժեք ունենալու պայմաններում, դա միակ տնտեսապես արդյունավետ առևտուրն է: Սակայն այս հաջողությունների հետ մեկտեղ, ձեռնարկության ղեկավարությունը նշում է, որ մեծ խնդիրներ ունի արտադրական նորագույն սարքավորումների և տեխնոլոգիական պրոցեսների փորձի ձեռք բերման գործընթացում և դրանք պետք է շուտափույթ լուծվեն: Հակառակ դեպքում, ինչպես նշում է ձեռնարկության ղեկավարությունը, Հայաստանն ունենալով հսկայական աղի պաշարներ, կրկին ստիպված կլինի աղ ներմուծել : 2002թ. ձեռնարկությունը դարձավ Աղ Արտադրողների

[1] Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N 6(26), էջ 38-39, Երևան 2003

Եվրոպական Ասոցիացիայի (ESPA) անդամ, որը հնարավորություն կտա հաղթահարել ձեռնարկությունում «սովորելու» գործընթացի խնդիրները: Հարկ է նշել, որ ԱՊՀ երկրներից միայն Հայաստանն է Աղ Արտադրողների Եվրոպական Ասոցիացիայի անդամ:

Որպեսզի ցույց տանք ձեռնարկությունում ընթացող «սովորելու» գործընթացի կարևորությունը և անհրաժեշտությունը, դիտարկենք հետևյալ մոդելը: Ենթադրենք տեղական տեխնոլոգիաների պատճառով տեղական արտադրության սահմանային ծախքերը մի որևէ ձեռնարկությունում, կամ տնտեսական գործունեության ոլորտում ավելի մեծ են, քան արտասահմանյան ձեռնարկությունների սահմանային ծախքերը: Այլ կերպ, տեղական արտադրողականությունն այդ ոլորտում այնքան չնչին է, որ չնայած ցածր աշխատավարձի մակարդակի, արտադրության ծախքերը բարձր են: Ենթադրենք թողարկվող արտադրանքի համաշխարհային գինը Pw-ն է (Տես՝ Գրաֆիկ 3.1-2), տեղական արտադրողների սահմանային ծախքերի կորը DCE-ն է, իսկ արտասահմանյան ձեռնարկատերերի սահմանային ծախքերի կորը ABQ-ն է:

Գրաֆիկ 3.1-2



Ձեռնարկությունում «սովորելու» գործընթացի ազդեցությունն արտադրողականության վրա

Այս իրավիճակում տեղական արտադրողները չեն արտադրի որևէ արտադրանք և երկրի տեղական պահանջարկը կբավարարվի ներմուծման հաշվին: Հարկ է նշել, որ շատ դեպքերում արտադրության բարձր ծախքերն ոչ թե արդյունք են առաջատար տեխնոլոգիաներ չկիրառելուն, այլ կախված են տեխնոլոգիաների յուրացման պահանջվող ժամանակից: Տեսականորեն ձեռնարկատերը պետք է ֆինանսավորի այդ կարճաժամկետ կորուստները, քանի որ, այլ հավասար պայմաններում, ցածր աշխատավարձի մակարդակի դեպքում, եթե

արտադրողականությունն աճի նույնիսկ մասնակի, ապա տեղական ձեռնարկատերն ի վիճակի կլինի ձեռք բերել առավելություն օտարերկրյա մրցակիցների հանդեպ:

Հաշվի առնելով վերը նշվածն, ենթադրենք կառավարությունը տրամադրում է միավոր արտադրանքի համար AD մեծությամբ սուբսիդիա, իսկ ընդհանուր սուբսիդիայի մեծությունը ABCD-ն է: Դա փաստորեն հանդիսանում է ռենտա տեղական ձեռնարկատիրոջ համար («սովորելու» ռենտա): Այստեղ հարկ է նշել, որ արտադրության գործոնները, մասնավորապես՝ աշխատուժն, անպայման չէ, որ ստանա ռենտա: Տրամադրված սուբսիդիան ուղղակի փոխհատուցում է ձեռնարկության ցածր արտադրողականությունն, իսկ եթե նախկինում գոյություն ուներ գործազրկություն կամ, եթե աշխատողները սուբսիդավորված ձեռնարկություններում ստանում են ավելի շատ աշխատավարձ, քան նախկինում, ապա այդ դեպքում աշխատուժը նույնպես ստանում է ռենտա: Կառավարության տրամադրած սուբսիդիան իջեցնում է արտադրության սահմանային ծախքերը և տեղական ձեռնարկատիրոջ սահմանային ծախքերի կորն արդեն հանդիսանում է ABCE–ն: Սա տեղական ձեռնարկատերերին հնարավորություն է տալիս արտադրելու OQ_1 ծավալով արտադրանք: Բնական է, որ այսպիսի սուբսիդիան ոչ արդյունավետ է, քանի որ դա հնարավորություն է տալիս կազմակերպել արտադրության այնպիսի մի ոլորտում, որտեղ արտադրության ծախքերն ավելի մեծ են, քան արտադրվող վերջնական ապրանքի գինն է՝ առաջացնելով PwFCD մեծությամբ հասարակական կորուստ: Այսպիսով, սուբսիդավորումն անմիջապես առաջացնում է հասարակական կորուստ և ստատիկ վիճակում ոչ արդյունավետ է:

Սակայն, սուբսիդավորումն իմաստ կունենա, եթե այն տրվում է պայմանական մի որոշ ժամանակահատվածով , որպեսզի ձեռնարկություններին հնարավորություն տա հաղթահարել «սովորելու» գործընթացը: Հետագայում ձեռնարկությունում «սովորելու» գործընթացի հաջող իրականացումն, եթե նվազեցնի տեղական սահմանային ծախքերն առնվազն մինչև միջազգային մակարդակ, կամ ավելի ցածր, ապա սուբսիդավորումը կլինի արդյունավետ: Հարկ է նշել, որ Հայաստանի դեպքում արտադրողականության միջազգային ստանդարտների պահպանման և աշխատավարձի ցածր մակարդակի դեպքում տեղական սահմանային ծախքերը կարող են միջազգային սահմանային ծախքերից փոքր լինեն: Հենց որ տեղական սահմանային ծախքերը հավասարվում են միջազգային սահմանային ծախքերին, տրամադրվող ABCD մեծությամբ

սուբսիդիան այլևս անհրաժեշտ չէ: Տեղական արտադրությունը կարող է ընդլայնվել մինչև OQ_2 մակարդակ և արդյունքում առաջանում է APQ մեծությամբ արտադրողի ավելցուկ:

Ձեռնարկության «սովորելու» գործընթացի հասարակական օգուտը դա արտադրողի ապագա ավելցուկի՝ APQ-ի, դիսկոնտավորված մեծությունն է, գումարած բոլոր դրական արտաքին ազդեցությունները մնացած ոլորտների վրա:

Ձեռնարկության «սովորելու» գործընթացի հասարակական ծախսը դա հասարակական կորուստի՝ PwFCD-ի, դիսկոնտավորված մեծությունն է, գումարած այդ ոլորտ փոխանցած ABCD մեծության հասարակական ծախսը:

Այլ հավասար պայմաններում, հաշվի առնելով այն հանգամանքն, որ կորուստները չպետք է գոյատևեն երկար ժամանակահատված և ձեռնարկությունում «սովորելու» գործընթացից առաջացած օգուտները բավական մեծ են, զուտ հասարակական օգուտը ժամանակի ընթացքում կարող է լինել դրական: Սա նշանակում է, որ ձեռնակության «սովորելու» գործընթացի համար տրամադրվող սուբսիդիան դինամիկ վիճակում արդյունավետ է: Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ ստատիկ վիճակում կառավարության սուբսիդավորումն արդյունավետ չէ, իսկ դինամիկի դեպքում այն կարող է լինել արդյունավետ:

Ձեռնարկությունում «սովորելու» գործընթացի ապահովումը կարելի է իրականացնել մի շարք քաղաքականությունների կիրառմամբ.

- ձեռնարկությանը ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրում,
- հովանավորչական քաղաքականություն կիրառում,
- ձեռնարկություններին սուբսիդիաների տրամադրում:

Սակայն, այստեղ ամենագլխավոր հարցը մնում է հովանավորչության ժամանակահատվածը: Ո՞րն է հովանավորչության օպտիմալ ժամանակահատվածը և ինչպե՞ս է այն գնահատվում ու որոշվում: Նշված հարցերը պարզաբանելու համար դիտարկենք հետևյալ օրինակը: Ենթադրենք, Հայաստանի կառավարությունը ձեռնարկություններում «սովորելու» գործընթացը խթանելու համար տրամադրում է սուբսիդիա մի որևէ ձեռնարկության, կամ արտադրական ոլորտի: Պարզության համար ենթադրենք, որ արտադրության սահմանային ծախքերը հաստատուն են (Տես՝ Գրաֆիկ 3.1-3):

Գրաֆիկ 3.1-3



Ձեռնարկությունում «սովորելու» գործընթացի հաղթահարումը և արտադրողականության բարձրացումը

MC_D-ն տեղական, MC_W-ն օտարերկրյա ձեռնարկության սահմանային ծախքերն են, իսկ ACD-ն տեղական պահանջարկի կորն է: Հիմնվելով Գրաֆիկ 3.1-3-ի վրա, պարզ է դառնում, որ P_1 գնի դեպքում տեղական շուկայում տեղական արտադրանքը չի վաճառվի, իսկ տեղական պահանջարկը OQ_2 մեծությամբ բավարարվում է ներմուծման հաշվին: Արդյունքում օտարերկրյա ձեռնարկատերի եկամուտը կազմում է $0P_WDQ_2$, սպառողի ավելցուկը՝ P_WDA: Երբ կառավարությունը տրամադրում է միավոր ապրանքի արտադրության համար սուբսիդիա S մեծությամբ՝ $S=P_1-P_2$, ապա այդ դեպքում տեղական սահմանային ծախքերի կորը իջնում է ներքև՝ MC_S: Այժմ արդեն տեղական ձեռնարկություններն ի վիճակի են արտադրելու Q_1 քանակով: Սպառողի ավելցուկը կազմում է P_2AC և տեղական ձեռնարկատերերը ստանում են $0P_2CQ_1$ մեծությամբ եկամուտ: Այս ամենի արդյունքում սպառողի ավելցուկը կրճատվում է P_WP_2CD մեծությամբ: Եթե սուբսիդավորումը հասնում է իր նպատակին, այսինքն՝ արդյունավետ է կիրառվում և գործում է դինամիկ, ապա տեղական գինը կձգտի հավասարվել համաշխարհային գնին՝ Pw, իսկ տեղական արտադրության ծավալը կձգտի հավասարվել Q_2: Այս դեպքում սպառողի ավելցուկը կլինի P_WDA-ն, իսկ տեղական արտադրողները կստանան $0P_WDQ_2$ մեծությամբ եկամուտ:

Այսպիսով, որպեսզի գտնենք հովանավորչության օպտիմալ ժամանակահատվածը, պետք է հովանավորչական քաղաքականության առաջացրած արդյունքը բաղդատենք հովանավորչական քաղաքականության առաջացրած *զուտ հասարակական օգուտների*

գումարային արժեք և *զուտ հասարակական կորուստների գումարային արժեք* հասկացությունների: Ժամանակահատվածի մեծացման հետ զուտ հասարակական կորուստների գումարային արժեքը մեծանում է: Օրինակ, Գրաֆիկ 3.1-3-ում PwP2CD-ն մի որոշակի ժամանակահատվածում հովանավորչական քաղաքականության հետևանքով սպառողի ավելցուկի կրճատումն է: Եթե հովանավորչական քաղաքականության ժամանակահատվածը մեծանում է, ապա այս կորուստը շարունակում է մնալ և արդյունքում զուտ հասարակական կորուստի գումարային արժեքը մեծանում է: Սակայն, ապագայում կատարվող ծախսերը կլինեն ավելի քիչ, քանի որ դրանք դիսկոնտավորվում են կախված հասարակության ժամանակային նախասիրություններից: Հետևաբար, ժամանակի ընթացքում կատարված ընդհանուր ծախսերը չեն աճում նույն տեմպով ինչպես հովանավորչական քաղաքականության սկզբնական ժամանակահատվածում:

Այսպիսով, զուտ հասարակական կորուստի գումարային արժեքը կարելի է ներկայացնել մի կորի միջոցով, որի տեսքը կախված է ժամանակի ընթացքում հասարակական կորուստների մեծություններից և ժամանակի ընթացքում այդ հասարակական կորուստների դիսկոնտավորման աստիճանից (Տես՝ Գրաֆիկ 3.1-4):

Գրաֆիկ 3.1-4



Հովանավորչության օպտիմալ ժամանակահատվածի որոշումը

Հովանավորչական ժամանակահատվածի մեծացման հետ մեկտեղ կաճի նաև զուտ հասարակական օգուտների գումարային արժեքն, որն ապագայում սպասվող հասարակական օգուտի դիսկոնտավորված արժեքն է: Սակայն, մի որևէ ժամանակահատվածից հետո այն

կսկսի նվազել, քանի որ ձեռնարկությունների «սովորելու» հակումը կպակասի և «սովորելու» ռենտան կվերածվի մոնոպոլ ռենտայի:

Այսպիսով, զուտ հասարակական օգուտի գումարային արժեքը կարելի է ներկայացնել մի կորի միջոցով, որի տեսքը կախված է ժամանակի ընթացքում հասարակական օգուտների մեծություններից և ժամանակի ընթացքում այդ օգուտների դիսկոնտավորման աստիճանից (Տես՝ Գրաֆիկ 3.1-4):

Այս ամենը քննարկելուց հետո, կարելի է նշել, որ հովանավորչության օպտիմալ ժամանակահատվածը դա այն է, որտեղ ժամանակի ընթացքում զուտ հասարակական օգուտի գումարային արժեքի և զուտ հասարակական կորուստի գումարային արժեքի միջև տարբերությունն ամենամեծն է՝ T*: Հովանավորչության կարճ ժամանակահատվածը կառաջացնի քիչ հասարակական օգուտ, քանի որ տեղական ձեռնարկատերերը չեն ունենա բավական ժամանակ «սովորելու» գործընթացի համար: Եվ հակառակն, երկար ժամանակահատվածը կնվազեցնի ստացվող օգուտի աճի տեմպը, քանի որ ձեռնարկության «սովորելու» գործընթացն արդեն ավարտված կլինի: Այսպիսի պայմաններում, եթե ձեռնարկությունը չի բավարարում համապատասխան պայմաններին, կառավարությունը պետք է պարզի և ընդհատի դրա սուբսիդավորումը, հակառակ դեպքում, սուբսիդավորման շարունակությունը կհանգեցնի վերը նշված ստատիկ ոչ արդյունավետության:

Հայաստանի կառավարությունը պետք է նախօրոք որոշի որոշակի ձեռնարկությունների, կամ արտադրական ոլորտների հովանավորչության հարցը և հետագայում, եթե որոշումը սխալ լինի, ի վիճակի լինի այն փոփոխել: Այստեղ կարևոր է ոչ միայն հովանավորչության ժամանակահատվածի ճիշտ որոշումն, այլ նաև ձեռնարկությունների, կամ արտադրական ոլորտների ճիշտ ընտրության հարցը: Եթե կառավարությունն ի վիճակի չէ արդյունավետ տրամադրել այնուհետև ընդհատել սուբսիդավորումն, ապա Հայաստանի դեպքում շատ ավելի նպատակահարմար կլինի, որպեսզի կառավարությունը տրամադրի սուբսիդիաներ միայն շատ քիչ քանակությամբ ձեռնարկությունների՝ դրանով իսկ խուսափելով ոչ արդյունավետ արդյունաբերական ոլորտի կառուցումից:

3.2 Օտարերկրյա ուղղակի ներդրումների դերն առևտրային հաշվեկշռի կարգավորման գործընթացում

ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման գործում անհրաժեշտ են թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա ուղղակի ներդրումներ: Ներդրումները տնտեսության շարժիչ ուժն են, որոնք ստեղծում են աշխատատեղեր, դրական են ազդում երկրի տարածքային կերպարի վրա: Տեղական և օտարերկրյա ուղղակի ներդրումների մեծացումն, այլ հավասար պայմաններում, ինքնաբերաբար կարող է կարգավորել առևտրային հաշվեկշիռը: Դա բացատրվում է նրանով, որ ներմուծվող ապրանքների մի մասը կփոխարինվի տեղական արտադրության ապրանքներով: Ավելին, այլ հավասար պայմաններում, տեղական և օտարերկրյա ուղղակի ներդրումների մեծացումը կապահովի արտահանման ծավալների աճ: Սակայն, չնայած դրան, որ ընդհանուր առմամբ ՕՈՒՆ-ը խթանում են առևտրային հաշվեկշռի կարգավորման գործընթացին, հնարավոր է նաև, որ այն առաջացնի նաև որոշակի «ծախսեր»: Այդ ծախսերից են հայրենի երկիր ստացած եկամուտները տեղափոխելուց երկրի վճարային հաշվեկշռի վատթարացումը և ազգային շուկայում տեղական և օտարերկրյա ձեռնարկատերերի միջև առաջացող ոչ հավասար մրցակցությունը:

Այսպիսով, զարմանալի չէ, որ բոլոր երկրների կառավարությունները ձեռնարկում են համապատասխան միջոցառումներ, որպեսզի իրենց երկիրը դարձնեն գրավիչ պոտենցիալ ներդրողների համար: Հայաստանում 1998-2002թթ. իրականացված և ներկայումս շարունակվող հարկային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը տեղական և օտարերկրյա ուղղակի ներդրումների ու ձեռնարկատիրական գործունեության զարգացման խոչընդոտների վերացումն, ինչպես նաև տնտեսական զարգացումն է: Մասնավորապես, ՀՀ 1998թ. հունվարի 1-ից «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ սահմանվեց, որ օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքն, առնվազն 500 մլն. դրամ կազմելու դեպքում, տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է ներդրում կատարելու տարվան հաջորդող երկու տարիների ընթացքում 100%-ով, իսկ դրան հաջորդող տարիներին համապատասխան ժամկետային սահմանմամբ 50%-ի չափով:

Հարկային օրենսդրությամբ հարկման բարենպաստ պայմաններ ստեղծվեցին նաև ներդրումներից ստացվող շահաբաժիների համար, մասնավորապես՝ ՀՀ-ում ստացած շահաբաժինները հիմնականում չեն հարկվում, հարկման են ենթարկվում միայն ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց մոտ, այն էլ որոշ դեպքերում:

Ներդրումների և միջազգային առևտրի բնագավառներում եկամտային և գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցությունը վերացնելու, ինչպես նաև կայուն ու կանխատեսելի հարկային դաշտ ապահովելու նպատակով, եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու համար երկկողմանի համձայնագրեր է կնքվել 24 երկրների հետ և մոտ 15 երկրների հետ բանակցությունները շարունակվում են:

Ներքին արտադրության ընդլայնման, ներքին և օտարերկրյա ներդրումների ներգրավման նպատակով ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսվել է սակագնային և ոչ սակագնային կարգավորման արտոնյալ պայմաններ: Այս առումով, աշխատանքում նշվել է, որ առևտրային կազմակերպությունների կողմից՝ իրենց կանոնադրական կապիտալը համալրելու նպատակով, ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված ապրանքների ներմուծման ժամանակ նախատեսվում է մաքսատուրքերի վճարման արտոնություններ:

Հայտնի է, որ ներդրումային միջավայրի բարելավման վրա, բացի համապատասխան արտոնյալ պայմանների ստեղծումից, իր ազդեցությունն է թողնում նաև արտաքին առևտրային քաղաքականության ռեժիմը: Մի շարք աշխատություններում հատուկ ընդգծվում է, թե ինչպես է երկրի բացության աստիճանն ազդում ՕՈՒՆ-ի հոսքի և դրա առաջացրած արդյունքների վրա: Արտաքին առևտրի քաղաքականության ռեժիմի, ՕՈՒՆ-ի հոսքի ու դրա առաջացրած արդյունքների միջև եղած կապն առաջին անգամ ցույց տվեց Բագվատին, որպես «անկման աճ» տեսության լրացում: Այս աշխատությունների հիմքում ձևավորվեցին հիպոթեզներ, որոնցից աչքի էր ընկնում հատկապես Բագվատիի հիպոթեզը: Համաձայն դրա, ՕՈՒՆ-ի հոսքը և դրա առաջացրած արդյունքները զգալի փոքր են և նույնիսկ հնարավոր է լինեն բացասական ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականության կիրառման ժամանակ և հակառակ դրան, դրանք զգալի մեծ են արտահանումը խրախուսող առևտրային քաղաքականության կիրառման դեպքում[1]:

[1]Bhagwati J.N. “Free Trade: old and new challenges”, Economic Journal, N 104(423), pp. 231-246, 1994

Այսպիսով, համաձայն Բագվատիի հիպոթեզի Հայաստանում, այլ հավասար պայմաններում, պետք է անընդհատ աճեր ՕՈՒՆ-ի մակարդակը, քանի որ աշխատանքում ՀՀ արտաքին առևտրի քաղաքականության վերլուծությունից պարզվեց, որ Հայաստանն ունեցել է բավական ազատական արտաքին առևտրի քաղաքականության ռեժիմ, որն էլ ավելի ազատականացվեց ԱՀԿ անդամակցությամբ: Սակայն, եթե մենք ուսումնասիրենք ՀՀ տնտեսության բացության աստիճանն (Տես՝ Հավելված, Աղյուսակ 3.2-1), ապա կտեսնենք, որ Բագվատի հիպոթեզը չէր կարող տեղի ունենալ Հայաստանի դեպքում, քանի որ դա կտաներ արտահանման միջին հակվածության զգալի մեծացման: Սկզբնական շրջանում՝ 1994թ., տնտեսության բացության համեմատաբար փոքր աստիճանը՝ 0.37%, հիմնականում պայմանավորվել է ՀՆԱ-ի և արտաքին ապրանքաշրջանառության համեմատաբար փոքր ծավալներով: Հետագայում տնտեսության բացության աստիճանի մեծացումը հիմնականում պայմանավորվել է ներմուծման ծավալների աճով և ՀՆԱ-ի համեմատաբար փոքր մակարդակով (տնտեսության բացության աստիճանը 2003թ. կազմել է 0.67%):

Այսպիսով, չնայած ՀՀ արտաքին առևտրի քաղաքականության բավական ազատական ռեժիմի և կառավարության իրականացրած համապատասխան միջոցառումների, կարելի է ասել, որ կառավարությանն այդպես էլ չհաջողվեց զգալի հաջողությունների հասնել ՕՈՒՆ-ի ներգրավման գործընթացում: Օտարերկրյա ողղակի ներդրումների հոսքի փոփոխման դինամիկան ուսումնասիրելու նպատակով դիտարկենք Գծապատկեր 3.2-1:

Ուսումնասիրելով Գծապատկեր 3.2-1-ը, մենք նկատում ենք, որ նշված ժամանակաշրջանում կտրուկ աճ գրանցվել է 1998թ., որտեղ ՕՈՒՆ-ի մակարդակը կազմել է 232.4 մլն. դոլար: Այնուհետև, մինչև ընդհուպ 2001թ., ՕՈՒՆ-ի մակարդակը զգալի նվազել է՝ 2001թ. կազմելով 1998թ. մակարդակի 32.6%-ը: Սակայն, հաջորդող երկու տարիներին՝ 2002թ. և 2003թ., նորից նկատվել է ՕՈՒՆ-ի մակարդակի ավելացում՝ 2003թ. կազմելով 1998թ. 66%-ը (2003թ. ՕՈՒՆ-ի մակարդակը կազմել է 153.5 մլն. դոլար):

Գծապատկեր 3.2-1



ՕՈՒՆ-ի հոսքը 1997-2003թթ. (մլն. դոլար)

Այսպիսով, մեզ պետք է հետաքրքրի, թե որոնք են դրդապատճառները և խոչընդոտները ՀՀ-ում ներդրում կատարելու համար: Ակնհայտ է, որ ներդրողները ցանկանում են մաքսիմալացնել իրենց շահույթը և ներդրում կկատարեն այնտեղ, որտեղ ապագայում ստացվող շահույթի մեծության սպասումները մեծ են: Այստեղ հարց է առաջանում, թե ինչպիսի գործոններից է կախված սպասվող շահույթի մեծությունը: Աշխատուժի գինը և հարկերն այդ գործոնների մեջ առանցքային տեղ են գրավում: Դրանից ելնելով, կարող ենք նշել, որ Հայաստանը ներդրումներ կատարելու համար նպաստավոր է, քանի որ աշխատուժի գինը բավական ցածր է, իսկ հարկային համակարգը բարեփոխումներ է ապրում: Սակայն, Հայաստանի դեպքում կան նաև մի շարք այլ գործոններ, որոնք կարևոր դեր են խաղում երկրի ներդրումային միջավայրում: Դրանք են.

- տեղական ենթակառուցվածքը
- տեղական արտադրության և արտադրության գործոնների գները
- կապիտալի և աշխատուժի կախվածությունը
- աշխատուժը
- կապիտալի շուկայում տոկոսադրույքի մակարդակը

Տեղական ենթակառուցվածքը դրական է ազդում արտադրության գործոնների արտադրողականության վրա: Ավելի բարձր արտադրողականությունն ենթադրում է ավելի բարձր եկամտի ապահովում՝ միևնույն արտադրության գործոնների մակարդակի դեպքում: Ուստի, շատ կարևոր է, թե ինչպիսի տեղում է ձեռնարկությունը հիմնադրվում, օրինակ՝ որքան հնարավոր է բնական ռեսուրսներին և փոխադրման ճանապարհին մոտ, կամ երբեմն շատ ավելի նպատակահարմար է հիմնադրել ձեռնարկությունը հիմնական գնորդի կամ մատակարարի մոտ: Ինչպես նկատելի է, Հայաստանի դեպքում սա լուրջ խնդիր է, քանի որ Հայաստանը հարուստ չէ բնական ռեսուրսներով և գտնվում է շրջափակման մեջ: Սակայն, պետք է նաև նկատի ունենանալ, որ ենթակառուցվածքի մակարդակի կարևորությունը կախված է իրականցվող գործունեությունից: Հետևաբար պետք է ուշադրություն դարձվի այնպիսի տնտեսական գործունեության ոլորտների զարգացման վրա, որոնց դեպքում տեղական զարգացած ենթակառուցվածքի առկայության պահանջը մեղմանում է (օրինակ՝ թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դանցից իրեր):

Տեղական արտադրության և արտադրության գործոնների գներն ուղղակի ազդում են պոտենցիալ ներդրողի ֆինանսական գործունեության վրա: Քանի որ, Հայաստանում արտադրությունը հիմնականում հիմնվում է ներմուծվող հումքի վրա, իսկ վեջինիս գինն, ի հաշիվ տրանսպորտային ծախսերի, բավական մեծ է, ապա առաջանում է զգալի մեծ խզում արտադրվող վերջնական ապրանքի գնի և արտադրության վրա կատարած ծախքերի միջև: Տեղական ոչ տարողունակ շուկան բավական գնողունակ չէ, իսկ այդպիսի պայմաններում համապատասխան գնով կարելի է իրացնել միայն արտասահմանյան շուկաներում, որն էլ առաջացնում է ապրանքների արտահանման և իրացման խնդիրներ: Այսպես, «Վեդի Ալկո» ընկերությունը նույն որակի օղին, որն արտասահմանյան շուկաներում, հատկապես՝ Ռուսական, արտահանում է մեկ շիշը 10 դոլար մեծածախ գնով, իսկ տեղական շուկայի անվճարունակության պատճառով, ներքին շուկայում ավելի պարզ շշերով ու ձևավորմամբ վաճառում է բավական էժան[1]: Մրգային օղու շշերը բերվում են Ֆրանսիայից, և այդ պատճառով շահութաբեր չէ դրսից ներկրված շշերով տեղական շուկայում առևտուր կազմակերպել, քանի որ այդտեղ օղու գինը շատ ցածր է և ներկրված շշերի պարագայում ինքնարժեքը կտրուկ

[1]Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա, N 6(26), էջ 40-42, Երևան 2003

կբարձրանա: Հարկ է նշել, որ օղու արտադրության հումք հանդիսացող սպիրտը նույնպես ներմուծվում է, իսկ գինու արտադրության համար շշերի խցանը բերվում է Պորտուգալիայից, շշերը՝ Իտալիայից, Ավստրիայից և միայն խաղողն է մթերվում Հայաստանից:

Կապիտալը և աշխատուժը մասամբ մեկը մյուսին փոխլրացնում և համալրում են: Դրանց փոխկապակցվածությունը սովորաբար նկարագրվում է Կոբբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայով: Էժան աշխատուժը սովորաբար ձեռնարկատերերին դրդրում է օգտագործել ավելի շատ աշխատատար տեխնոլոգիաներ, որի պատճառով ցածր աշխատավարձ ունեցող երկրում ներդրվող կապիտալի մակարդակը կլինի ավելի ցածր, քան բարձր աշխատավարձ ունեցող երկրում: Աշխատավարձի այս ցածր մակարդակը կարող է մասամբ՝ այլ հավասար պայմաններում, բացատրել, թե Հայաստանում ինչու ձեռնարկատերերը արտադրության մեջ չեն օգտագործում նորագույն տեխնոլոգիաներ: Սակայն, Հայաստանի դեպքում պատկերը լրիվ հակառակն է: Անկախացումից հետո կապիտալ և աշխատուժ հարաբերակցության դինամիկան Հայաստանում միշտ աճել է, որը հիմնականում պայմանավորված է տնտեսական գործունեության ոլորտներում աշխատուժի նվազմամբ և կապիտալի ավելացմամբ (Տես՝ Հավելված, Աղյուսակ 3.2-2): Ինչը վկայում է այն մասին, որ Հայաստանում համեմատական առումով զարգանում է կապիտալատար արտադրությունը: Աշխատուժը տնտեսապես ակտիվ բնակչությունն է: Ավելին աշխատուժ գործոնի կարևորությունը նշելով՝ մենք ընդգրկում ենք դրա ինչպես քանակական, այնպես էլ որակական հատկանիշները: 1997թ. սկսած տնտեսապես ակտիվ բնակչության՝ աշխատուժի թիվը, տնտեսության մեջ նվազել է՝ 2003թ. կազմելով 1236.4 հազ. մարդ: Այսինքն, ՀՀ տնտեսական գործունեության ոլորտում աշխատուժը նվազման միտում ունի, որը պայմանավորված է կապիտալատար նոր արտադրությունների ստեղծմամբ, գործազրկության աճով և արտագաղթով:

Այսպիսով, երկարաժամկետ հատվածում տնտեսության մեջ ուղղակի ներդրումը պետք է միշտ ապահովի ավելի մեծ շահույթ, քան կապիտալի շուկայում կատարված որևէ ներդրում, հակառակ դեպքում ուղղակի ներդրում կատարելն ընդհանրապես նպատակահարմար չէ: Ունենալով այն հնարավոր գործոններն, որոնք կարող են ազդել շահույթի մեծության վրա կառուցենք ձեռնարկատիրոջ շահույթի ֆունկցիան՝

$$\Pi=(1-t)[pY(K,L,I)-wL(w,K)-dK-rK-F+G(K)], \quad (1)$$

որտեղ Π–ն դա շահույթն է , t-ն եկամտահարկը, p-ն արտադրված արտադրանքի գինն է, y–ը թողարկված արտադրանքի քանակը, I-ն ենթակառուցվածքը, K–ն կապիտալը , L–ը աշխատուժը, w –ն աշխատավարձի մակարդակը, d–ն կապիտալի մաշվածությունը, r –ը տոկոսադրույքի մակարդակը, F –ը հաստատուն ծախքերը, G –ն սուբսիդիաներն են:

Ձեռնարկատերը պետք է ընտրի կապիտալի այնպիսի մակարդակ, որը մաքսիմալացնում է իր շահույթն, այսինքն՝

$$\frac{\partial \Pi}{\partial K} = (1-t)\left[p\frac{\partial Y(K,L,I)}{\partial K} - w\frac{\partial L(w,K)}{\partial K} - d - r + \frac{\partial G}{\partial K} \right] = 0 \qquad (2)$$

Այստեղից պարզ երևում է, որ ոչ միայն հարկերը և սուբսիդիաներն են մեծ դեր խաղում այլ նաև ենթակառուցվածքի մակարդակը: Հարկ է նշել, որ հարկերը և սուբսիդիաները սովորաբար մեկը մյուսին կոմպենսացնող են, այսինքն՝ այլ հավասար պայմաններում, եթե մեծանում են տրամադրվող սուբսիդիաներն, ապա պետք է մեծանան նաև հարկերը, քանի որ հակառակ դեպքում կմեծանա բյուջեի պակասուրդը: Սակայն, մենք այստեղ ընդունում ենք, որ սուբսիդիաների տրամադրումը չի ուղեկցվում հարկերի բարձրացմամբ կարճաժամկետ հատվածում: Հետագայում, երբ տրամադրվող սուբսիդիաների շնորհիվ տնտեսությունը կաշխուժանա, նոր կառավարությունը պետք է բարձրացնի հարկերի մակարդակը: (2) հավասարումից նկատելի է, որ չնայած ՀՀ կառավարության ջանքերի՝ օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու, ցածր ենթակառուցվածքի մակարդակը խոչընդոտում է դրան: Ավելին, Հայաստանի պայմաններում գոյություն ունի մեկ գործոն ևս, որն ազդում է ներդրումների վրա: Դա ներդրումային ռիսկն է, որը հիմնականում պայմանավորված է ապագայի հետ կապված անորոշության հետ: Սակայն, պետք է տարբերություն դնել իրական ռիսկի և այն ռիսկի միջև, որն երկրի անցյալում ունեցած տնտեսական միջավայրի արդյունք է, իսկ ներկայումս Հայաստանում ներդրումային ռիսկը բնութագրվում է հենց վերջինով:

Այսպիսով, ընդհանուր առմամբ ՕՈՒՆ-ը լայնորեն ընդունվում են զարգացող երկրներում տնտեսական աճ ապահովող գործոն: ՕՈՒՆ-ը թույլ են տալիս երկրին կատարել այնպիսի ներդրումներ, որոնք գերազանցում են ազգային խնայողության մակարդակը: Ավելին, ՕՈՒՆ-ը շատ կարևոր դեր են խաղում ժամանակակից տեխնոլոգիաների և նորարարության՝ զարգացած

երկրներից դեպի զարգացող երկրներ, փոխանցման գործում: Սակայն ՕՈՒՆ-ի աճ ապահովող արդյունքը տարբերվում է երկրից երկիր և որոշ երկրներում դա նույնիսկ կարող է ոչ թե խթանել, այլ թուլացնել տնտեսական աճը: Այսինքն, ի հակադրություն տարածված կարծիքի, կարելի է նշել, որ ՕՈՒՆ-ի աճ ապահովող արդյունքն ինքնաբերաբար ի հայտ չի գալիս, այլ կախված է յուրաքանչյուր երկրին բնորոշ մի շարք գործոններից:

Հայ տնտեսագետներից պրոֆեսոր Թ. Թորոսյանը կարևորելով ՕՈՒՆ-ի դերը տնտեսության զարգացման գործընթացում առաջարկում է ՕՈՒՆ-ի ներգրավման համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ, ինչպիսիք են՝ պետականորեն ապահովել և տրամադրել երաշխիքներ, հարկային արտոնություններ և բարենպաստ այլ պայմաններ[1]: Հասկանալով և կարևորելով ՕՈՒՆ-ի դերը տնտեսական զարգացման գործընթացում՝ մենք այստեղ լիովին համաձայն ենք Թ. Թորոսյանի հետ, սակայն շատ ավելի արդյունավետ կլիներ, եթե այդ արտոնությունները տրվեին որոշակի ընտրված տնտեսական գործունեության ոլորտների համար, որպեսզի ՕՈՒՆ-ի արդյունքը լինի առավելագույնս: Հիմնվելով աշխատանքում կատարած վերլուծությունների և ստացված արդյունքների վրա, մենք առաջարկում են ՕՈՒՆ-ը նպատակաուղղված վերաբաշխել հետևյալ տնտեսական գործունեության ոլորտներում.

- սննդամթերքի արտադրություն,
- հանքահումքային արդյունաբերություն,
- գյուղատնտեսական վերամշակող արտադրություն,
- քիմիական արդյունաբերություն,
- թեթև արդյունաբերություն:

Միաժամանակ դոկտոր Հ. Մանասյանը նշում է, որ ՕՈՒՆ-ը կարևոր են ոչ միայն տնտեսական աճ ապահովելու, այլև՝ նոր տեխնոլոգիաների ներգրավման տեսանկյունից[2]: Այստեղ մենք համաձայն ենք Հ. Մանասյանի հետ, սակայն ինչպես նշվեց ՕՈՒՆ-ի անկառավարելի հոսքը կարող է խոչընդոտել տնտեսական զարգացմանը և ավելի

[1]Թ. Շ. Թորոսյան «Հայաստանի հանրապետության արտաքին առևտրական համակարգի վերափոխումները», էկոնոմիկա, N 5, Երևան 2000
[2]Հ. Մանասյան «Հայաստանի տնտեսական աճի բաղադրիչները», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N 11, էջ 29, Երևան 2002

նպատակահարմար է, եթե տեխնոլոգիաների ներգրավումը լինի նպատակային, այլ ոչ թե կամայական:

Այդ պատճառով անհրաժեշտ է, որպեսզի ՕՈՒՆ-ի հոսքը պետության կողմից կարգավորվի և ուղղորդվի այն տնտեսական գործունեության ոլորտներն, որտեղ դրանց անհրաժեշտությունն էլ ավելի է զգացվում և որտեղ դրանք կառաջացնեն առավելագույն արդյունքներ: ՕՈՒՆ-ը կարող են տնտեսության մեջ և դրանց անհրաժեշտությունը զգացող տնտեսական գործունեության ոլորտներում ապահովել նորագույն տեխնոլոգիաների և ժամանակակից կառավարման համակարգերի ներմուծում: Արդյունքում տեղական արտադրության ապրանքներն ավելի մրցունակ կլինեն միջազգային շուկաներում և որն էլ իր հերթին էլ ավելի կմեծացնի առևտրային հաշվեկշռի կարգավորման և բարձր տնտեսական աճ ապահովելու հավանականությունը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ելնելով աշխատանքում կատարված վերլուծություններից և ստացված արդյունքներից, պարզվեց, որ հովանավորչական քաղաքականությունը գործել է մեկ ամբողջական պտույտ: Սկզբնական շրջանում, երբ զարգացող երկրների տնտեսությունները գտնվել են վատթար վիճակում, տնտեսագետների մեծ մասը տեղ են տվել հովանավորչական քաղաքականության դերի անհրաժեշտությանը: Այնուհետև, տնտեսության վիճակը բարելավվելով, առաջ է եկել կառավարության դերի նվազեցման խնդիրը, քանի որ տնտեսագետները հանգել են այն տեսակետին, որ առևտրի միջոցով շուկան ինքնաբերաբար կկարգավորվի: Եվ վերջապես՝ հասկանալով շուկայի բացասական կողմերը և գնահատելով 1980-ական թթ. արդյունքները, տնտեսագետները նորից զարգացման գործընթացում կարևորություն տվեցին հովանավորչական քաղաքականությանը:

Աշխատանքում կատարված վերլուծությունները թույլ տվեցին եզրահանգել, որ «առևտրի ազատականացում» հասկացությունը լի է մի շարք սխալ հետևություններով, իսկ հարաբերական առավելությունների տեսությունը դա *ստատիկ* տեսություն է, քանի որ.

- հարաբերական առավելությունն որոշվում է ելնելով շուկայի պայմաններից,
- ազատ առևտուրը խթանում է երկու երկրներում ռեսուրսների արդյունավետ բաշխմանը,
- արտադրական հնարավորությունների կորի տեղաշարժն անտեսվում է, այսինքն՝ երկարաժամկետ ժամանակահատվածը չի դիտարկվում:

Հետևաբար, *ստատիկ* հարաբերական առավելությունների տեսությունից չի բխում, որ ազատ առևտուրն ամենալավն է:

Աշխատանքում կատարված վերլուծությունները մեզ հնարավորություն տվեցին պարզաբանելու, որ ՀՀ արտաքին առևտրի քաղաքականությունն, որը բավական ազատական էր և էլ ավելի ազատականացվեց ԱՀԿ անդամակցությամբ, ապահովել է առևտրային հաշվեկշռի զգալի մեծ պակասուրդ: Առևտրային հաշվեկշռի պակասուրդը սկզբնական շրջանում հիմնականում պայմանավորվել է ներմուծման ծավալների աճով, իսկ արդեն 2003թ.՝ միաժամանակ ներմուծման և արտահանման աճով: Չնայած նրան, որ 2003թ. արտահանման ծավալների աճի տեմպը կազմել է 33.7, իսկ ներմուծմանը՝ 28.1%, առևտրային հաշվեկշռի

պակասուրդը նախորդ տարվա հետ համեմատ մեծացել է: Դա հիմնականում պայմանավորվել է այն փաստով, որ 2002թ. ներմուծումը մոտ երկու անգամ գերազանցել է արտահանմանը:

Աշխատանքում պարզաբանվել է, որ ՀՀ արտաքին առևտուրը շուկայի կողմնորոշման տեսակետից որպես այդպիսին դեռ չի ձևավորվել: 1993-2001թթ. ընկած ժամանակահատվածում ԱՊՀ և ԵՄ երկրների հետ արտաքին առևտրում արտահանումը և ներմուծումը կրել են պարուրաձև բնույթ: Այսինքն, երբ աճել/նվազել է արտահանումը/ներմուծումը ԱՊՀ երկրների հետ, նվազել/աճել է արտահանումը/ներմուծումը ԵՄ երկրների հետ: Սակայն, սկսած 2001թ. ԱՊՀ և ԵՄ երկրների հետ արտաքին առևտրում և' արտահանումը, և' ներմուծումը սկսել են աճել միաժամանակ միևնույն ուղղությամբ: Բացի այդ, զգալի մեծացել և հաստատուն տեսակարար կշիռ է ձեռք բերել արտասահմանյան այլ երկրների հետ արտաքին առևտուրը: Դա բացատրվում է նրանով, որ միջազգային շուկան ինքն է թելադրում, թե ինչպիսի ուղղությամբ պետք է երկրի արտաքին առևտուրը զարգանա: Սակայն, լինելով փոքր երկիր և գտնվելով անցումային փուլում, չի կարելի թողնել, որպեսզի երկրի արտաքին առևտուրն ընթանա այդպիսի տատանումներով: Իհարկե, արտաքին առևտրի ճկուն լինելը շատ նպատակահարմար է, սակայն, եթե այն վերահսկվում է, այլ ոչ թե ինքնաբերաբար է ի հայտ գալիս: Այնինչ, մեր կարծիքով, գտնվելով շրջափակման մեջ և առկա բարձր տրանսպորտային ծախսերի պայմաններում, շատ ավելի նպատակահարմար կլիներ խորացնել արտաքին առևտրատնտեսական կապերը հարևան և ԱՊՀ երկրների հետ: Հաջորդ կարևոր պատճառը, որը պետք է Հայաստանին դրդի դեպի հարևան և ԱՊՀ երկրների շուկա, դա մրցակցության պայմանն է: ԵՄ երկրները զինված են նորագույն արտադրության տեխնոլոգիաներով և դա նրանց ապահովում է արտադրանքի բարձր որակ և ցածր արտադրության ծախքեր, բացի այդ ԵՄ երկրների սպառողների ճաշակները շատ խիստ են ու տարբերակված:

Աշխատանքում, վերլուծելով արտաքին առևտրի ներմուծման և արտահանման ապրանքային կառուցվածքներն, եզրահանգվել է, որ.

- պատրաստի սննդի, բուսական և կենդանական ծագման, հանքահումքային արտադրանքի ներմուծման տեսակարար կշռի և ներմուծման ծավալի՝ արժեքային առումով, նվազումը պայմանավորված է այդ ապրանքախմբերով տեղական արտադրության կազմակերպմամբ և զարգացմամբ,

- վերջին տարիներին նշված ապրանքախմբերով ներմուծման տեսակարար կշիռների նվազումը և ներմուծման ծավալների՝ արժեքային առումով, մեծացումը պայմանավորված է ընդհանուր ներմուծման ծավալների մեծացմամբ, որն էլ իր հերթին պայմանավորված է ամբողջական պահանջարկի դրական շոկով,
- մեքենաներ և սարքավորումների, քիմիական արդյունաբերության արտադրանքի արտահանման տեսակարար կշիռների և արտահանման ծավալների՝ արժեքային առումով, նվազումը պայմանավորված է այդ տնտեսական գործունեության ոլորտներում առկա մի շարք խնդիրներով,
- վերջին տարիներին որոշ ապրանքախմբերով արտահանման տեսակարար կշիռների նվազումը և արտահանման ծավալների՝ արժեքային առումով, մեծացումը պայմանավորված է ընդհանուր արտահանման ծավալների մեծացմամբ, որն էլ իր հերթին պայմանավորված է ամբողջական առաջարկի դրական շոկով:

Ամբողջ արտահանման կազմում մեծ տեսակարար կշիռ ունեցող թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր (51.5%), ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր (13.3%) ապրանքախմբերն ապահովում են ամբողջ արտահանման 64.8%-ը: Ընդ որում, միայն թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր ապրանքախումբն ապահովում է ամբողջ արտահանման կեսից ավելին:

Այդ պատճառով, անհապաղ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ, բարելավելու ՀՀ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը, մասնավորապես՝ ընդլայնել արտահանման անվանացանկը: Ներմուծման ծավալների անընդհատ մեծացման և արտահանման այդպիսի խիստ սահմանափակ կառուցվածքի պայմաններում անհապաղ անհրաժեշտ է խթանել արտահանման ներուժ ունեցող ձեռնարկությունների ու ներմուծումը փոխարինող արտադրությունների զարգացումը:

Այս առումով, հիմնվելով աշխատանքում կատարված վերլուծությունների և ստացված արդյունքների վրա, առաջ են քաշվել արտահանման ներուժ ունեցող հետևյալ տնտեսական գործունեության ոլորտները.

- թեթև արդյունաբերություն,

- սննդի արտադրություն,
- հանքահումքային արդյունաբերություն,
- քիմիական արդյունաբերություն,
- գյուղատնտեսական վերամշակող արտադրություն:

Աշխատանքում առաջարկվել է ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման համար ընտրել ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականությունն, որը հիմնականում պետք է կենտրոնանա վերը նշված արտահանման ուղղվածություն ունեցող տնտեսական գործունեության ոլորտների զարգացման վրա:

Մեր կողմից առաջարկված ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականությունը պետք է կենտրոնանա 3 հիմնական խնդիրների վրա, որոնց լուծմամբ կարելի է ապահովել ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորումը: Այդ խնդիրներն են.

- արտահանման ներուժ ունեցող տնտեսական գործունեության ոլորտներում բարձրացնել նոր ձևավորվող ձեռնարկությունների գործունեության արդյունավետությունը,
- ապահովել արտահանման ներուժ ունեցող տնտեսական գործունեության ոլորտներում գործող ձեռնարկությունների «սովորելու» գործընթացը,
- նպատակային ներգրավել ՕՈՒՆ-ը դեպի արտահանման ներուժ ունեցող տնտեսական գործունեության ոլորտներ:

Առևտրային հաշվեկշռի կարգավորման համար մեր կողմից հիմք ընդունած ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության յուրահատկությունն այն է, որ քաղաքականության կիրառումը չի նշանակում ապրանքների և ծառայությունների ծավալների կտրուկ կրճատում, այլ այն պետք է խթանի տեղական արտադրության զարգացմանն, որը հետագայում պետք է հիմք ստեղծի արտահանման ծավալների մեծացման համար:

Հայաստանում ստեղծված նոր ձեռնարկությունները լուրջ խնդիրների են հանդիպում օտարերկրյա բազմամյա փորձ ունեցող ձեռնարկությունների կողմից թողարկված ապրանքների հետ մրցակցության պայմաններում: Դրա համար անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր հովանավորչական քաղաքականություն, քանի որ ժամանակի ընթացքում արտադրության ծախքերը կնվազեն մոտենալով միջազգային ստանդարտներին: Նոր ձևավորվող ձեռնարկությունների հովանավորչությունը կարող է հանդիսանալ ներմուծումը փոխարինող

նպատակաուղղված առևտրային քաղաքականության գործիքներից մեկը՝ կարգավորելու առևտրային հաշվեկշիռը:

Աշխատանքում մեկնաբանվել և հատուկ ընդգծվել է ձեռնարկություններում «սովորելու» գործընթացի կարևորությունը: Որքան արագ են ձեռնարկություններն անցնում այս փուլն, այնքան արագ են դրանք հասնում արդյունավետության: Վերջին տարիներին արտահանման ծավալների մեծացման պատճառներից մեկն էլ հենց այն է, որ գործող ձեռնարկությունների մի մասը ժամանակի ընթացքում մեծ դժվարություններով մասնակիորեն հաղթահարել է այս փուլը:

Արտահանման ներուժ ունեցող նոր ձևավորվող ձեռնարկությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և այդ ձեռնարկություններում «սովորելու» գործընթացը խթանելու համար առաջարկվել է.

- տրամադրել ձեռնարկություններին ցածր տոկոսադրույքներով վարկեր,
- կիրառել հովանավորչական քաղաքականություն,
- տրամադրել ձեռնարկություններին սուբսիդիաներ:

Ընդհանուր առմամբ ՕՈՒՆ-ը լայնորեն ընդունվում են զարգացող երկրներում տնտեսական աճ ապահովող գործոն: ՕՈՒՆ-ը թույլ են տալիս երկրին կատարել այնպիսի ներդրումներ, որոնք գերազանցում են ազգային խնայողության մակարդակը: Ավելին, ՕՈՒՆ-ը շատ կարևոր դեր են խաղում ժամանակակից տեխնոլոգիաների և նորարարության՝ զարգացած երկրներից դեպի զարգացող երկրներ, փոխանցման գործում: Սակայն ՕՈՒՆ-ի աճ ապահովող արդյունքը տարբերվում է երկրից երկիր և որոշ երկրներում դա նույնիսկ կարող է ոչ թե խթանել, այլ թուլացնել տնտեսական աճը: Այսինքն, ի հակադրություն տարածված կարծիքի, կարելի է նշել, որ ՕՈՒՆ-ի աճ ապահովող արդյունքն ինքնաբերաբար ի հայտ չի գալիս, այլ կախված է յուրաքանչյուր երկրին բնորոշ մի շարք գործոններից: Այդ պատճառով, անհրաժեշտ է, որպեսզի ՕՈՒՆ-ի հոսքը պետության կողմից կարգավորվի և ուղղորդվի այն տնտեսական գործունեության ոլորտներն, որտեղ դրանց անհրաժեշտությունն էլ ավելի է զգացվում և որտեղ դրանք կառաջացնեն առավելագույն արդյունքներ: ՕՈՒՆ-ը կարող են տնտեսության մեջ և դրանց անհրաժեշտությունը զգացող ճյուղերում ապահովել նորագույն տեխնոլոգիաների և ժամանակակից կառավարման համակարգերի ներմուծում: Արդյունքում տեղական արտադրության ապրանքներն ավելի մրցունակ կլինեն միջազգային շուկաներում և որն էլ իր

հերթին էլ ավելի կմեծացնի առևտրային հաշվեկշռի կարգավորման և բարձր տնտեսական աճ ապահովելու հավանականությունը:

Այս առումով, առևտրային հաշվեկշռի կարգավորման գործընթացում կարևորվել է ՕՈՒՆ-ի դերը և դրա արդյունքն առավելագույն դարձնելու համար առաջարկվել է ՕՈՒՆ-ը նպատակաուղղված վերաբաշխել արտահանման ներուժ ունեցող տնտեսական գործունեության ոլորտներում:

Աշխատանքում դիտարկված խնդիրները, դրանց լուծումները և առաջարկված մեթոդներն ոչ մի կերպ դեմ չեն միջազգային առևտրին: Առևտուրը կարող է համարվել միայն զարգացման գործիք և պետք է ճշտել, թե երբ և ինչպես այն կիրառել: Ազատ առևտուրը պետք է և կարող է հանդիսանալ բոլոր երկրների վերջնական նպատակը միայն և միայն այն դեպքում, երբ բոլորը ձեռք կբերեն զարգացման միևնույն մակարդակ: Սակայն, քանի որ իրականում սա անհնար է, ապա բոլոր երկրների վերջնական նպատակը պետք է լինի ազատ առևտրի որքան հնարավոր է բարձր մակարդակի ձգտումը: Քանի որ երկրները գտնվում են զարգացման տարբեր մակարդակներում, նոր ձևավորվող ձեռնարկությունների հովանավորչությունը կարող է հանդիսանալ որպես ինդուստրացման հիանալի գործիք նրանց համար, ովքեր գտնվում են զարգացման սկզբնական մակարդակում: Այստեղ հարկ է նշել, որ Հայաստանի դեպքում խնդիրը փոքր ինչ մեղմանում է, քանի որ, այլ հավասար պայմաններում, սկզբնական շրջանում այստեղ խնդիրն եղածի վերկանգնումն է: Ժամանակի ընթացքում զարգացումն ինքնին կտանի դեպի համընդհանուր, բազմակողմանի կապերի հաստատման՝ դրանով իսկ ձգտելով դեպի ազատ առևտուրը:

Աշխատանքում ցույց է տրվել, որ առևտրային հաշվեկշռի կարգավորումը պետք է լինի երկրին յուրահատուկ, քանի որ գոյություն չունեն համընդհանուր կանոներ, որոնք կարող են կիրառվել բոլոր երկրների կողմից: Այստեղ մենք ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման համար առաջարկում ենք կիրառել ժամանակավոր ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականություն: Լինելով ծախսատար քաղաքականություն՝ ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության կիրառումը Հայաստանի դեպքում անխուսափելի է ներկայիս արդյունաբերական ենթակառուցվածքի թուլության և արտաքին շուկայի անցանկալի

ցնցումներին դիմակայելու համար: Հայաստանի դեպքում ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականություն կիրառումը շատ կարևոր քայլ կարող է հանդիսանալ հետագայում արտահանման խրախուսման համար՝ ստեղծելով դրա համար համապատասխան պայմաններ և հնարավորություններ: Սակայն, նորից ենք նշում, որ ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականությունը չպետք է հանդիսանա առևտրային հաշվեկշռի կարգավորման մշտական միջոց, այլ այն պետք է կիրառվի ժամանակավոր՝ հետագայում հիմք ստեղծելով արտահանման խրախուսման համար:

Այսպիսով, մենք առաջարկում ենք առևտրային հաշվեկշռի դինամիկ կարգավորման մոդել, որպես նախնական առևտրային քաղաքականություն ընդունելով ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականությունն, որը ինչպես բացահայտվեց բավական տարբերվում է նախկինում կիրառված ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունից: Այսինքն, սկզբնական շրջանում քաղաքականության կիրառման միջոցով նորացնել և վերակառուցել տեղական ձեռնարկությունները՝ ստեղծելով զարգացած արդյունաբերական բազա, որից հետո կիրառել արտահանումը խրախուսող առևտրային քաղաքականություն:

Հավելված[1]

Աղյուսակ 2.1-1

-	DynEx	DynIm	Ex/ImCIS	Ex/ImEU	Ex/Im
1993	-	-	0.75	0.46	0.61
1994	0.38	0.55	0.77	0.95	0.55
1995	0.22	0.69	0.48	0.54	0.39
1996	0.1	0.28	0.45	0.46	0.34
1997	-0.19	0.04	0.31	0.38	0.26
1998	-0.04	0.02	0.37	0.28	0.24
1999	0.04	-0.1	0.32	0.42	0.29
2000	0.27	0.1	0.43	0.35	0.33
2001	0.15	-0.01	0.41	0.35	0.39
2002	0.48	0.13	0.32	0.77	0.51
2003	0.34	0.28	0.4	0.69	0.53

Արտահանման ու ներմուծման փոփոխությունը և հարաբերակցությունը 1993-2003թթ.

Նշանակումներ՝
DynEx-արտահանման փոփոխման դինամիկան
DynIm-ներմուծման փոփոխման դինամիկան
Ex/Im- արտահանում/ներմուծում հարաբերակցությունն ընդհանուր տնտես. համար
Ex/ImCIS- արտահանում/ներմուծում հարաբերակցությունն ԱՊՀ երկրների հետ
Ex/ImEU- արտահանում/ներմուծում հարաբերակցությունն ԵՄ երկրների հետ

Աղյուսակ 2.2-1

Ապր. խմբերի անվանումը	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Արժեքային մեծությունը(1%=)	**2.5**	**3.9**	**6.7**	**8.6**	**8.9**	**8.9**	**8.0**	**8.8**	**8.7**	**9.9**	**12.7**
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	9.0	11.7	9.4	7.9	6.5	5.2	5.1	3.8	3.5	2.8	2.5
Բուսական ծագման արտադրանք	17.9	16.3	12.7	13.2	11.8	13.1	9.0	11.2	9.7	7.5	5.9
Կենդանական և բուսակ. ծագման յուղեր և ճարպեր	0.9	3.0	3.7	3.1	2.7	2.1	2.1	1.9	2.2	1.9	1.8
Պատրաստի սննդի արտադրանք	6.6	8.2	7.6	9.9	9.6	12.2	9.1	7.9	8.8	8.0	7.3
Հանքահումքային արտադրանք	1.5	8.3	10.6	21.7	23.5	22.8	20.9	20.3	21.4	17.4	13.9
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբե-ության ճյուղերի արտադրանք	1.6	2.3	8.2	6.5	9.55	8.2	8.8	9.3	7.4	6.4	6.5
Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	0.25	0.25	0.6	1.5	2.6	3.0	2.8	2.6	2.6	2.2	2.2
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	0.7	0	0	0.1	0.2	0.1	0.2	0.2	0.7	0.2	0.1
Փայտ և փայտյա իրեր	0	0.1	0.1	0.1	0.3	0.4	0.5	0.6	0.6	0.7	0.7

[1] Աղյուսակներում բերված բոլոր տվյալները և հաշվարկները կատարվել են ՀՀ Ազգային վիճակագրության ծառայության կողմից հրատարակված նյութերի հիման վրա:

Աղյուսակ 2.2-1-ի շարունակությունը											
Թուղթ և թղթից իրեր	0.1	0.7	1.2	1.5	1.8	3.0	2.2	2.6	2.8	1.9	1.7
Մանածագործական իրեր	1.7	2.2	1.16	2.4	3.8	3.5	3.6	3.6	4.1	3.7	3.1
Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	0.1	0.1	0.1	0.6	1.1	0.6	0.7	0.6	0.7	0.4	0.3
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	0.1	0.2	0.4	1.0	1.8	1.7	1.5	1.3	1.8	1.9	1.7
Թանկարժեք և կիսա-թանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	10.5	8.1	9.2	15.1	5.3	5.0	10.3	12.8	12.2	21.6	25.9
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	4.4	0.9	2.3	1.2	2.8	2.2	2.8	2.8	10.1	5.6	6.0
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	1.6	2.0	7.4	9.4	11.4	7.2	9.7	13.3	4.1	10.5	10.4
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	0.7	0.5	0.9	1.4	1.7	5.2	3.9	2.6	3.0	4.0	5.8
Սարքեր եւ ապարատներ	0.3	0.7	0.8	1.3	1.6	1.4	1.5	1.4	3.1	2.1	2.6
Տարբեր արդյունաբե-րական ապրանքներ	1.8	1.7	0.5	1.6	1.7	2.9	1.5	1.3	1.3	1.1	1.2

Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի 1993 - 2003 թթ. (%)

Աղյուսակ 2.2-2

Ապրանքային խմբերի անվանումը	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Արժեքային մեծությունը(1%=)	**1.6**	**2.1**	**2.6**	**2.9**	**2.3**	**2.2**	**2.3**	**2.9**	**3.4**	**5.0**	**6.8**
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	0	0	0.1	0.05	0.13	0.05	0.3	0.2	0.3	0.5	0.8
Բուսական ծագման արտադրանք	0.2	0.3	0.3	0.3	1.2	0.6	0.6	0.6	0.4	0.3	0.5
Կենդանական և բուսակ. ծագման յուղ. և ճարպեր	0	0	0	0.04	0.2	0.04	0.0	0	0	0	0.02
Պատրաստի սննդի արտադրանք	6.7	6.0	4.7	4.05	10.6	7.7	6.9	9.1	14.0	10.8	10.6
Հանքահումքային արտադրանք	1.5	8.3	10.6	6.6	7.7	10.1	16.8	11.5	11.1	8.3	7.0
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբե-րության ճյուղերի արտադրանք	3.4	1.8	5.6	1.9	1.9	1.0	0.8	1.1	0.8	0.4	0.4
Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	2.8	3.7	3.9	2.8	3.9	3.7	3.9	3.1	3.8	1.3	0.7
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	0.4	0.4	0.5	0.5	1.0	0.5	0.4	0.5	0.6	0.1	0.1
Փայտ և փայտյա իրեր	0	0	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.3	0.3	0.3	0.2
Թուղթ և թղթից իրեր	0.1	0.2	0.3	0.2	0.5	0.02	0.5	0.2	0.4	0.1	0.1

Աղյուսակ 2.2-2-ի շարունակությունը											
Մանածագործական իրեր	9.5	7.3	5.6	3.3	4.5	6.2	5.9	4.4	7.1	5.7	4.5
Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	12.0	7.4	1.9	0.8	0.3	0.5	0.4	0.3	0.1	0.1	0
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	7.1	5.9	0.8	0.6	0.5	0.4	0.3	0.7	0.5	0.6	0.2
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	26.2	34.9	33.1	48.3	23.7	28.8	42.8	40.8	35.9	51.1	51.5
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	3.4	4.4	11.3	16.3	24.8	18.2	10.7	14.9	8.3	8.9	13.3
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	16.2	14.3	14.4	11.8	13.8	18.5	7.6	10.4	12.7	4.2	3.0
Ծերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	3.0	0.8	4.2	0.9	0.9	1.9	1.2	0.6	0.7	3.0	2.1
Խարքեր եւ ապարատներ	1.6	1.8	1.4	0.9	2.1	1.7	0.7	0.8	2.6	3.8	4.2
Կարբեր արդյունաբերական ապրանքներ	5.9	2.5	1.2	0.5	2.1	1.1	0.1	0.4	0.2	0.3	0.3

Արտահանման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի 1993 - 2003 թթ. (%)

Աղյուսակ 2.3-1

Երկրներ	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
ԱՊՀ երկրներ	**66.2**	**52.2**	**49.6**	**34.7**	**33.5**	**25.5**	**21.9**	**19.0**	**25.0**	**31**	**24.4**
Ռուսաստան	30.6	28.5	20.0	14.6	24.0	21.0	17.0	14.0	19.0	15.8	16.4
Թուրքմենստան	25.2	17.7	18.5	10.7	5.4	0.1	0.1	0.1	0.1	2.5	0.6
Վրաստան	7.7	4.5	9.2	5.0	4.0	2.0	3.0	2.0	2.0	3.0	3.0
Ուկրաինա	1.6	1.3	0.8	1.4	0	1.0	1.0	1.4	2.5	4.6	3.5
ԱՊՀ այլ երկրներ	1.0	0.1	1.2	1.1	0.7	0.8	0.2	0.4	0.4	0.7	1.0
ԵՄ երկրներ	**14.0**	**9.4**	**13.2**	**15.5**	**19.8**	**28.7**	**31.2**	**34.2**	**28.0**	**25.0**	**29.3**
Բելգիա	1.1	0.3	2.3	0.0	5.0	6.0	10.0	9.0	4.0	9.0	10.2
Ֆրանսիա	0.4	2.7	2.4	1.4	2.2	3.1	1.5	2.0	1.4	1.4	1.4
Գերմանիա	0.1	1.8	1.6	2.0	2.0	3.0	4.0	4.0	3.0	4.0	3.4
Իտալիա	12.2	2.3	3.3	3.0	4.0	3.0	2.0	2.0	3.0	3.0	3.1
Նիդեռլանդներ	0.1	2.1	0.9	0.7	1.7	1.1	0.6	1.4	0.8	1.0	0.9
Մեծ Բրիտանիա	0	0.12	0.32	0.8	1.0	7.0	8.0	6.0	10.0	2.0	4.5
Հունաստան	0.	0	0.8	0.6	1.1	1.0	1.6	6.1	1.5	1.2	2.4
ԵՄ այլ երկրներ	0.1	0.2	0.5	0.4	0.4	0.8	0.4	1.3	3.1	2.6	1.3
Շվեյցարիա	0.1	0.6	0.9	2.0	2.0	2.0	2.0	3.0	3.0	1.0	3.3
Իրան	6.2	10.8	13.4	17.0	8.0	6.0	9.0	9.0	9.0	6.0	5.3
Թուրքիա	0.	0.1	0.4	0.7	4.3	6.3	5.0	4.5	3.8	3.8	3.0
Իսրայել	-	-	-	-	-	-	-	-	-	8.0	9.7
ՄԱԷ	1.1	0.3	2.1	3.0	6.0	5.0	4.0	4.0	5.0	4.0	4.5
ԱՄՆ	10.6	24.4	16.9	11.0	11.0	9.0	10.0	11.0	9.0	5.0	8.0
Այլ երկրներ	1.8	2.2	3.6	15.9	9.1	13.0	15.0	15.4	15.7	14.1	12.6

Ներմուծման բաժինն արտաքին ապրանքաշրջանառության մեջ 1993-2003թթ.՝ ըստ երկրների (%)

Աղյուսակ 2.3-2

-	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Ընդամենը, այդ թվում	254.2	393.8	668.5	861.5	893.4	895.7	801.7	885.1	874.3	991.0	1269.4
ԱՊՀ երկրներ	168.2	205.6	328.5	283.4	300.1	221.4	175.6	168.3	215.1	305.7	309.7
ԵՄ երկրներ	35.7	37.1	88.8	132.7	174.6	259.4	253.7	302.6	252.2	255.7	372.4
Այլ երկրներ	50.3	151.1	251.2	445.4	418.7	414.9	372.4	414.2	407.0	429.6	587.3
ԵՄ տեսակ. կշիռը	14.0	9.4	13.3	15.4	19.5	28.9	31.6	34.2	28.8	25.8	29.3
ԱՊՀ տեսակ. կշիռը	66.1	52.2	49.1	32.9	33.6	24.7	21.9	19.0	24.6	30.8	24.3
Այլ երկրներ տես. կշիռը	19.8	38.4	37.6	51.7	46.9	46.3	46.4	46.8	46.5	43.3	46.2

ԱՊՀ և ԵՄ երկրներից ներմուծման ծավալները 1993-2003թթ. (մլն. դոլար)

Աղյուսակ 2.3-3

Երկրներ	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
ԱՊՀ երկրներ	**81.2**	**73.2**	**60.5**	**44.1**	**40.7**	**36.3**	**24.7**	**24.5**	**25.9**	**19.4**	**18.6**
Ռուսաստան	37.5	38.9	33.0	33.1	27.1	17.9	14.5	14.9	17.6	12.8	13.9
Թուրքմենստան	36.5	30.5	23.7	6.0	5.9	10.2	2.6	1.9	0.2	0.6	0.5
Վրաստան	2.0	1.3	1.0	0	4.6	4.6	4.8	5.2	3.6	3.3	2.3
Բելառուս	1.2	0.3	0.3	0.4	0	0.4	0.5	0.3	0.3	0.3	0.3
Ուկրաինա	2.6	1.7	1.7	1.7	0	1.8	0.9	1.1	3.2	1.6	1.1
Ղազախստան	0.9	0.4	0.6	0.4	0	0.2	0.2	0.4	0.3	0.2	0.2
ԱՊՀ այլ երկրներ	0.5	0.1	0.2	2.5	3.1	1.2	1.2	0.7	0.7	0.6	0.3
ԵՄ երկրներ	**10.6**	**16.4**	**18.3**	**21.3**	**28.5**	**33.6**	**45.6**	**35.9**	**25.8**	**38.9**	**38.1**
Բելգիա	9.5	12.0	11.7	15.4	20.2	22.3	36.1	25.2	13.6	18.2	18.3
Ֆրանսիա	0.7	0.2	0.1	0.1	0	0	0.2	0.2	0.2	0.2	0.3
Գերմանիա	0.2	3.0	3.8	1.3	4.0	4.2	4.4	4.3	3.2	5.5	6.5
Իտալիա	0	0	0	0	0.2	0.2	0.5	0.8	1.8	2.3	2.8
Նիդեռլանդներ	0.1	0.3	2.0	3.0	2.7	3.8	0.1	0.9	0.4	2.2	3.2
Մեծ Բրիտանիա	0	0.2	0.5	1.1	0.5	2.8	4.1	3.4	5.9	10.1	5.9
Հունաստան	0	0	0	0.2	0.1	0.1	0.1	1.0	0.6	0.2	0.8
ԵՄ այլ երկրներ	0.1	0.7	0.2	0.2	0.8	0.2	0.2	0.1	0.1	0.2	0.3
Շվեյցարիա	0.3	1.2	1.2	0.1	0.7	1.1	1.6	2.9	2.6	1.5	4.7
Իրան	3.5	6.8	13.3	15.1	18.3	14.2	14.7	9.3	9.5	6.2	3.3
Թուրքիա	0.2	0.1	0.1	2.1	3.1	1.3	0.5	0.5	0.3	0.2	0.2
ԱՄԷ	0.2	0	0.2	0.7	1.3	2.8	1.1	1.8	2.1	2.8	2.4
ԱՄՆ	0.2	0.2	0.2	1.5	3.1	5.6	7.0	12.7	15.2	9.2	8.3
Բուլղարիա	0.7	0	0	0.1	0	0.5	0.4	0.2	0	0	0.2
Այլ երկրներ	3.6	2.4	5.5	17.6	7.9	6.1	5.2	12.9	19.4	22.6	24.8

Արտահանման բաժինն արտաքին ապրանքաշրջանառության մեջ 1993-2003թթ.՝ ըստ երկրների *(%)*

Աղյուսակ 2.3-4

-	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Ընդհանուր	156.2	215.5	263.4	290.3	232.6	223.4	233.5	297.5	342.8	507.1	678.1
ԱՊՀ երկրներ	126.8	157.9	159.4	128.1	94.8	81.1	57.8	72.8	89.1	98.2	126.7
ԵՄ երկրներ	16.5	35.3	48.3	61.9	66.4	75.1	106.6	107.0	88.6	197.6	258.6
Այլ երկրներ	12.9	22.3	55.7	100.3	71.4	67.2	69.1	117.7	165.1	211.3	292.7
ԵՄ տեսակ. կշիռը	10.6	16.4	18.3	21.3	28.5	33.6	45.6	35.9	25.8	38.9	38.1
ԱՊՀ տեսակ. կշիռը	81.2	73.2	60.5	44.1	40.7	36.3	24.7	24.5	25.9	19.4	18.6
Այլ երկրներ տես. կշիռը	8.2	10.3	21.1	34.5	30.7	30.1	29.6	39.6	48.2	41.7	43.2

ԱՊՀ և ԵՄ երկրներ արտահանման ծավալները 1993-2003թթ. (մլն. դոլար)

Աղյուսակ 2.3-5

Իրան	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Ընդ. ապրանքաշրջ.	124.8	193.7	131.3	95.5	112.7	110.6	110.6	93.7	89.0
Արտահանում	35	43.9	42.6	31.7	34.2	27.7	32.5	31.1	22.2
Ներմուծում	89.8	149.8	88.7	63.8	78.5	82.9	78.1	62.4	66.8
Տեսակ. կշիռը	13.3	16.8	11.6	8.5	10.9	9.3	9.1	6.2	4.6
Վրաստան	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Ընդ. ապրանքաշրջ.	64.5	54	49.1	37	38.1	34.9	30.8	48.7	54.1
Արտահանում	2.7	2.8	10.7	10.2	11.2	15.4	12.4	16.9	15.9
Ներմուծում	61.8	51.2	38.4	26.8	26.9	19.5	18.4	31.8	38.2
Տեսակ. կշիռը	6.9	4.7	4.4	3.3	3.7	2.9	2.5	3.2	2.8
Թուրքիա	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Ընդ. ապրանքաշրջ.	5.2	12.2	45.5	31.5	41.2	41	34.8	38.8	39.1
Արտահանում	2.6	6.0	7.1	2.9	1.1	1.5	1.1	1.4	1.0
Ներմուծում	2.6	6.2	38.4	28.6	40.1	39.5	33.7	37.9	38.1
Տեսակ. կշիռը	0.5	1.0	4.0	2.8	3.9	3.4	2.8	2.5	2.0

Արտաքին առևտրատնտեսական հարաբերություններն Իրանի, Վրաստանի և Թուրքիայի հետ 1995-2003թթ. (մլն. դոլար)

Աղյուսակ 2.3-6

Լուսաստան	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Ընդ. ապրանքաշրջ.	222	221.5	257.7	222.5	172	176.6	230.8	261.2	302.2
Արտահանում	86.9	96.1	63.0	39.9	33.8	44.5	60.5	64.8	94.5
Ներմուծում	135.1	125.4	196.7	182.6	138.2	132.1	170.3	196.4	207.7
Տեսակ. կշիռը	23.8	19.2	22.8	19.8	16.6	14.9	18.9	17.4	15.6
Ուկրաինա	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Ընդ. ապրանքաշրջ.	9.9	16.7	15.0	12.8	10.0	15.6	33.0	54.0	51.3
Արտահանում	4.5	4.8	3.5	3.9	2.1	3.3	10.9	8.1	7.3
Ներմուծում	5.4	11.9	11.5	8.9	7.9	12.3	22.1	45.9	44.0
Տեսակ. կշիռը	1.1	1.4	1.3	1.1	0.9	1.3	2.7	3.6	2.6
Բելառուս	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Ընդ. ապրանքաշրջ.	2.7	3.4	4.4	2.5	1.7	1.5	2.3	3.5	7.1
Արտահանում	0.8	1.2	1.1	0.8	1.1	0.9	1.2	1.5	2.0
Ներմուծում	1.9	2.2	3.3	1.7	0.6	0.6	1.1	2.0	5.1
Տեսակ. կշիռը	0.2	0.3	0.4	0.2	0.1	0.1	0.2	0.2	0.4

Արտաքին առևտրատնտեսական հարաբերությունները Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի հետ 1995-2003թթ. (մլն. դոլար)

Արդյունաբերության ոլորտների տնտեսական ցուցանիշներ (Աղյուսակներ 3.1-1,….3.1-5)

Աղյուսակ 3.1-1

-	1998	1999	2000	2001	2002
Կազմ. թիվը	253	249	256	268	269
Նոր կազմ. թիվը	-	-4	7	12	1
Արտ. ծավալը (մլրդ. դրամ)	12.3	8.8	11.1	14.2	14.5
Անձնակազմ (հազ. մարդ)	63.6	54.1	44.9	35.0	27.2

Մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերություն

Աղյուսակ 3.1-2

-	1998	1999	2000	2001	2002
Կազմ. թիվը	43	43	43	86	92
Նոր կազմ. թիվը	-	0	0	43	6
Արտ. ծավալը (մլրդ. դրամ)	6.7	8.1	10.3	8.6	7.4
Անձնակազմ (հազ. մարդ)	7.9	9.3	7.7	6.4	5.4

Քիմիական և նավթաքիմիական արդյունաբերություն

Աղյուսակ 3.1-3

-	1998	1999	2000	2001	2002
Կազմ. թիվը	101	123	128	160	171
Նոր կազմ. թիվը	-	22	5	32	11
Արտ. ծավալը (մլրդ. դրամ)	9.1	9.1	6.6	7.5	10.2
Անձնակազմ (հազ. մարդ)	6.8	6.9	6.1	5.2	4.5

Շինանյութերի արդյունաբերություն

Աղյուսակ 3.1-4

-	1998	1999	2000	2001	2002
Կազմ. թիվը	153	159	159	177	137
Նոր կազմ. թիվը	-	6	0	18	-40
Արտ. ծավալը (մլրդ. դրամ)	4.5	3.8	3.9	4.2	4.2
Անձակազմ (հազ. մարդ)	27.8	22.8	16.4	14.7	12.1

Թեթև արդյունաբերություն

Աղյուսակ 3.1-5

-	1998	1999	2000	2001	2002
Կազմ. թիվը	259	329	359	593	670
Նոր կազմ. թիվը	-	70	30	234	77
Արտ. ծավալը (մլրդ. դրամ)	100.1	111.5	115.8	114.9	126.7
Անձնակազմ (հազ. մարդ)	16.0	14.3	13.9	12.1	10.8

Սննդի արդյունաբերություն

Աղյուսակ 3.2-1

-	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
ՏԲԱ	0.37	0.64	0.78	0.73	0.68	0.57	0.58	0.55	0.61	0.67
ԱՄՀ[1]	0.12	0.14	0.21	0.20	0.18	0.13	0.18	0.19	0.24	0.25
ՆՄՀ[2]	0.25	0.50	0.57	0.53	0.50	0.44	0.40	0.36	0.37	0.42

Տնտեսության բացության աստիճանը[3] (%)

Նշանակումներ՝
ՏԲԱ-տնտեսության բացության աստիճան
ԱՄՀ-արտահանման միջին հակվածություն
ՆՄՀ-ներմուծման միջին հակվածություն

Աղյուսակ 3.2-2

-	L	DynLab	DynCap	DynK/L
1995	1581,9	-	-	0.04
1996	1583,5	0.001	0.1	0.1
1997	1538,3	-0.03	-0.01	0.02
1998	1476,4	-0.04	0.01	0.06
1999	1462,4	-0.009	0.07	0.08
2000	1447,2	-0.01	0.33	0.04
2001	1426,8	-0.01	0.008	0.1
2002	1415,6	-0.006	0.06	0.07
2003	1236,4	-0.1	0.08	0.1

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Նշանակումներ՝
L- աշխատուժի քանակը (հազ. մարդ)
DynLab- աշխատուժի փոփոխության դինամիկա
DynCap- կապիտալի փոփոխության դինամիկա
DynK/L- կապիտալ-աշխատուժ հարաբերակցության փոփոխության դինամիկա

[1] Հաշվարկվել է արտահանումը հարաբերելով ՀՆԱ-ին՝ (Ex/GDP)x100
[2] Հաշվարկվել է ներմուծումը հարաբերելով ՀՆԱ-ին՝ (Im/GDP)x100
[3] ՀՀ տնտեսության բացության աստիճանը հաշվարկվել է ընդհանուր արտաքին ապրանքաշրջանառությունը հարաբերելով ՀՆԱ-ին՝ ((Im+Ex)/GDP)x100

Գրականության ցանկ

Օրենսդրական ակտեր

1. ՀՀ Մաքսային օրենսգիրք
2. ՀՀ Օրենքը Օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին
3. ՀՀ Օրենքը Շահութահարկի մասին
4. ՀՀ Օրենքը Եկամտահարկի մասին

Վիճակագրական նյութեր

1. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003
2. «ՀՀ արտաքին առևտուրը», ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1995-2003թթ. հրատարակումներ
3. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», ՀՀ Ազգային վիճակագրության ծառայություն, Երևան, 1995-2003թթ. հրատարակումներ
4. «Հայաստան. Տնտեսական միտումներ», Երևան, 1998-2002թթ. հրատարակումներ
5. Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N1(21), Երևան 2003
6. Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա , N 6(26), Երևան 2003

Հետազոտություններ և մենագրություններ

1. Ա. Դարբինյան «ՀՀ արտաքին առևտրի քաղաքականությունը և դրա հեռանկարները», էկոնոմիկա, N 5, Երևան 2000
2. Ա. Դարբինյան «ԱՀԿ անդամակցությունը որպես համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրման կարևոր նախադրյալ», էկոնոմիկա, N2, Երևան 2000
3. Ա. Մարկոսյան «Օտարերկրյա ուղղակի ներդրումները ՀՀ տնտեսությունում», Բանբեր, ԵՊՀ, Երևան 1999
4. Գ. Կիրակոսյան «Ներդրումները և տնտեսական առաջընթացը», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N11, Երևան 2002
5. Գ.Կիրակոսյան «Միջազգային տնտեսական զարգացման ներկա առանձնահատկությունները», էկոնոմիկա, N5, Երևան 2000
6. Գ. Ե. Կիրակոսյան «Անցումային տնտեսության վերափոխումները: Տեսության հարցեր», Տնտեսագետ, Երևան 2002
7. Թ. Թորոսյան «Հայաստան Թուրքիա: Առևտրատնտեսական կապեր», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N 6-7, Երևան 2002

8. Թ. Թորոսյան «ՀՀ արտաքին առևտրային համակարգի վերափոխումները», էկոնոմիկա, N 5, Երևան 2000

9. Թ. Թորոսյան «ԱՀԿ անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա», Երևան 2004

10. Թ. Թորոսյան «Արտահանման և ներմուծման հարաբերակցության կատարելագործումը ՀՀ-ում», էկոնոմիկա, N 1-3, Երևան 1998

11. Թ. Թորոսյան «Հայաստանի արտաքին տնտեսական կապերի զարգացումը», էկոնոմիկա, N 9-10, Երևան 1998

12. Հ. Մանասյան «Հայաստանի տնտեսական աճի բաղադրիչները», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N 11, Երևան 2002

13. Մ. Քոթանյան «Շուկայական էկոնոմիկա», Երևան 1988

14. Յ. Սուվարյան «ՀՀ տնտեսության պետական կառավարման արդյունավետության միտումները և աճի գերակայությունը», էկոնոմիկա, N5, Երևան 2000

15. Ս. Դավոյան, Ա. Մարկոսյան, Հ. Սարգսյան «Վերափոխումները անցումային երկրներում», Տիգրան Մեծ, Երևան 2003

16. Վ. Խոջաբեկյան «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը: XIX-XX դարերում, XXI դարի շեմին», Գիտություն, Երևան 2002

17. Վ. Խոջաբեկյան «Արտաքին աշխարհի հետ ՀՀ գյուղատնտեսության տնտեսական ինտեգրացիայի կառավարում», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N 12, Երևան 2002

18. Վ. Պետրոսյան «Զարգացման տնտեսական գերակայությունները», էկոնոմիկա, N5, Երևան 2000

19. Adelman Irma and Cynthia Taft Morris " Society, Politics and Economic Development- A Quantitative Approach" Hopkins Press, 1967

20. Amsden A. "Asia's Next Giant", Oxford University Press, Oxford 1989

21. Amsden A. and Hikino T. "The Bark is Worse than the Bite: New WTO Law and Late Industrialisation", Annals of the American Academy of Political & Social Sciences, N 570, pp. 104-14, 2000

22. Balassa B. "The Structure of Protection in Developing Countries", Johns Hopkins Press, Baltimore 1971

23. Balasubramanyam V.N., M.A. Salisu and D. Sapsford "Foreign direct investment and growth in EP and IS countries", Economic Journal, N 106 (434), pp. 92-105, 1996

24. Bernard A. and Jensen J. B. "Exporting and productivity", Social Science Research Network Electronic Library, 1999

25. Bhagwati J.N. and Krueger A.O. "Exchange Control, Liberalization and Economic Development", American Economic Review, N 85, 1973

26. Bhagwati J.N. "Free Trade: old and new challenges", Economic Journal, N 104(423), pp. 231-246, 1994

27. Bhagwati J.N. “The theory of immiserizing growth; further applications”, in M. Connolly and A. Swoboda (eds.) “International Trade and Money”, University of Toronto Press, pp. 45-54, Toronto 1973

28. Blomstrom M., A. Kokko and M. Zejan “Foreign Direct Investment : Firm and Host Country Strategies”, St. Martin, New York 2000

29. Borensztein E., J.D. Gregorio and J.W. Lee “How does foreign direct investment affect economic growth?”, Journal of International Economics, N 45, pp. 115-135, 1998

30. Brecher R.A. and Carlos F. Daiz Alejandro “Tariffs, foreign capital and immiserizing growth”, Journal of International Economics, N 7(3), pp. 317-332, 1977

31. Bruton H. “A Reconsideration of Import Substitution”, Journal of Economic Literature, N 36, 1998

32. Bruton H. ”Import Substitution”, in Hollis Chenery and T.N. Srinivasan (eds.) “Handbook of Development Economics”, Vol II, Elsevier Science B.V., Amsterdam 1989

33. Cline R. “Trade Policy in the 1980s.”, Institute of International Economics, Washington D.C. 1983

34. Corden W. M. “Trade Policy and Economic Welfare”, Clarendon Press, Oxford 1974

35. Dunning J.H. “A Business Analytic Approach to Governments and Globalisation”, In Dunning, J.H. (eds.) “Governments, Globalisation and International Business”, Oxford University Press, pp. 114-131, Oxford 1997

36. Edwards S. “Trade and growth in developing countries”, Journal of Economic Literature, N 31(3), pp. 1358-1393, 1993

37. Edwards S. “Openness, productivity, and growth: what do we really know?”, Economic Journal, N 108, pp. 383-398, 1998

38. Frankel J. and Romer D. “Does trade cause growth?”, American EconomicReview, N 89(3), pp. 379-400, 1999

39. Grabowski R. "Import substitution, export promotion and the state in economic development", The Journal of Developing Areas, N 28 (4), pp. 535-553, 1994

40. Greenaway D., and Num C.H. "Industrialisation and macroeconomic performance in developing countries under alternative trade strategies", Kyklos, N 41, pp. 419-435, 1988

41. Grossman G. and E. Helpman. “Innovation and Growth in the Global Economy”, MIT Press, Cambridge 1991

42. Gunnar Myrdal “Economic Theory and Underdeveloped Regions”, Duckworth, London 1957

43. Helleiner G. K. "Trade strategy in medium-term adjustment", World Development, N 18 (6), pp. 879-897, 1990

44. Hirschman A. O. “The Political Economy of Import Substituting Industrialization in Latin America”, Quarterly Journal of Economics , N 82(1), pp. 1–32, 1967

45. Khan M. H. “State Failure in Weak States”, A Critique of New Institutionalist Explanations, in J. Harriss, J. Hunter, and C. Lewis(eds.) “The new Institutional Economics and Third World Development”, Routledge, London 1995

46. Kirkpatrick C. and Weiss J. “Industrial and Trade Policy Reform in Developing Countries”, Manchester University Press, pp.1-12, 1992

47. Kirkpatrick C. and Maharaj J. "The Effect of Trade Liberalization on industrial Sector Productivity Performance in Developing Countries." in Marc Fontain (eds.) “Foreign Trade Reforms and Development Strategy”, Routledge, London 1992

48. Kruger A.O. “Foreign Trade Regimes and Economic Development : Liberalization Attempts and Consequences” Ballinger Publish Co., Cambridge 1978

49. Kruger A.O. “Liberalisation Attempts and Consequences”, Ballinger, Cambridge 1978

50. Krueger A.O. “Trade policies in developing countries”, Chapter 11 in Jones, R. W. and Kenen, P. (eds.) “Handbook of International Economics”, International Trade, N 1, Amsterdam 1984

51. Krueger A.O. “Trade policy as an input to development”. American Economic Review, N 76, pp. 288–290, 1980

52. Krugman P.R. "Does the New Trade Theory Require a Trade Policy?", World Economy, N 15(4), pp. 423-441, 1992

53. Krugman P. R. “Import protection as export promotion: International competition in the presence of oligopoly and economies of scale”, in Kierzkowki (eds.) “ Monopolistic Competition and International Trade”, chap. 11, Clarendon Press, Oxford 1984

54. Lall S. “Learning from the Asian Tigers”, Macmillan, Basingstoke 1996

55. Lardy N. “Foreign Trade and Economic Reform in China, 1978-1990”, Cambridge University Press, Cambridge 1991

56. Lewis W. Arthur “The Theory of Economic Growth”, George Allen and Unwin Press, London 1955

57. Lindert P. H. and Pugel T. A. ” International Economics”, Irwin 1996

58. Lipsey R.E. ”Inward FDI and economic growth in developing countries”, Transnational Corporations, N9(1), pp. 67-95, 2000

59. Lipsey R.E. ”Foreign direct investment and the operations of multinational firms: concepts, history and data”, Cambridge 2001

60. List F. “The National System of Political Economy”, Translated by Matile GA. Philadelphia, J.B. Lippincott and Co. 1856

61. Little I., Scitovsky T. and Scott M. ” Industry and Trade in Some Developing Countries”, Oxford University Press, Oxford 1970

62. Michalopoulos C. and Tarr D. “Trade Performance and Policy in the NewIndependent States, Directions in Development”, The World Bank, Washington D.C. 1996

63. Michaely M. "The Timing and Sequencing of a Trade Liberalisation policy", in Armeane M. Choksi and Demetris Papageorgiou (eds.) “Economic Liberalisation in Developing Countries”, Basil Blackwell, pp.42-59, Oxford 1986

64. Myint H. “The Classical Theory of International Trade and Underdeveloped Countries”, Economic Journal, N 68, 1958

65. Narula R. and Dunning J.H. “Industrial Development, Globalisation and Multinational Enterprises: New Realities for Developing Countries”, Oxford Development Studies, N 28(2), pp. 141-67, 2000

66. Nelson R. and Pack H. “The Asian Growth Miracle and Modern Growth Theory”, Columbia University 1995

67. Nurkse Ragnar ”Problems of Capital Formation in Underdeveloped Countries and Patterns of Trade and Development”, Oxford Press, New York 1952

68. Pack H. "Industrialization and Trade", in H.B.Chenery and T.N.Srinivasan, (eds) “Handbook of Development Economics”, N1, Amsterdam 1988

69. Panic M. “National Management of International Economy”, Macmillan Press, London 1988

70. Prebisch Raul. “The Economic Development of Latin America and Its Principal Problems”, United Nations, Economic Commission for Latiin America, New York 1950

71. Prebisch R. "Five Stages in My Thinking on Development", in G.M. Meier and D. Seers (eds.) “Pioneers in Development”, Oxford University Press, pp. 175-91, New York 1984

72. Rosenstein Rodan “Problems of Industrialization of Eastern and South Eastern Europe”, Economic Journal, N 53, pp.202-211, 1943

73. Samuelson P.A. “Welfare economies and international trade”, American Economic Review, pp. 261–266, 1938

74. Singer Hans W. “The Distribution of Gains be-tween Investing and Borrowing Countries”, American Economic Review, N 40(2), pp. 473–85, 1950

75. Smith K. “Economic Infrastructures and Innovation Systems”, in Edquist, C. (eds.) “Systems of Innovation:Technologies, Institutions and Organisations”, London 1997

76. Sodersten B. and Reed G. “International Economics”, 3 rd Edition, Macmillan, London 1994

77. Stopford J. “Implications for national governments”, in J.H. Dunning (eds.) “Governments, globalisation and international business”, Oxford University Press, pp 457-480, Oxford 1997

78. Weiss J. “Industry in Developing Countries: Theory, Policy and Evidence”, Routledge, London 1988

79. Young A., “Increasing return and economic progress”, Economic Journal, N 38, 1928

80. Wade Robert “Governing the Market: Economic Theory and the Role of Government in EastAsian Industrialization”, Princeton University Press, Princeton N.J. 1990